

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
*ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ*  
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА  
*ФИЛОЛОГИЯ*  
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY  
*PHILOLOGY*

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
*ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ*  
*SOCIAL SCIENCES*

№ 1 (19)

ԵՐԵՎԱՆ - 2016

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ»  
«BANBER YEREVANI HAMALSARANI. PHILOLOGY»  
«BANBER YEREVANI HAMALSARANI. PHILOLOGY»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

*Խմբագրական խորհուրդ.*

Ասատրյան Գ. Ս., Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*),  
Ավետիսյան Յու. Ս., Բրուսյան Լ. Գ., Գաբրիելյան Յու. Ս., Գասպարյան Ս. Զ.,  
Գոնչար Ն. Ա. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Դիրբարյան Ն. Հ., Հովակիմյան Ա. Է.  
(*պատասխ. քարտուղար*), Հովսեփյան Լ. Ս. (*պատասխ. խմբագիր*), Պետրոսյան Դ. Վ.,  
Սաֆարյան Վ. Հ., Մխննյան Ա. Հ.

Главный редактор: Мирзоян Г. К.

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), Аветисян Ю. С., Асатрян Г. С.,  
Брутян Л. Г., Габриелян Ю. М., Гаспарян С. Х., Гончар Н. А. (*зам. главного редактора*),  
Дилбарян Н. А., Овакимян А. Э. (*ответ. секретарь*), Овсепян Л. С. (*ответ. редактор*),  
Петросян Д. В., Сафарян В. А., Симонян А. Г.

Editor-in-chief: Mirzoyan H. Gh.

*Editorial Board:*

Asatryan G. S., Avetisyan L. V. (*Deputy editor-in-chief*), Avetisyan Y. S., Brutyan L. G.,  
Dilbaryan N. H., Gabrielyan Y. M., Gasparyan S. Q., Gonchar N. A. (*Deputy editor-in-chief*),  
Hovakimyan A. E. (*Executive Secretary*), Hovsepyan L. S. (*Managing Editor*),  
Petrosyan D. V., Safaryan V. H., Simonyan A. H.

*Համարում հիմնականում զետեղված են  
ակադեմիկոս **Գևորգ Բեգլարի Զահուկյանի**  
ծննդյան 100-ամյակի առթիվ ԵՊՀ հայ  
բանասիրության ֆակուլտետում կայացած  
գիտաժողովի զեկուցումներից*

## **ԳԵՎՈՐԳ ԶԱՀՈՒԿՅԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ**

### **ՄԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ**

Դժվար է նշել հայերենագիտության որևէ բնագավառ, որտեղ Գ. Զահուկյանը չունենա իր նշանակալից ներդրումը: Բայց նրա գիտական ժառանգության մեջ գերակշռում են հատկապես հայերենի պատմահամեմատական քննությանը նվիրված աշխատությունները, որոնցով նա միջազգային ճանաչման է արժանացել որպես հայագետ-համեմատաբան: Սույն հոդվածում փորձ է արվում հիմնական գծերով բնութագրել Գ. Զահուկյանի համեմատաբանական ժառանգությունը և լուսաբանել նրա ներդրումը հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության մեջ:

Հայերենի համեմատական քննությանը նվիրված աշխատություններում հետազոտողները սովորաբար տարաժամանակյա փոփոխությունները նկարագրում են ամենայն մանրամասնությամբ, բայց հիմնականում առանց տեսական ընդհանրացումների: Իհարկե, հայերենի այս կամ այն երևույթը դիտարկելիս Ա. Մեյեի կողմից հաճախ, իսկ Հ. Աճառյանի կողմից գրեթե բոլոր դեպքերում («Լիակատար քերականություն հայոց լեզվի. համեմատությամբ 562 լեզուների») աշխատությունում) տիպաբանական զուգահեռներ են նշվում (օրինակ՝ հայերենում հ.-ե. բառակզբային \*թ-ի արտացոլման կապակցությամբ<sup>1</sup>), կամ առանձին հնչյունական զարգացումները բացատրվում են ընդհանուր հնչյունաբանության տեսանկյունից (օրինակ՝ միջձայնավորական դիրքում շնչեղ ձայնեղ պայթականների արտասանական թուլացումը<sup>2</sup>), բայց դիտարկվող հնչյունական և քերականական զարգացումների հիման վրա հայերենի համար ընդհանուր օրինաչափություններ չեն սահմանվում: Թեև Ռ. Գոդելի աշխատություններում լեզվական երևույթները ընդհանրացված բնութագրելու որոշակի միտում է նկատվում<sup>3</sup>, այդուհանդերձ նա նույնպես հնչյունական և քերականական

<sup>1</sup> Տե՛ս **A. Meillet**, *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique*, Vienne, 1936, էջ 29-30:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 26-27:

<sup>3</sup> Տե՛ս **R. Godel**, *An Introduction to the Study of Classical Armenian*, Wiesbaden, 1975, էջ 73՝ § 4. 332, էջ 86՝ § 4. 43 և այլն:

տարածամանակյա փոփոխությունները դիտարկելիս մեծ մասամբ տեսական ընդհանրացումներ չի կատարում: Մինչդեռ Գ. Ջահուկյանը հետևողականորեն կիրառվում է ընդհանրացման սկզբունքը. նա ոչ միայն հանգամանորեն և համակարգային մոտեցմամբ նկարագրում է տարածամանակյա փոփոխությունները, այլև բնութագրում է դրանց բնորոշ ընդհանուր գործընթացները: Օրինակ՝ հայերենի բաղաձայնական համակարգը, ըստ Գ. Ջահուկյանի, ձևավորվել է հնչյունական չորս հիմնական գործընթացների (պայթականների տեղաշարժի, քմայնացման, շփականների փոփոխության և բաղաձայնական կապակցությունների փոփոխության) հետևանքով<sup>4</sup>, որոնց համար նա սահմանում է մի շարք ընդհանուր օրինաչափություններ. ա) պայթականների առաջին քմայնացման հետևանքով առաջացել են սուլական հպաշփականներ և շփականներ, իսկ երկրորդ քմայնացման հետևանքով՝ շչական հպաշփականներ, բ) շփականների փոփոխությունը բնութագրվել է արտասանական թուլացմամբ կամ ուժեղացմամբ և հետնայնացմամբ, գ) այն բաղաձայնական կապակցությունները, որոնցում մի բաղաձայնից մյուսին անցումը չի բնութագրվում արտասանական լարվածության աճով, այսինքն՝ առկա չէ *շփական կամ ձայնորդ + պայթական* հաջորդականություն, հայերենում վերածվել են նշված տիպի բաղաձայնական կապակցությունների կամ պարզեցման են ենթարկվել և այլն<sup>5</sup>:

Ի դեպ՝ թեև հայերենի հետագա համեմատաբանական ուսումնասիրություններում հետազոտողները հաճախ շարունակում են առաջնորդվել ավանդական-նկարագրական սկզբունքով<sup>6</sup>, բայց Գ. Ջահուկյանի մեթոդաբանական մոտեցումը այս կամ այն չափով կիսում են որոշ հայագետ-համեմատաբաններ. օրինակ՝ Շ. Լամբերտրի հայերենում հնդեվրոպական բաղաձայնների արտացոլումները Գ. Ջահուկյանի հետևողությամբ դիտարկում է ըստ պայթականների տեղաշարժի, քմայնացման և բաղաձայնական կապակցությունների պարզեցման հնչյունական գործընթացների<sup>7</sup>:

Գ. Ջահուկյանը նաև մի շարք քերականական օրինաչափություններ է սահմանում, որոնցից հատկապես ուշագրավ են հին հայերենում բառերի՝ ըստ հոլովման տիպերի բաշխման օրինաչափությունները: Սովորաբար հետազոտողները գտնում են, որ հին հայերենում բառի

<sup>4</sup> Տե՛ս Գ. Գ. Ժաուկյան Գ. Բ. Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, էջ 81 և հջ., **Խոյնի** Общее и армянское языкознание. Ер., 1978, էջ 119-140, **Խոյնի** Сравнительная грамматика армянского языка. Ер., 1982, էջ 15, 38, 45-76:

<sup>5</sup> Տե՛ս Գ. Գ. Ժաուկյան Գ. Բ. Общее и армянское..., էջ 119-140, **Խոյնի** Сравнительная грамматика..., էջ 15, 38, 45-76:

<sup>6</sup> Տե՛ս, օրինակ, R. Schmitt, Grammatik des Klassisch-Armenischen mit sprachvergleichenden Erläuterungen, 2., durchgesehene Auflage, Innsbruck, 2007, էջ 56-79 և այլն:

<sup>7</sup> Տե՛ս Ch. de Lamberterie, Introduction à l'arménien classique // Actes des sessions de linguistique et de littérature, 10, Paris, 1992, էջ 251 և հջ.:

ուղիղ ձևի հիման վրա անհնար է որոշել, թե տվյալ բառը ո՛ր հոլովման է պատկանում<sup>8</sup>, կամ դա հնարավոր են համարում միայն որոշ դեպքերում<sup>9</sup>: Մինչդեռ Գ. Ջահուկյանը ցույց է տալիս, որ բառերի բաշխումն ըստ հոլովման տիպերի պայմանավորված է մասամբ նրանց արտաքին-հնչյունական (վանկաքանակության և առնմանական ու տարնմանական հնչազդեցության օրենքներ), մասամբ իմաստային և քերականական (բառերի իմաստային և քերականական խմբավորման օրենքներ) հատկանիշներով, մասամբ էլ հնչյունական և իմաստային օրինաչափությունների խաչաձևման արդյունք է<sup>10</sup>: Բացի դրանից, նա առաջին անգամ հին հայերենի հոլովման համակարգում առանձնացնում է տարահիմք (ձայնավորա-ձայնորդահիմք) հոլովումներ<sup>11</sup>, որոնք մինչ այդ կա՛մ ներառվում էին ձայնորդահանգ հիմքերի մեջ, կա՛մ դիտվում էին որպես անկանոն հոլովումներ:

Հայերենի համեմատական քերականության բնագավառում Գ. Ջահուկյանի բերած մեթոդաբանական մյուս կարևոր նորությունը նյութի մատուցման եղանակն է: Ի տարբերություն այլ հետազոտողների, որոնք սովորաբար նկարագրում են հին հայերենի լեզվական վիճակը, այնուհետև բացատրում հայերենի լեզվական երևույթների ծագումը, Գ. Ջահուկյանը նախ համաժամանակյա տեսանկյունից ըստ բաժինների դիտարկում է թե՛ հնդեվրոպական, թե՛ հինհայերենյան լեզվական վիճակները, կատարում դրանց զուգադրական քննություն, իսկ հետո հայերենի համապատասխան երևույթները լուսաբանում պատմահամեմատական տեսանկյունից: Գիտնականի կարծիքով՝ նյութի մատուցման նման սկզբունքը ընթերցողին հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու ինչպես ամբողջական համակարգի, այնպես էլ նրա առանձին մասերի վերաբերյալ<sup>12</sup>: Մեթոդաբանական և տեսական կարևոր նշանակություն ունեն նաև Գ. Ջահուկյանի առաջ քաշած վերականգնման սկզբունքները<sup>13</sup>, որոնք ապահովում են վերականգնման ստույգությունն ու արդյունավետությունը:

Հայոց լեզվի պատմության հատկապես նախագրային ժամանակաշրջանի գիտական շրջանաբաժանման պատիվը նույնպես պատկանում է Գ. Ջահուկյանին: Մինչ այդ տարբեր հետազոտողներ բացարձակ և հարաբերական ժամանակագրության մեթոդների կիրառմամբ փորձել էին պարզել հայերենի միայն որոշ տարածամանակյա փոփո-

<sup>8</sup> Տե՛ս **A. Meillet**, նշվ. աշխ., էջ 64, **R. Schmitt**, նշվ. աշխ., էջ 92:

<sup>9</sup> Տե՛ս **R. Godel**, նշվ. աշխ., էջ 29:

<sup>10</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հին հայերենի հոլովման սխառնուրդ և նրա ծագումը, Եր., 1959, էջ 115-122, **նույնի**՝ Общее и армянское..., էջ 160-162:

<sup>11</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հին հայերենի հոլովման..., էջ 105-109, **նույնի**՝ Общее и армянское..., էջ 157-160:

<sup>12</sup> Տե՛ս **Джаукян Г. Б.** Сравнительная грамматика..., էջ 13-16:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 7-13:

խությունների ժամանակը կամ առանձին փոփոխությունների հաջորդականությունը միմյանց նկատմամբ<sup>14</sup>: Հայերենի նախագրային ժամանակաշրջանի ողջ պատմությունն ըստ որոշակի շրջանների ու ենթաշրջանների առաջին անգամ ներկայացվել է Գ. Ջահուկյանի կողմից: Լայնորեն կիրառելով լեզվաբանական ժամանակագրության և հետադարձ հաշվարկման մեթոդները, և ստացված արդյունքները զուգադրելով արտաքին փաստերի հետ՝ նա փորձում է համակարգային ձևով վեր հանել առանձնացվող լեզվական շրջանների ու ենթաշրջանների հնարավորինս ամբողջական պատկերը և ցույց տալ դրանց հիմնական առանձնահատկությունները, այդ թվում՝ բարբառային տարբերակները<sup>15</sup>: Բացի դրանից, վերանայում է հայոց լեզվի գրային պատմության ավանդական շրջանաբաժանումը, կատարում ճշգրտումներ ու լրացումներ<sup>16</sup>:

Մեծ է Գ. Ջահուկյանի ներդրումը նաև հայերենի տարածքային կապերի ուսումնասիրության, հնդեվրոպական բարբառային նախավիճակում հայերենի բարբառային դիրքի պարզաբանման հարցում: Քննության ենթարկելով հայերենի տարածքային բնութագրմանը նվիրված աշխատությունները՝ նա նշում է, որ հնդեվրոպաբան-հայագետների կողմից «հաճախ ոչ թե նկատի է առնվում լեզուների և զուգաբանությունների ողջ կոմպլեքսը, այլ քննվում են միայն որոշ լեզուներ ու լեզվատարածքներ, միայն հնչյունա-քերականական կամ միայն բառային որոշ թվով (ոչ լրիվ) զուգաբանություններ»<sup>17</sup>: Ուստի Գ. Ջահուկյանը հայերենի տարածքային ամբողջական բնութագիրը տալու նպատակով, մի կողմից, դիտարկում է հայերենի և հնդեվրոպական բոլոր լեզուների փոխհարաբերությունը, մյուս կողմից՝ ընդգրկում է հնարավորինս լրիվ զուգաբանությունները (հնչյունական, քերականական և բառային): Միննույն ժամանակ նա փորձում է տարբերակել միասնության շրջանի համար ենթադրվող զուգաբանությունները շփման հետևանքով և զուգահեռ զարգացմամբ առաջացած ուշ նորագոյացություններից<sup>18</sup>: Հատկապես ուշագրավ է հայասերենի լեզվական պատկանելության և հայասերենի ու հայերենի փոխհարաբերության ջահուկյանական մեկնաբանությունը. նա նախ փորձում է ապացուցել հայասերենի հնդեվրոպական բնույթը՝ ցույց տալով հայասական զուգահեռ-

<sup>14</sup> Տե՛ս, օրինակ, **Н. Hübschmann**, Zur Chronologie der armenischen Vocalgesetze // Sprachwissenschaftliche Abhandlungen, 1, 1898, էջ 129-172, **նույնի՝** Kleine Schriften zum Armenischen, Hildesheim-New York, 1976, էջ 335-378, հմմտ. նաև **Джаукян Г. Б.** Очерки по истории..., էջ 313 և հջ.:

<sup>15</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, հատկապես էջ 24-25, 223-279, 343-417, տե՛ս նաև **նույնի՝** Очерки по истории..., էջ 313-332:

<sup>16</sup> Տե՛ս **Джаукян Г. Б.** Общее и армянское..., էջ 224-229:

<sup>17</sup> **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն..., էջ 86:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 86-204:

ների հատուկ մերձավորությունը խեթա-լուվական լեզվաճյուղի լուվա-լիկիական խմբին, այնուհետև գտնում է, որ խեթա-լուվական լեզուների՝ հայերենի վրա ունեցած ազդեցության հիմնական մասը պետք է վերագրել հայասերենին, որը հայերենի մեջ հանդես է գալիս որպես հնդեվրոպական կողմնակի շերտ (ենթաշերտ) <sup>19</sup>: Այլ կերպ ասած՝ հայասերենը «պետք է հայերենին ձուլվելու ընթացքում նրա մեջ թողած լինի զգալի թվով հնդեվրոպական ծագման այնպիսի բառեր, որոնք չեն բացատրվում հայերենի բուն օրինաչափություններով... Նշանակում է՝ մեր «Очерки по истории дописьменного периода армянского языка» գրքում [Джаукян, 1967] առանձնացված հնդեվրոպական այն բառերի մի մասը, որոնք շեղվում են բուն հայերենի հնչյունական օրինաչափություններից, պետք է բացատրվի որպես անատոլիական-հայասական և, թերևս, որպես թրակյան»<sup>20</sup>: Մինևույն ժամանակ Գ. Ջահուկյանը նշում է, որ թեև հայասերենը հայերենի անմիջական հիմքը չէ, բայց Հայասայի անունը կապված է հայերի անվան հետ. նա հնարավոր է համարում Հայասայի ոչ միատարր բնակչության մեջ խեթա-լուվական ու թրակյան ցեղերի հետ միասին նաև բուն հայկական տարրի առկայությունը, որով էլ թերևս բացատրում է *Կալաթա* և *հայ* անունների հավանական կապը<sup>21</sup>:

Գ. Ջահուկյանի բառաքննական-ստուգաբանական դիտարկումները նույնպես կարևոր նշանակություն ունեն հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության տեսանկյունից: Նա ստուգաբանել է մինչ այդ անհայտ ծագման համարվող հայերեն բազմաթիվ բառեր և վերանայել ու ճշգրտել նախկինում տարբեր հետազոտողների կողմից կատարված շատ ստուգաբանություններ: Գ. Ջահուկյանի ստուգաբանական պրպտումների արդյունքները մեծ մասամբ արտացոլված են հայերենի պատմահամեմատական քննությանը նվիրված նրա տարբեր աշխատություններում: Բացի դրանից, նա ունի մի շարք ստուգաբանական հոդվածներ՝ հրատարակված «Պատմա-բանասիրական հանդես», «Բանբեր Երևանի համալսարանի», «Լրաբեր հասարակական գիտությունների» և այլ գիտական հանդեսներում: Ավա՛ղ, անվանի գիտնականը չհասցրեց իր ստուգաբանական հետազոտությունների արդյունքներն անձամբ ամփոփել մեկ ամբողջական բառարանի մեջ. նրա «Հայերեն ստուգաբանական բառարանում», որը կազմվել և հրատարակվել է իր մահվանից հետո, մի կողմից տեղ են գտել Գ. Ջահուկյանի հետ բացարձակապես կապ չունեցող բազմաթիվ անճշտություն-

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 322-341, նաև՝ *Джаукян Г. Б. Хайасский язык и его отношение к индоевропейским языкам*. Ер., 1964, հատկապես էջ 84-93, **նույնի** Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 167:

<sup>20</sup> Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն..., էջ 340:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 340, 323, հմմտ. նաև՝ Գ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական..., էջ 167:

ներ, այդ թվում՝ լեզվաբանական բնույթի սխալներ, մյուս կողմից բացակայում է կամ ոչ ճիշտ է ներկայացված հեղինակի ստուգաբանությունների մի զգալի մասը<sup>22</sup>: Թերևս ապագայում վերահրատարակության միջոցով հնարավոր կլինի վերականգնել «Հայերեն ստուգաբանական բառարանի» իրական տեսքը: Այստեղ կուզենայինք նշել միայն, որ Գ. Ջահուկյանի թողած ստուգաբանական ժառանգությունը Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» համեմատությամբ ունի մի շատ կարևոր առանձնահատկություն: «Հայերեն արմատական բառարանում», որն անշուշտ անփոխարինելի շտեմարան է հայերենի ստուգաբանությամբ զբաղվող յուրաքանչյուր մասնագետի համար, հետևողականորեն տարբերակված չեն բուն հնդեվրոպական անվանական և բայական կազմությունների հայերեն արտացոլումները հնդեվրոպական արմատների հիման վրա հայերենում ինքնուրույնաբար կազմված ձևերից. Հ. Աճառյանը շատ դեպքերում բավարարվում է հ.-ե. արմատական նախաձևերի վերականգնումով՝ նշելով, որ հայերեն այս կամ այն բառափնջի անդամները ծագում են հնդեվրոպական տվյալ արմատից: Իսկ Գ. Ջահուկյանը հայերեն բառերի նախաձևերը վերականգնելիս հ.-ե. արմատների հետ միաժամանակ հետևողականորեն տալիս է հ.-ե. համապատասխան անվանական և բայական հիմքերով նախաձևերը՝ հաշվի առնելով վերջիններիս արտացոլումները նաև ցեղակից այլ լեզուներում: Բայց եթե հայերեն այս կամ այն բառը ծագում է հ.-ե. արմատական նախաձևից կամ ակնհայտորեն հ.-ե. տվյալ արմատից հետագա ինքնուրույն կազմություն է ներկայացնում, կամ էլ հայերենի համար ենթադրելի հ.-ե. նախաձևային հիմքի գոյությունը չի հաստատվում ցեղակից լեզուների տվյալներով, այդ դեպքում նա բնականաբար նշում է միայն հ.-ե. համապատասխան արմատական նախաձևը: Ասվածը փորձենք լուսաբանել որոշ օրինակներով: Հ. հայ. *հոտ*, *-ոյ* «հոտ, բույր», *դարձ*, *-ի*, *դառնալ* (< \**դարձնալ*), *բերձ* (*հմնտ. երկնա-բերձ*), *բարձր*, *բառնալ* (< \**բարձնալ*) բառերը Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» ստուգաբանված են հետևյալ կերպ. *հոտ*, *-ոյ* բառը ծագում է հ.-ե. \**od-* «բուրել, հոտ արձակել» արմատից, *դարձ*, *-ի* և *դառնալ* (< \**դարձնալ*) բառերը՝ հ.-ե. \**dhǵh-* «դարձնել, ոլորել» արմատից, *բերձ*-ը՝ հ.-ե. \**bherǵh-* արմատից, իսկ *բարձր* (*-ր* մասնիկով) և *բառնալ* (< \**բարձնալ*) բառերը՝ հ.-ե. նույն \**bherǵh-* արմատի ձայնդարձի զրո (ստորին) աստիճանի \**bherǵh-* ձևից<sup>23</sup>: Մինչդեռ ըստ Գ. Ջահուկյանի հ. հայ. *հոտ*, *-ոյ* «հոտ, բույր» բառը ծագում է \**od-* արմատից \**-es/-os-* հիմքակազմ ածանցով կազմված \**odos-* նախաձևից, *դարձ*, *-ի* բառը

<sup>22</sup> Տե՛ս Գ. **Համբարձումյան**, Գ. Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանի» մասին // «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Եր., 2014, էջ 257-262:

<sup>23</sup> Տե՛ս Հ. **Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Եր., 1971, էջ 413-414, 639, հ. 3, Եր., 1977, էջ 118:



ծագում է հ.-ե. \*dhereǵh- արմատի ձայնդարձի զրո աստիճանի ձևից կազմված \*dhǵhi- անվանական, իսկ *դարնայ* (< \*դարձնայ) բայը՝ հ.-ե. \*dhǵh-nā- բայական հիմքից. *բերձ*-ը ծագում է հ.-ե. \*bherǵh- արմատական նախաձևից, *բարձր* բառը՝ նույն արմատի ձայնդարձի զրո աստիճանի ձևից կազմված հ.-ե. \*bherǵhu-r անվանական, իսկ *բարնայ* (< \*բարձնայ) բայը՝ հ.-ե. \*bherǵh-nā- բայական հիմքից<sup>24</sup>: Մյուս կողմից, Հ. Աճառյանը հ. հայ. *գետ*, -*ոյ* բառի համար վերականգնում է հ.-ե. \*wedopnավոր (թեմատիկ) հիմքով նախաձև<sup>25</sup>: Բայց տվյալ դեպքում հ.-ե. բնավոր հիմքի վերականգնումը չի հիմնավորվում ցեղակից լեզուների տվյալներով: Ուստի Գ. Ջահուկյանը նախընտրում է սահմանափակվել հ.-ե. \*yed- (\*wed-) արմատական նախաձևի նշումով<sup>26</sup>, թեև նա, հաշվի առնելով հունարենի և հին հնդկերենի ընձեռած տվյալները, սկզբունքորեն հնարավոր է համարում *գետ*, -*ոյ* բառի ծագումը հ.-ե. \*-es/-os- հիմքակազմ ածանցով կազմված \*yedos- նախաձևից (հմմտ. հ.-ե. \*odos- > հ. հայ. *հոտ*, -*ոյ* և այլն)<sup>27</sup>:

Գ. Ջահուկյանի համեմատաբանական հետաքրքրությունների շրջանակը չի սահմանափակվում հայերենի պատմահամեմատական ուսումնասիրությամբ. նա հնդեվրոպական լեզվաբանության մի շարք վիճահարույց հարցեր մեկնաբանել է յուրովի և առաջարկել նոր վերականգնումներ: Այսպես, Գ. Ջահուկյանը գտնում է, որ ցեղակից լեզուների փոխհարաբերությունն ու մերձավորության աստիճանը պարզելուն միտված ավանդական երկու հայտնի տեսությունները՝ Ա. Շլայխերի ծագումնաբանական ծառի տեսությունը և Յ. Շմիդտի «ալիքների տեսությունը», իրականում ոչ թե բացառում, այլ լրացնում են միմյանց՝ արտացոլելով ժամանակագրական տարբեր փուլեր. «ալիքների տեսությունը» բացատրում է միասնության շրջանում միմյանց վրա փոխներգործող հնդեվրոպական բարբառների, իսկ ծագումնաբանական ծառի տեսությունը՝ արդեն միմյանցից առանձնացած ցեղակից լեզուների ու բարբառների փոխհարաբերությունը: Ժամանակագրական առումով «ալիքների տեսությունը» բնութագրում է հնդեվրոպական միասնության շրջանը, իսկ ծագումնաբանական ծառի տեսությունը՝ ցեղակից լեզուների ինքնուրույն գոյության ժամանակաշրջանը<sup>28</sup>: Ըստ Գ. Ջահուկյանի՝ տարբերակայնությունը ամեն մի բնական լեզվի կարևորագույն հատկանիշն է. անհնար է պատկերացնել լեզվի պատմական զարգացումն առանց նրա տարածական, հասարակական-գործառական, անհատական տարբերակների գոյության և առանց ներհամակարգային հակասությունների առկայության: Սակայն հնդեվ-

<sup>24</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն..., էջ 116, 120, 140:

<sup>25</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 537:

<sup>26</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն..., էջ 114:

<sup>27</sup> Տե՛ս Դձաւկյան Դ. Բ. Сравнительная грамматика..., էջ 130:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 7, նաև Գ. Բ. Djahukian, Variative Modelle des Urindoeuropäischen und der Begriff der partiellen Parallelen (Isoglossen) // Studia Indogermanica, Vol. 1, Łódź, 1997, էջ 47:

րոպական նախալեզվի վերականգնման ժամանակ այդ հանգամանքը հաճախ անտեսվում է հետազոտողների կողմից. առավելագույն ընդհանրացման և իդեալականացման ձգտումը հանգեցնում է միասնական, բայց ըստ էության անիրական և անհավանական լեզվական համակարգերի վերականգնմանը: Վերականգնվող գերընդհանրացված և միատարր համակարգերը, չարտացոլելով նախալեզվի բնական տարբերակայնությունն ու ներքին հակասությունները, իրենք են դառնում հակասական զրկված լինելով անհրաժեշտ բացատրողական ուժից<sup>29</sup>: Գ. Ջահուկյանը տարբերակայնության սկզբունքի կիրառմամբ փորձում է վեր հանել հնդեվրոպական բառային և քերականական մի շարք մասնակի գուգաբանություններ, որոնք տվյալ լեզվաձյուղերն ընդգրկում են ոչ թե ամբողջությամբ, այլ մասնակիորեն՝ բնորոշ լինելով այդ լեզվաձյուղերի միայն որոշ անդամների (առանձին ենթաձյուղերի, լեզուների կամ բարբառների), և որպես այդպիսին՝ արտացոլում են հնդեվրոպական բարբառային նախավիճակը: Դրանից հետևում է, որ հնդեվրոպական միասնության շրջանից ի վեր բարբառային տարբերակվածությունը (տարբերակայնությունը) ցեղակից լեզուներին ուղեկցել է իրենց գոյության ողջ ընթացքում<sup>30</sup>: Նույնպիսի նկատառումներից ելնելով՝ նա հնդեվրոպական պայթականների մեկ միասնական համակարգի փոխարեն վերականգնում է բարբառային հինգ տարբերակներով իրացվող բաղաձայնական համակարգ<sup>31</sup>: Գ. Ջահուկյանը միաժամանակ ուշագրավ դիտարկումներ է կատարում հնդեվրոպական պայթականների առանձին շարքերին առնչվող մի շարք վիճահարույց հարցերի՝ հետնալեզվայինների առաջին քմայնացման և հետագա շփականացման, հպաշփականացման և լեզվատամնայնացման երևույթների ժամանակագրության, քմայնացած հետնալեզվայինների և շնչեղ խուլերի հնչյութային կարգավիճակի, շնչեղ խուլերի դեպքում հնդեվրոպական բարբառային և հետհնդեվրոպական շերտերի տարբերակման, հ. -ե. \*b ձայնեղ պայթականի վերականգնման անհրաժեշտության, հնդեվրոպական նախալեզվի վաղ շրջանում նոստրատիկ լեզվամիասնության շրջանից ժառանգված կատկայնացված բաղաձայնների հնարավոր գոյության, բայց հնդեվրոպական ուշ շրջանում նրանց ակնհայտ բացակայության վերաբերյալ և այլն<sup>32</sup>:

Գ. Ջահուկյանն զբաղվել է նաև հնդեվրոպական նախալեզվի հետավոր ցեղակցության հարցերի ուսումնասիրությամբ: Ի տարբերու-

<sup>29</sup> Տե՛ս **G. B. Djahukian**, Variative Modelle des Urindoeuropäischen..., էջ 45-46, նաև՝ **նույնի**՝ A Variational Model of the Indoeuropean Consonant System // Historische Sprachforschung, Bd. 103, Heft 1, Göttingen, 1990, էջ 9-13:

<sup>30</sup> Տե՛ս **G. B. Djahukian**, Variative Modelle des Urindoeuropäischen..., էջ 46-64:

<sup>31</sup> Տե՛ս **G. B. Djahukian**, A Variational Model..., էջ 10-11:

<sup>32</sup> Տե՛ս **Джаукян Г. Б.** Очерки по истории..., էջ 39-44, 54-60, **նույնի**՝ Общее и армянское..., էջ 119-123, **նույնի**՝ Сравнительная грамматика..., էջ 21-22, **նույնի**՝ Индоевропейская фонема \*b и вопросы реконструкции индоевропейского консонантизма // Вопросы языкознания, М., 1982, № 5, էջ 59-66, **նույնի**՝ A Variational Model..., էջ 1-13:

յուն հնդեվրոպաբանների մեծ մասի, որոնք անվստահությամբ են վերաբերվում նոստրատիկ լեզվաբանության ձեռքբերումներին՝ անտեսելով դրանց դերը նախահնդեվրոպական (և վաղ հնդեվրոպական) վերականգնումների հարցում<sup>33</sup>, Գ. Ջահուկյանը գտնում է, որ հեռավոր ցեղակցության ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են տալիս պարզելու հնդեվրոպական նախալեզվի վաղ շրջանի համար ենթադրվող մի շարք վերականգնումների հավաստիության աստիճանը. հնդեվրոպական նախալեզվի ներքին վերականգնմամբ ձեռք բերված արդյունքները ստուգվում և լրացվում են նոստրատիկ լեզուների ընդհանուր արտաքին վերականգնման տվյալներով<sup>34</sup>: Բացի դրանից, նա, առաջ քաշելով խուռա-ուրարտական լեզուների՝ նոստրատիկ ընդհանրությանը պատկանելու գաղափարը, հանգամանորեն դիտարկել է հնդեվրոպական և խուռա-ուրարտական՝ հեռավոր ցեղակցության արդյունք հանդիսացող առավել հավաստի զուգահեռները, որոնք ենթարկվում են որոշակի հնչյունական օրինաչափությունների և ընդգրկում երկու լեզվաընտանիքների քերականական կառուցվածքի ու բառապաշարի հիմնական բաղադրիչները<sup>35</sup>: Գ. Ջահուկյանը հատուկ քննության է ենթարկել նաև հայերենի և ուրարտերենի փոխհարաբերության հարցը՝ տարբերակելով զուգադիպումների երեք հիմնական խումբ՝ 1) հեռավոր ցեղակցությամբ պայմանավորված լեզվական ընդհանրություններ, 2) փոխառության և ենթաշերտային ազդեցության հետևանքով ուրարտերենից հայերենին անցած բառեր, 3) հայերենից ուրարտերենին անցած բառեր<sup>36</sup>: Նա ուրարտական ենթաշերտի ազդեցությամբ է բացատրում նաև հայերենի հնչյունական և քերականական որոշ առանձնահատկություններ<sup>37</sup>: Մակայն հետազայում Գ. Ջահուկյանը կատարում է մի նոր դիտարկում, որի լույսի ներքո անհրաժեշտություն է առաջանում վերանայել հայերենի և ուրարտերենի պատմական փոխհարաբերության հարցը: Նկատի ունենք նրա «Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին» հոդվածը, որտեղ մասնավորապես գրում է. «Երկար տարիներ նվիրելով ուրարտական արձանագրությունների լեզվի ուսումնասիրությանը՝ մենք եկել ենք այն եզրակացությանը, որ հիշյալ բանաձևերի բառապաշարն ու քերականական կառուցվածքը հնարավոր է մեկնել հայերենով, այսինքն՝ այդ բանաձևերը համարել

<sup>33</sup> Տե՛ս **J. Clackson**, *Indo-European Linguistics: An Introduction*, Cambridge University Press, 2007, էջ 20-23, **B. W. Fortson IV**, *Indo-European Language and Culture: An Introduction*, Oxford, Blackwell, 2004, էջ 11-12:

<sup>34</sup> Տե՛ս **Джаукян Г. Б.** Сравнительная грамматика..., էջ 12:

<sup>35</sup> Տե՛ս **Джаукян Г. Б.** Урартский и индоевропейские языки. Ер., 1963, **նույնի՝** Взаимоотношения индоевропейских, хурритско-урартских и кавказских языков. Ер., 1967, նաև **նույնի՝** Հայոց լեզվի պատմություն..., էջ 417-422:

<sup>36</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն..., էջ 429-445:

<sup>37</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 427-428:

հայոց լեզվի առաջին գրավոր տեքստերը»<sup>38</sup>: Ըստ Գ. Չահուկյանի՝ «բավական համոզությամբ ապացուցվում է այդ բանաձևերի հայկական բնույթը...», բայց «...առայժմ բաց է մնում այդ բանաձևերի և «ուրարտական» կոչված տեքստերի լեզվական բուն առնչությունը»<sup>39</sup>: Հետևաբար, առայժմ բաց է մնում նաև հայերենի և ուրարտական արձանաբարությունների լեզվական բուն առնչության հարցը, եթե հիշյալ ներածական բանաձևերը իրոք ներկայացնում են հայերենի առաջին գրավոր տեքստերը:

Այսպիսով, Գ. Չահուկյանի համեմատաբանական ժառանգությունը կարելի է ընդհանրացված բնութագրել հետևյալ կերպ. **ա)** համեմատական նյութի նկարագրման և մատուցման նոր սկզբունքների կիրառում, **բ)** հայերենի համեմատական քերականության գրեթե բոլոր ասպեկտների համակողմանի քննություն՝ հնչյունական և ձևաբանական մի շարք ընդհանուր օրինաչափությունների սահմանմամբ և բազմաթիվ բառերի ստուգաբանությամբ հանդերձ, **գ)** հայերենի նախագրային ժամանակաշրջանի գիտական շրջանաբաժանում՝ յուրաքանչյուր շրջանին բնորոշ լեզվական առանձնահատկությունների հնարավորինս համակարգային նկարագրությամբ, **դ)** հայերենի տարածքային կապերի և հեռավոր ցեղակցության հարցերի քննություն՝ ծագումնային և ոչ ծագումնային (ենթաշերտային, առշերտային) լեզվական ընդհանրությունների տարբերակմամբ, **ե)** հնդեվրոպաբանության մի շարք վիճահարույց հարցերի յուրովի մեկնաբանություն:

**Բանալի բառեր** – *հայերենի պատմահամեմատական ուսումնասիրություն, բառաքննական–ստուգաբանական դիտարկումներ, ընդհանրացման սկզբունք, հայերենի նախագրային ժամանակաշրջանի գիտական շրջանաբաժանում*

**САРГИС АВЕТЯН – Вклад Геворга Джаукяна в сравнительно-историческое изучение армянского языка.** – Г. Джаукян внёс немалую лепту в разные области языкознания. Что касается сравнительно-исторического изучения армянского языка, здесь его вклад вкратце включает в себя: 1) применение новых принципов описания и подачи сравнительного материала; 2) всестороннее рассмотрение сравнительной грамматики и всех диахронических языковых процессов, в том числе установление некоторых общих фонологических и морфологических закономерностей, а также ряд этимологических наблюдений; в) периодизацию дописьменной истории армянского языка, включая систематическое описание реконструируемых особенностей, характеризующих тот или иной период; г) подробную ареальную характеристику армянского в соотношении с остальными праиндоевропейскими диалектами. Кроме того, Г. Джаукян внёс ощутимый

<sup>38</sup> Գ. Չահուկյան, Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին // Պատմա-բանասիրական հանդես, Եր., 2000, 1, էջ 124:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 127-128:

вклад в индоевропеистику, предложив новые решения спорных вопросов и собственные подходы к проблеме отдалённого языкового родства.

**Ключевые слова:** *сравнительно-историческое изучение армянского языка, этимологические наблюдения, периодизация дописьменной истории*

**SARGIS AVETYAN – *The Contribution of Gevorg Jahukyan to Comparative-Historical Study of the Armenian Language.*** – The contribution of academician G. Jahukyan to comparative-historical study of the Armenian language can be characterized in broad lines as follows: **a)** application of new principles of describing and presenting comparative material, **b)** a thorough examination of the comparative grammar and all diachronic processes of Armenian, including the establishment of a number of phonological and morphological general patterns as well as many etymological observations, **c)** periodization of the whole pre-written history of Armenian, with the systematic description of reconstructable linguistic features characterizing the periods, **d)** a thorough areal characterization of Armenian in relation to the other dialects of Proto-Indo-European. Besides, G. Jahukyan made an important contribution to the Indo-European Linguistics, offering new solutions to a number of disputable problems, and to the study of the question of distant linguistic relationship as well.

**Key Words:** *the establishment of a number of phonological and morphological general patterns, etymological observations, periodisation of the whole pre-written history of the Armenian language*

---

## ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԲԱԶՄԱՀԱՏԿԱՆԻՇ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

### ԳԱՂԹՈՒՇԻ ՀԱՆԱՆՅԱՆ

Հայ բարբառագիտությունն ընթացել է ինչպես բարբառային առանձին միավորների նկարագրության և ուսումնասիրման, այնպես էլ տեսական որոշ հարցերի մշակման ու առաջընթացման ուղղություններով:

Տեսական հարցերի մշակման ուղղությամբ բավական նկատելի և լուրջ աշխատանքներ են կատարվել հատկապես բարբառային միավորների դասակարգման և նրանց՝ միմյանց հետ ունեցած փոխհարաբերությունների բացահայտման բնագավառներում: Բարբառային միավորների առաջին դասակարգումները կատարվել են դեռևս նախանցյալ դարի երկրորդ հիսնամյակում: Դրանք, որ հայ բարբառագիտության մեջ ընդունված է անվանել աշխարհագրական դասակարգումներ, վերաբերում էին հիմնականում աշխարհաբարի սաղմնավորման և հետագա զարգացումներին (Ա. Այտընյան), ինչպես նաև ընդհանրապես հայերենի ծագումնաբանական որոշ խնդիրների մեկնաբանություններին (Ք. Պատկանյան, Լ. Մսերյանց, Ա. Թուման):

Հայ բարբառագիտության զարգացման համար տեսական առաջին ուղենիշային ուսումնասիրությունը Հր. Աճառյանի «Հայ բարբառագիտություն (Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների)» (Մոսկվա, Նոր Նախիջևան, 1911) աշխատությունն էր, ուր առաջին անգամ կատարվում է հայ բարբառների դասակարգում՝ հենված լեզվական մի էական հատկանիշի՝ սահմանական եղանակի ներկա և անկատար անցյալ բայաձևերի կազմության սկզբունքի վրա: Դա ձևաբանական միահատկանիշ առաջին դասակարգումն էր: Բարբառագիտական հետագա բոլոր ուսումնասիրությունները կատարվել են հիմնականում այս սկզբունքով:

Դասակարգման աճառյանական սկզբունքը հետագայում ավելի մանրամասնվեց. առանձնացվեցին բարբառային նոր ճյուղեր, բացահայտվեցին բարբառային միավորների փոխհարաբերությունների նոր օրինաչափություններ, մշակվեցին դասակարգման ձևատիպաբանական սկզբունքներ (Է. Աղայան, Ա. Ղարիբյան):

Անցյալ դարակեսին Ա. Ղարիբյանը կատարեց նաև հայ բարբառների հնչյունաբանական դասակարգում՝ ըստ գրաբարի պայթական ու պայթաշփական բաղաձայնների՝ բառասկզբի դիրքերի բարբառային համապատասխանությունների:

Միահատկանիշ դասակարգումները թեն բավական արդյունավետ էին, սակայն հնարավորություն չէին տալիս լիարժեքորեն բացահայտելու հայ բարբառների ներքին բարդ ու բազմաբնույթ փոխհարաբերությունները, հստակորեն տարբերակելու բարբառային ստորակարգության միավորները (բարբառախումբ, բարբառ, խոսվածք): Միակ չափանիշը դիտվում էր հասկանալիության աստիճանը, որը հաճախ կամայական որակումների ու մեկնաբանությունների դուռ էր բաց անում:

Հայ բարբառագիտության մեջ այդ միավորների փոխհարաբերությունների բացահայտման հստակ չափանիշների բացակայությունը, բարբառային նույն միավորի՝ կառուցվածքային տարբեր մակարդակների ուսումնասիրման համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերի կիրառման անհետևողականությունը, ժողովրդի բնական ու հաճախ պարտադրված տեղաշարժերի հետևանքով ստեղծված բարբառային բարդ իրավիճակը պահանջում էին մշակել դասակարգման ավելի արդյունավետ սկզբունքներ: Այդպիսի սկզբունք էր ակադ. Գ. Ջահուկյանի մշակած և իր իսկ կողմից առաջինը կիրառված բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքը, որի նախապատրաստական աշխատանքները սկզբնավորվել էին դեռևս անցյալ դարի 60-ական թվականների սկզբից:

Հեղինակը, ձեռնարկելով հայ բարբառների նոր՝ բազմահատկանիշ դասակարգում, նախապես նպատակադրվել էր կիրառել լեզվաբանական աշխարհագրության հիմնական սկզբունքներն ու մեթոդները, «...մասնավորապես այսպես կոչված զուգաբանությունների մեթոդը»<sup>1</sup>, սակայն հայերենի բարբառային բարդ իրավիճակը և մեթոդն ինքնին հնարավորություն չէին տալիս այդ միավորների փոխհարաբերությունները հստակ ու ճշգրիտ չափանիշներով որոշելու: Լեզվաբանական աշխարհագրությունը բարբառային միավորների կենտրոններն ու սահմանները որոշում էր ըստ զուգաբանական գծերի խտության կամ նոսրության աստիճանի, որը դժվարացնում էր ստորակարգության միավորների առանձնացման չափանիշների որոշակիացումն ու մանրամասնումը: Ուստի հեղինակը մշակում է վիճակագրական բարբառագիտության մեթոդը՝ զուգաբանական գծերի ու քարտեզների փոխարեն կիրառելով համապատասխան աղյուսակներ՝ բարբառային հատկանիշների ընդհանրություններն ու տարբերություններն արտահայտելով թվային ցուցիչներով:

Բազմահատկանիշ վիճակագրական սկզբունքի էությունն ու այդ սկզբունքով կատարված ուսումնասիրությունների արդյունքները ներկայացված են «Հայ բարբառագիտության ներածություն» (Եր. 1972)

<sup>1</sup> Գ. Բ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 13:

հիմնարար աշխատության մեջ, որը ծրագրային նշանակություն ունեցավ հետագա գրեթե բոլոր բարբառագիտական ուսումնասիրությունների համար: Աշխատությունը ժամանակին ըստ արժանվույն գնահատվել ու նրա հիմնական սկզբունքները վերլուծվել են մասնագետների կողմից<sup>2</sup>:

Բազմահատկանիշ վիճակագրական սկզբունքը այդ աշխատության մեջ կիրառված է ոչ միայն համաժամանակյա, այլ նաև տարածամանակյա բարբառագիտության կարևոր շատ խնդիրների առաջընթացում, քննության ու լուծման նպատակով: Այս աշխատության մեջ առաջին անգամ կատարված է նաև հայ բարբառների բառաաշխարհագրության և բառավիճակագրության, ինչպես նաև՝ բարբառային ժամանակագրության փորձ՝ ըստ Սվոդեշի լեզվաժամանակագրության մեթոդի: Այս վերջին դեպքում համեմատության եզր ընդունված նորմավորված գրաբարի հետ արդի բարբառների համեմատությունները, բնական է, չէին կարող ժամանակագրական դասակարգման ճշգրտություն ապահովել, ուստի, ինչպես հեղինակն է նշում, «ապագային է մնում լեզվաժամանակագրական հարցերի ավելի ռացիոնալ և ճշգրիտ մեթոդների ստեղծումը»<sup>3</sup>:

Աշխատության մեջ առաջ քաշված սկզբունքային բոլոր խնդիրների վերլուծությունները առանձին ուսումնասիրությունների նյութ են, ուստի այստեղ մենք կանդրադառնանք միայն բազմահատկանիշ համաժամանակյա դասակարգման քննությանը:

Այս դասակարգման սկզբունքային նորությունն ու առավելությունն այն էր, որ լեզվական կառուցվածքի մեկ կամ մի քանի հատկանիշների փոխարեն հիմք են ընդունվել առավել էական հատկանիշների ամբողջական խմբեր, որոնք տեղայնացվել և բաշխվել են ընտրված բարբառախոս վայրերի վրա: Այս դեպքում խիստ կարևորվում են բարբառային հատկանիշների ու բարբառախոս վայրերի ճիշտ և համամասն ընտրությունն ու արժեքավորումը: Իհարկե դասակարգվող միավորների փոխհարաբերությունների բացահայտումն առավել մեծ ճշգրտություն կունենար, եթե ընտրվեին բարբառախոս բոլոր վայրերն ու բարբառային տարբերակիչ բոլոր հատկանիշները: Սակայն դա գործնականում շատ դժվարությունների հետ էր կապված, տեսականորեն էլ ոչ այնքան խրախուսելի, որովհետև նախ՝ անբավարար էր բարբառախոս որոշ վայրերի խոսվածքային միավորների նկարագրվածության աստիճանը, և երկրորդ՝ կառաջանար հավելուրդային ինֆորմացիա, որի դեպքում, ինչպես հեղինակն է նշում, «... ջնջվում է

<sup>2</sup> Տե՛ս Լ. Հովսեփյանի գրախոսությունը (ԼՀԳ, 1974, № 1), «Հայ բարբառագիտության անցած ուղին և զարգացման հեռանկարները» հոդվածում Հ. Մուրադյանի անդրադարձը (ԼՀԳ, 1974, № 4), Մ. Ասատրյանի «Հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը» հոդվածը (ԲԵՀ, 1982, № 1):

<sup>3</sup> Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 245:



դասակարգման առարկայի և դասակարգման մոդելի սահմանը. մոդելը փաստորեն համընկնում է առարկայի (օբյեկտի) հետ, որն իր հերթին դժվարացնում է օբյեկտի ընկալումը մարդկանց կողմից, այսինքն՝ թուլացնում է օբյեկտի իմացական արժեքը...»<sup>4</sup>: Այս դեպքում հեղինակը կատարել է բարբառախոս վայրերի և բարբառային հատկանիշների որոշակի ընտրություն: Բարբառախոս վայրերի ընտրության դեպքում առաջնորդվել է տվյալ բնակավայրի մեծության, վարչատնտեսական կարևորության, պատմական հնության, արդի բարբառագիտության համար ունեցած նշանակության ու նկարագրվածության աստիճանի չափանիշներով:

Բարբառային հատկանիշներն ընտրելիս առավելությունը տրվել է դրանց կարևորությանն ու տարածվածությանը: Կարևոր են դիտվել այն հատկանիշները, որոնք լեզվական կառուցվածքում ունեն տեսակարար մեծ կշիռ, կիրառման հաճախականություն, գործառական կարևոր արժեք ու բեռնվածություն: «Ըստ տարածվածության չափանիշի գերադասություն է տրվում այն հատկանիշին, որն ընդգրկում է աղյուսակում տրված վայրերի 50±35%-ը, այսինքն՝ ոչ պակաս, քան 15%-ը, և ոչ ավելի, քան 85%-ը»<sup>5</sup>:

«Բարբառային հատկանիշ» հասկացությունն այստեղ դիտված է ոչ թե լեզվական կառուցվածքային հատկանիշների բնութագրով, այլ դասակարգվող միավորների՝ միմյանցից ունեցած ամեն կարգի տարբերությամբ<sup>6</sup>: Հաշվարկումները հեշտացնելու, ինչպես նաև լեզվական կառուցվածքի բոլոր մակարդակների հատկանիշների համամասնությունն ապահովելու նկատառումով հեղինակը սահմանափակվել է 100 հատկանիշի ընտրությամբ, որոնցից 50-ը հնչյունական են (համամասնաբար՝ 25 բաղաձայնական, 25 ձայնավորային ու երկբարբառային), 50-ը՝ քերականական (որոնցից՝ 25-ը՝ անվանական ու դերանվանական, 25-ը՝ բայական): Այս հարյուր հատկանիշները բաշխված են ընտրված 120 բարբառախոս վայրերի վրա: Վերջիններս աղյուսակներում դասավորված են ըստ բնակավայրերի աշխարհագրական մերձավորության, որոշ դեպքերում էլ նկատի է առնված ավանդույթը. բարբառախոս կենտրոնների մոտ դասավորված են բարբառային հատկանիշներով մերձավոր տարածքները: Տվյալ հատկանիշի առկայությունը արտահայտված է + (այլուս) նշանով, բացակայությունը՝ - (մինուսով), իսկ «Այն բոլոր դեպքերում, երբ այդ վայրում տվյալ հատկանիշը գտնվում է սկզբնավորման կամ մահացման պրոցեսում, չի ընդգրկում բոլոր կարևոր բառերը, նույն վայրում տալիս է զուգահեռ

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 44:

ձևեր և այլն, օգտագործվում են  $^{\circ}$  և  $\mp$  նշանակումները<sup>7</sup>: Երբ տվյալ հատկանիշի առկայությունը տալիս է ներքին տարբերակումներ, օգտագործվում են նաև  $+^1, +^2, +^3 \dots$  նշանակումները:

Աղյուսակներում նույնարժեք նշանների (+ և +, - և -,  $\mp$  և  $^{\circ}$ ,  $^{\circ}$  և  $^{\circ}$ ,  $\mp$  և  $\mp$ ) առկայությունը գնահատվում է 0 (զրո), իսկ տարարժեք (- և +), նաև - և  $+^1$ , - և  $+^2$ , - և  $+^3$  նշաններինը՝ մեկ միավոր: Մնացած բոլոր տարբերությունները (- և  $\mp$ , - և  $^{\circ}$ , + և  $\mp$ , + և  $^{\circ}$ , + և  $+^1$ , + և  $+^2$ , + և  $+^3 \dots$ ) գնահատվում են կես միավոր: Հասկանալի է, որ գնահատման այսպիսի չափանիշները չեն կարող ապահովել դասակարգվող միավորների լիակատարին մոտեցող օբյեկտիվություն, քանի որ այս չափանիշներով երբեմն հավասարեցվում են ոչ համարժեք հատկանիշներ: Ուստի, ինչպես հեղինակն է նշում, «Այդ մասին ապագայում պետք է մտածել»<sup>8</sup>:

Այս բոլորից հետո, երբ արդեն կատարված է բարբառախոս վայրերի ընդհանրությունների ու տարբերությունների հաշվարկում և հնարավոր բոլոր կոմբինացիաների մշակում, հեղինակն անցնում է հիմնական նպատակի իրագործմանը՝ բարբառների վիճակագրական դասակարգմանը, որը ընդգրկում է հաջորդական մի քանի գործողություններ: Առաջին և շատ կարևոր քայլը մակարդակային ցուցիչի, այսինքն՝ ստորակարգվող միավորների ստորին և վերին շեմերի որոշումն է: Հատկանիշների բաշխման հաշվարկումներից պարզվում է, որ հայերենի բարբառների տարբերակիչ հատկանիշների առավելագույն քանակը ըստ 100 հատկանիշ պարունակող ցուցակի 66,5 է. այդքան հատկանիշներով է տարբերվում ծայր հյուսիսարևմտյան միջբարբառախումբի միավոր Կուտին հարավարևելյան բարբառախումբի Ագուլիսի և Յոնայի խոսվածքներից: Դասակարգման մանրամասնությունը կախված է ընտրված հատկանիշների և ստորակարգության միավորների քանակից: Ստորակարգության երեք մակարդակ (բարբառախումբ, բարբառ, խոսվածք) ընդունելու դեպքում տարբերակիչ հատկանիշների առավելագույն քանակը բաժանվում է մակարդակների ընդունված թվի վրա, այս դեպքում՝ երեքի, որով ստացվում է մակարդակային ցուցիչը: Հատկանիշների առավելագույն քանակը նշանակելով  $M^n$  max-ով, մակարդակների քանակը՝  $L^n$ -ով, մակարդակային ցուցիչը՝  $indL$ -ով, կստացվի  $indL = \frac{M^n \max}{L^n}$  բանաձևը: Այս բանաձևի մեջ տեղադրելով որոշակիացված տվյալները՝  $indL$ -ը կլինի  $\frac{66,5}{3} \approx 22$ , այսինքն՝ 0,5-ից մինչև 22 տարբերակիչ հատկանիշ ընդգրկող միավորները խոսվածքներ են, 22,5-ից մինչև 44-ը՝ բարբառներ, 44,5-ից մինչև 66-ը՝ բարբառախումբեր: Մնացորդ ստացված 0,5-ը հեղինակը գումարել

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 40:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 42, էջաստորի 2 ծանոթագրությունը:

է Բարբառախմբերի մակարդակային ցուցիչի վերին շեմքին և առանձնացրել ստորակարգության ավելի բարձր միավոր՝ բարբառային խմբակցություն, որի ստորին շեմքը կլինի 66,5-ը: Այս վերջին դեպքում արդեն տարբերակվում են հայերենի բարբառային երկու մեծ խմբակցությունները, ինչը համընկնում է ավանդական արևելյան և արևմտյան խմբակցությունների հետ:

Հաջորդ քայլը մակարդակային (բարբառախմբերի, բարբառների, խոսվածքների) կենտրոնների առանձնացումն ու դրանց քանակի որոշումն է: Այս դեպքում հեղինակն առաջնորդվել է այն սկզբունքով, որ առանձնացվեն հնարավորինս շատ կենտրոններ, որոնք ունենան սովյալ մակարդակին հատկացվող առավելագույն տարբերակիչ հատկանիշներ, ըստ լեզվաբանական աշխարհագրության սկզբունքի՝ գուգաբանական գծերի ավելի խիտ ցանցեր: Կենտրոններն առանձնացնելիս նկատի է առնվել դրանց՝ միմյանցից ունեցած տարբերակիչ հատկանիշների հնարավորինս հավասար քանակ: Այդ կենտրոնների սահմանները կլինեն նախորդ մակարդակի վերին շեմքին մոտեցող հատկանիշների քանակը: Ըստ այս սկզբունքի՝ նույն բարբառին հատկացվող խոսվածքներն իրարից ավելի քիչ տարբերություններ պետք է ունենան, քան տարբեր բարբառների պատկանողները, որոնք էլ իրենց հերթին՝ ավելի քիչ, քան տարբեր բարբառախմբերի պատկանողները: Առաջադրվող դասակարգման մեջ հիմնականում այդպես էլ կա:

Երրորդ գործողությունը առանձնացված միավորների կազմի որոշումն է, այսինքն՝ ընտրված միավորների խմբավորումը. սկսելով ստորակարգ միավորներից՝ խոսվածքները խմբավորել բարբառների, բարբառները՝ բարբառախմբերի մեջ: Դասակարգումն ավելի մանրամասնելու դեպքում, այսինքն՝ եթե առանձնացվեն նաև ենթախոսվածքներ, ենթաբարբառներ, բարբառային ենթախմբեր, համամասնաբար, ըստ բանաձևի, կփոխվի նաև մակարդակային ցուցիչը:

Կատարելով բարբառախոս 120 վայրերում տարբերակիչ 100 հատկանիշների բաշխման բոլոր հնարավոր կոմբինացիաների հաշվարկումներ, թվային ճշգրիտ ցուցիչներով առանձնացնելով համապատասխան միավորների կենտրոնները՝ Գ. Ջահուկյանը առաջարկում է հայերենի բարբառների դասակարգման նոր պատկեր, որի բերած մյուս նորարարությունն այն էր, որ առանձնացվում են նաև միջակա միավորներ, որոնք բարբառային հիմնական երկու և ավելի կենտրոններից տարբերակվում են հատկանիշների հավասար քանակով:

Բարբառների արևմտյան խմբակցության մեջ առանձնացված են երեք բարբառախմբեր՝ ա) Անտիոքի կամ ծայր հարավարևմտյան, բ) Փոքր Ասիայի կամ արևմտյան, գ) Մուշ-Տիգրանակերտի կամ հարավկենտրոնական), և չորս միջբարբառախմբեր՝ ա) Կիլիկիայի կամ հարավարևմտյան, բ) Համշենի կամ հյուսիսարևմտյան, գ) Առդեալի (Տրանսիլ-

վանիայի) կամ ծայր հյուսիսարևմտյան, դ) Վանի կամ հարավային:

Բարբառների արևելյան խմբակցության մեջ դասակարգված են՝ ա) Խոյ-Մարաղայի կամ հարավարևելյան, բ) Արարատյան կամ հյուսիսարևելյան, գ) Ագուլիս-Մեղրի կամ արևելյան բարբառախմբերը և դ) Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախումբը:

Խոսվածքներն ու բարբառները խմբավորված են այս խմբերի ու միջնախմբերի մեջ ըստ մերձավորության աստիճանը որոշող թվային ցուցիչների: Առանձնացված են նաև միջբարբառներ: Վերջնական արդյունքում ստացված բարբառային 44 միավորները խմբավորված են նշված 6 խմբերի և 5 միջնախմբերի մեջ:

Վերջում հեղինակը ներկայացրել է դասակարգման արդյունքներն ամփոփող աղյուսակ, ուր նշված են նաև միննույն բարբառի մեջ մտնող ամեն մի խոսվածքի տարբերակիչ հատկանիշների քանակը նախորդ խոսվածքից ըստ մերձավորության աստիճանի: Բարբառախմբային և միջխմբային կենտրոնների՝ միմյանց հետ ունեցած փոխհարաբերությունները ներկայացված են համապատասխան գծապատկերներով, որոնցում կենտրոնների փոխհարաբերությունները պատկերող հոծ և ընդհատ գծերի վրա նշանակված են տարբերակիչ հատկանիշների թվային ցուցիչները:

Այս դասակարգմամբ ակադ. Գ. Ջահուկյանը ճշգրտել ու հստակեցրել է հայերենի բարբառային միավորների՝ միմյանց նկատմամբ ունեցած դիրքն ու փոխհարաբերությունները, սահմանել ստորակարգության միավորների մաթեմատիկական ցուցիչներ: Նա հանգել է նաև այն եզրակացության, որ բարբառները խիստ ընդգծված սահմաններ չունեն, և առանձնացված միջակա օղակները նշում են հենց այդ անցումային գծերը:

Բարբառախոս վայրերի, բարբառային տարբերակիչ հատկանիշների, սրանց գնահատման չափանիշների, ինչպես նաև համեմատության չափանիշների հետագա հավելում-փոփոխություններն ու ճշգրտումները, կարծում ենք, էական փոփոխություններ չեն մտցնի դասակարգման սկզբունքի բուն էության և ստացված արդյունքների մեջ: Իսկ ինչպես ամեն մի սկիզբ ու նոր սկզբունք, այս դասակարգումը ևս ենթակա է հետագա կատարելագործման, և, ինչպես հեղինակն է նշում առաջաբանում, «...սպագան ցույց կտա, թե ինչ նոր հատկանիշներ կարելի է ընտրել, և ինչպես պետք է ավելի արդյունավետ դարձնել ներկա սկզբունքները»<sup>9</sup>:

Այս առումով ունենք որոշ նկատառումներ բարբառախոս վայրերի ընտրության, դասավորության, բարբառային հատկանիշների առանձնացման ու գնահատման չափանիշների, համեմատության եզրի

---

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 8:

և մասնակի դեպքերում՝ նաև որոշ մեկնաբանությունների վերաբերյալ: Նախ՝ համեմատության եզրի մասին: Բարբառագիտական ուսումնասիրություններում բարբառային միավորների դասակարգման համար սովորաբար ընդունվում է համեմատության որոշակի եզր, չափանիշ: Այդ եզրի հետևողական պահպանումը անհրաժեշտ է լեզվական կառուցվածքի բոլոր մակարդակների ուսումնասիրման դեպքում: Մակայն մեր բարբառագիտական նախընթաց գրեթե բոլոր ուսումնասիրություններում այդ սկզբունքը հետևողականորեն չի կիրառվել: Հնչյունական համապատասխանությունների քննության դեպքում իբրև համեմատության եզր վերցվել է գրաբարյան համակարգը, իսկ ձևաբանականի դեպքում՝ արդի գրական լեզուներից որևէ մեկը, որը ոչ միայն խախտում է ուսումնասիրման հայեցակետերի միասնականությունը, այլև ճիշտ չի արտացոլում դասակարգվող միավորների հարաբերություններն ու դրանց ծագումնաբանական նախահիմքերը: Խուսափելու համար այդպիսի սահմանափակումներից Ջահուկյանը փորձում է բարբառային հատկանիշների բացառումով հասնել մի «... վերացական, ոչ բարբառային վիճակի, որը կբնութագրվի բոլոր դեպքերում որպես ոչ նշանակիր անդամ»<sup>10</sup> և կունենա միայն զրո նիշեր, իսկ գրական լեզուներն ու բարբառները՝ նաև դրական նիշեր՝ մի քանիսից մինչև մի քանի տասնյակ: Բայց ամբողջ հարցն այն է, թե բարբառային հատկանիշներն ինչպե՞ս են առանձնացվում, ինչի՞ հիման վրա: Չէ՞ որ, ասենք, երբ առաջին ցուցակի (աղյուսակ 2) 21-րդ կետը ձևակերպվում է՝ ֆ-ի առկայություն, արդեն ենթադրվում է մի վիճակ, ուր ֆ-ն բացակայում է: Այստեղ արդեն ինքնին ենթադրվում է, որ այս հատկանիշի առանձնացումը կատարված է ըստ հին հայերենի շփականների համակարգի: Կամ՝ նույն աղյուսակի 15-րդ կետը ձևակերպված է այսպես. «Բառասկզբում (ձայնավորից առաջ) գրական լեզուների համեմատությամբ հավելական շնչի (հ, հ>խ, այլև Կ-ի առկայություն. ազի (~հազի, հաքի, հնաքի)...»: համեմատության եզրը այստեղ ևս ենթադրվում է, այն է՝ արդի գրական լեզուներից որևէ մեկը:

Եվ, վերջապես, «բարբառային հատկանիշ» հասկացությունն ինքնին ենթադրում է ոչ բարբառային լեզվավիճակներ, որոնց հարաբերությամբ էլ առանձնացվում են այդ հատկանիշները: Այսինքն՝ այսպես թե այնպես ոչ բարբառային վիճակը, որը, ըստ հեղինակի, կբնութագրվի միայն զրո նիշերով, հնարավոր չէ ենթադրել առանց որևէ չափանիշի: Համաժամանակյա դասակարգման համար, ինչպես բարբառային հատկանիշներն են առանձնացված ըստ բարբառների արդի վիճակների, այնպես էլ, մեր կարծիքով, համեմատության եզր կարելի է ընդունել գրական արդի լեզուներից որևէ մեկը և այն հետևողականորեն

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 40:

րեն պահպանել լեզվական կառուցվածքի բոլոր մակարդակների քննության դեպքում:

Հատկանիշներն առանձնացնելիս հեղինակը խուսափում է ժամանակային հաջորդականություն ենթադրող ձևակերպումներից և ծագում-հանգում (> և <) ցույց տվող նշաններից: Այս դեպքում նախընտրում է ժամանակային չեզոքություն արտահայտող «համապատասխանում է, ... դիմաց առկա է» արտահայտություններ և օգտագործում է ալիքաձև (~) նշան: Որոշ անհետևողականություն նկատելի է նաև այս դեպքում: Այսպես օրինակ՝ 2-րդ ցուցակի 34-րդ հատկանիշը (աղյուսակ 3) ձևակերպված է «*Քմայնացած* ձայնավորների առկայություն (ü, ñ, ö, ni)», ճիշտ կլիներ թերևս՝ *քմային* ձայնավորների առկայություն, կամ նույն աղյուսակի 47-րդ կետը՝ «Շեշտակիր ո (o) -ի ապաշրթնայնացածություն (ո, օ~ա, է, ի, ը)», ձևակերպել՝ շեշտակիր շրթնային ձայնավորների դիմաց ոչ շրթնային ձայնավորներ (ա, է, ի, ը. խոռվ~խըռավ, խըռվ): Այս բոլոր դեպքերում զգացվում է նաև համեմատության եզրը, որն է գրական լեզուներից որևէ մեկը: Օրինակները կարելի է շարունակել. պարզապես նշենք, որ որոշ ճշգրտումներ կարելի է կատարել նաև հատկանիշների ձևակերպումների մեջ և խուսափել ընթացքայնություն, ժամանակային հաջորդականություն ցույց տվող արտահայտություններից:

Թերևս որոշ ճշգրտումներ կարելի է մտցնել նաև բարբառախոս վայրերի ընտրության ու դասավորության, հատկանիշների բնութագրման ու արժեքավորման, ինչպես նաև առանձնացված կենտրոնների ներքին փոխհարաբերությունների վերաբերյալ:

Նախ՝ բարբառախոս կենտրոնների ընտրության և դասավորության մասին: Ինչպես արդեն նշվել է, բարբառախոս վայրերը ընտրված են ըստ բնակավայրերի վարչատնտեսական ու պատմական նշանակության, ըստ այդ վայրերի բարբառային միավորների նկարագրվածության աստիճանի, ըստ մեծության ու հնության չափանիշների: Դասավորությունը կատարված է հիմնականում ըստ աշխարհագրական մերձավորության. երբեմն էլ որոշ վայրեր դասավորված են համապատասխան կենտրոնների մոտ ըստ այդ վայրերի լեզվական մերձավորության (այս վերջին դեպքում նկատի է առնված նաև ավանդույթը): Համաժամանակյա դասակարգման համար, կարծում ենք, ավելի ճիշտ կլիներ պահպանել աշխարհագրական մերձավորության սկզբունքը. այս դեպքում կբացահայտվեին նաև նախնական բնական տարածքների հետագա խախտումները և դրանց պատմական հիմքերը: Մ. Ասատրյանը անդրադարձել է նաև բարբառախոս վայրերի ընտրության անհամամասնությանը, ընտրության Ջահուկյանի իր իսկ չափանիշների խախտումներին, որի հետևանքով «...հեղինակի ուսումնասի-

րության ոլորտից դուրս են մնացել Ախալցխայի, Ախալքալաքի, Դիլիջանի, Շամշադինի, Իջևանի, Ստեփանավանի, Կիրովաբադի, Ալավերդու և մի շարք այլ մեծ բնակավայրերի խոսվածքները»<sup>11</sup>: Հասկանալի է, որ այս հանգամանքը կարող է խախտել դասակարգման ճշգրտությունը, քանի որ հնարավոր է՝ դուրս մնան որոշակի տարածվածություն և տարբերակիչ կարևոր նշանակություն ունեցող հատկանիշներ:

Թերևս որոշ վերապահությամբ պետք է մոտենալ նաև հատկանիշների ընտրության ու սրանց գնահատման չափանիշներին: Այսպես օրինակ՝ բաղաձայնական հատկանիշներն ընդգրկող ցուցակում (աղյուսակ 3) բարբառային հատկանիշներ են դիտված բառասկզբի պայթականների ու պայթաշփականների շնչեղ-խլությունը, շնչեղ-ձայնեղությունը, խլությունը, բայց չի ներառված նույն դիրքի ձայնեղությունը, որն ընդգրկում է և՛ արևմտյան (Պոլիս), և՛ արևելյան (Թբիլիսի, Ագուլիս, Մեդրի, Կարձևան) որոշ տարածքներ և տարբերակիչ կարևոր հատկանիշ է: Այստեղ նշենք, որ բառասկզբի խուլերի ձայնեղությունը և ձայնեղների խլությունը, որ նշված են առաջին ցուցակի (աղյուսակ 2) 3-րդ և 5-րդ կետերում, չեն կարող ընկալվել առանց ելակետային միավորների, առանց համեմատության եզրի (ո՞ր համակարգի տեղաշարժ-տեղափոխություն է այն): Նույն աղյուսակի 7-րդ կետում նշված ոչ բառասկզբի շնչեղ-խլությունը դիտված է բարբառային տարբերակիչ հատկանիշ, մինչդեռ նույն դիրքում ձայնեղների անտեղաշարժ բնույթը, որը, կարծում ենք, բարբառային շատ բնութագրական հատկանիշ է (մարդ՞ մարդ, շաբաթ՞շաբաթ, դդում՞դդում...), չի ընդգրկված: Առարկելի է նույն աղյուսակի 21-րդ կետի ձևակերպումը՝ ֆ-ի առկայություն: Համաժամանակյա դասակարգման համար ճիշտ կլինեն ֆ-ի բացակայություն ձևակերպումը, քանի որ ֆ-ն նոր բարբառներում գրեթե համահայկական ընդգրկում ունի: Կարելի է վերաձևակերպել նաև 24-րդ կետը. ոչ թե բաղաձայնահաջորդ ն-ի պահպանվածություն, այլ՝ միավանկ բառերի բաղաձայնահաջորդ դիրքի ն-ի առկայություն (բերված ձևակերպման մեջ ևս լրելային ենթադրվում է համեմատության եզրը, որն է հին հայերենը): Հատկանիշների 2-րդ ցուցակում կարելի է միավորել և ընդհանուր հատկանիշ դիտել 31-րդ և 32-րդ կետերի հատկանիշները՝ իբրև ե-ի և ո-ի բարձրացող-երկբարբառային արտասանություն: Նույնը նաև՝ 35-րդ, 36-րդ, 37-րդ հատկանիշները. ետնալեզվային **ա, օ, ու**-ի դիմաց առաջնալեզվային ձայնավորներ՝ **ա, օ, ու**:

Երրորդ ցուցակի (աղյուսակ 4) անվանական հատկանիշների մեջ կարելի է առանձնացնել **-վի, -տի, -նի** պարզ հոգնակերտների առկայությունը, որը բարբառային բնութագրական հատկանիշ է՝ առկա

<sup>11</sup> Մ. Ասատրյան, Հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1982, № 1, էջ 86:

սահմանափակ տարածքներում:

Կարելի է և պետք է հավելել հոլովական առկայացական և չեզոքանվանողական հիմքերի առկայությունը որոշ տարածքներում, որով տարբերակվում են խոսքային-իրատրական և լեզվական-անվանողական ձևերը: Դերանվանական հատկանիշների մեջ կարելի է ներառել դերանունների իրանիշ դասի *ի* արմատական տարրի պահպանվածությունը նոր իմաստավորումով, որը բնորոշ է Անտիոքի տարածքի բարբառային միավորներին (Սվեդիա-Քեսաբ):

Չորրորդ ցուցակի (աղյուսակ 5. բայական հատկանիշներ) վերաբերյալ արժեքավոր դիտողություններ է արել Մ. Ասատրյանը վերոնշյալ հոդվածում: Բայական հատկանիշներից 92-րդը ձևակերպված է այսպես. «Պիտի եղանակիչի սղված ձև». ներքին տարբերակմամբ՝ «երկրորդ վանկի սղում (*պի, պ, բի, բ*), առաջին վանկի սղում (*տի, տ, ղի, ղ*) » (էջ 101-102): Հայտնի է, որ սրանց, հատկապես առաջին վանկի սղումով *տի, տեմ* ձևերի նախադաս և հետադաս կիրառություններն ունեն տարածքային որոշակի բաշխումներ և դիմային ձևերի կազմության առանձնահատկություններ, որոնք նույն հատկանիշի տակ միավորվել չեն կարող:

Ընտրված հատկանիշների գնահատման չափանիշների վերաբերյալ արժեքավոր դիտողություններ է արել Լ. Հովսեփյանը վերոնշյալ գրախոսության մեջ: Նկատի ունենալով ներքին տարբերակումներ արտահայտող հատկանիշների հավասարեցումը աղյուսակների 25-րդ, 50-րդ, 75-րդ, 100-րդ կետերում նշված հատկանիշներին (երկու դեպքում էլ դրանք ներկայացված են նույնատիպ նշաններով), նշում է, որ այս վերջիններից յուրաքանչյուրն ունի ինքնուրույն հատկանիշի արժեք, ուստի, ի տարբերություն նախորդների, պետք է գնահատվեն ոչ թե 0,5, այլ մեկ ամբողջական միավորով: Նկատենք նաև, որ այդ կետերում նշված հատկանիշները թեև ունեն սահմանափակ տարածում, սակայն բարբառային տարբերակման համար երբեմն շատ ավելի կարևոր են, քան հիմնական հատկանիշների մեջ ընդգրկված որոշ հատկանիշներ:

Որոշ հակասություններ են նկատելի բարբառային միավորների ներկայացված հարաբերակցությունների մեջ: Տարբեր խմբակցությունների մեջ դասակարգված միավորները երբեմն ավելի քիչ հատկանիշներով են տարբերվում (ինչպես Վանը և Խոյը՝ ընդամենը 24 տարբերակիչ հատկանիշով), քան նույն խմբակցությանը պատկանող միավորները (ինչպես Քեսաբն ու Կարինը՝ 46 հատկանիշով, մինչդեռ Քեսաբն ու Երևանը, որոնք տարբեր խմբակցությունների միավորներ են, տարբերակվում են 37,5 միավորով):

Հավակնություն չունենալով անառարկելի համարել մեր այս նկատառումները՝ նպատակ ենք ունեցել պարզապես ներկայացնելու որոշ



հարցադրումներ Ջահուկյանի մշակած ու ներկայացրած դասակարգման առավել ճշգրտման ու անհրաժեշտ հավելում-փոփոխություններ կատարելու ուղղությամբ: Իսկ առաջադրված այս նոր սկզբունքն ինքնին հնարավորություն է տալիս ներկայացնելու և լուծելու համաժամանակյա և պատմական բարբառագիտության շատ խնդիրներ ու նոր հեռանկարներ է բացում հայ բարբառագիտության հետագա զարգացման համար:

**Բանալի բառեր** - *Գ. Ջահուկյան, հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգում, բարբառային միավորների ստորակարգություն, խոսվածք, բարբառ, միջակաօղակ, բարբառային հատկանիշ, բարբառախումբ, բարբառախոս վայրեր, մակարդակային ցուցիչ*

**ГАХТУИ ГАНАНЯН – Классификация армянских диалектов по многим признакам.** – Принцип классификации диалектов по целому ряду признаков был выдвинут академиком Г. Джаукяном в 70-е годы прошлого века. В отличие от классификации по одному признаку, он позволяет установить точные количественные критерии для единиц диалектной иерархии и чётко выявить взаимоотношения между диалектами. При такой классификации определяются также промежуточные звенья, содержащие переходные черты. Сложные и разнообразные взаимоотношения диалектов требуют некоторых уточнений в выборе и количестве признаков, по которым они классифицируются. В силу основного своего принципа классификация по многим признакам открывает новые перспективы как в изучении диалектов, так и в других областях арменистики.

**Ключевые слова:** *классификация диалектов по многим признакам, иерархия диалектных единиц, говор, переходное звено, группа диалектов, территории диалектов, уровень показатель*

**GAGHTUHI HANANYAN – The Multi-feature Classification of Armenian Dialects.** – In the seventies of the previous century, academician G. Jahukyan put forward the principle of multi-feature classification of Armenian dialects. In contrast to mono-feature classification, the given approach defines exact mathematical indices which not only demarcate the subordination limits of dialectal units but also reveal the interrelationships of Armenian dialects. The intermediary chains are distinguished which express transitional features. As the problem of the Armenian dialects is complex and diverse, we can specify the choice and number of about 100 characters. The main principles of multi-feature classification open new horizons not only for the research of the Armenian dialects but for the studies of the Armenian language as well.

**Key words:** *G.Jahukyan, multi-feature classification of Armenian dialects, dialectal units of subordination, vernacular, intermediary chains, dialect group, dialectal features, dialectal regions, level index*

# ՄՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

## ՆԵԿՏԱՐ ՄԻՍՈՆՅԱՆ

### 1. Քերել/քորել/քերծել/քերթել/քարթ

Հ. Աճառյանը հայերեն արմատական բառարանում **քեր** «քերած կամ գրած բան», որից՝ **քերել** «քերել, քորել, սկրդել», համարում է բնիկ բառ՝ հ.-ե. \*sqer- կամ \*qer- «կտրել, ճեղքել» արմատից: Նա բերում է հ.-ե. մյուս լեզուների՝ այդ արմատից ծագած ձևերը. սանսկ. krati, krnoti «սպանել, վիրաւորել, ոչնչացնել», հուն. **κείρω** «կտրել, մկրատել, խուզել», լիթ. skiriù, skirti «անջատել», ինչպէս նաև -t աճականով ձևերը՝ լիթ. kertù «կտրատել», skirti «բաժանել» և այլն<sup>1</sup>: **Քորել** բառը համարում է նույն արմատի՝ տարբեր ձայնավորմամբ կազմված ձև: **Քերթ** «կաշին հանելը», որից՝ **քերթել** «աստիկ քերել, կաշին քերթել», և **քերծ** «տաշել, քերթել», որից՝ **քերծել**, նույնպէս համարում է հ.-ե. \*sker-, \*ker- նախաձևից -թ և -ծ աճականներով կազմված արմատներ<sup>2</sup>: Գ. Չահուկյանը ևս ստուգաբանական բառարանում **քեր**, **քոր**, **քերթ**, **քերծ** արմատները ծագած է համարում հ.-ե. \*sqer-, \*qer- նախաձևից և բերում է հին հնդկերենի krati և հունարենի **κείρω**՝ այդ արմատին հանգող ձևերը՝ ավելացնելով նաև հին սլավոներենի skora «մորթ, կաշի», լատ. cortex «կեղև», հին իռլանդերենի scaraim «բաժանել» բառերը<sup>3</sup>, իսկ «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ նշում է \* (s) ker- նախաձևի \*ker-/\*kor- տարբերակները **քերել/քորել**, \*kerdie-ն՝ **քերծել**, և \*kerth-ը՝ **քերթել** բառերի համար<sup>4</sup>:

Յ. Պոկոնոնու բառարանում \* (s) ker-, (s) kerə-, (s) krē- «կտրել» նախաձևի՝ հնդեվրոպական լեզուներում պահպանված արմատների մեջ նշվում է նաև հայ. **քորել**, հուն. **κείρω**, հին իռլ. scar (a) im «կտրել, առանձնացնել», կիմր. ysgar «բաժանում, առանձնացում», հին իսլ. skera «կտրել, առանձնացնել», բերվում են նաև այս արմատի -d- և -t- աճականով ձևերը, ինչպէս հայերենում՝ **քերթել**, լիտվ. skiriù, skirti «կտրել, բաժանել», լատիշ. škirt «կտրել, բաժանել», հին

<sup>1</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Եր., 1979, էջ 570-572 (այսուհետև՝ ՆԱԲ):

<sup>2</sup> Տե՛ս ՆԱԲ, էջ 572-573:

<sup>3</sup> Տե՛ս Գ. Չահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 781-782 (այսուհետև՝ ՆԱԲ):

<sup>4</sup> Տե՛ս Գ. Չահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 148 (այսուհետև՝ ՆԼՊ):

եկալավ. *na-črētati*, ռուս. եկալավ. *črēt*, *črēsti* «կտրել» իմաստներով<sup>5</sup>:

Ռուս լեզվաբան Լ. Վ. Կուրկինան «Սլավոնական ստուգաբանություններ» հոդվածում անդրադառնում է սլավեներենի *škr̥t*, սեռ. հոլով՝ *škr̥ta* **քերթվածք** բառին՝ գրելով, որ դրա ծագման մասին հստակ կարծիք չկա: Նա գրում է. «Այս բառի (*škr̥t*) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն պատկանում է նախասլավոնական բառապաշարի հին շերտին և ամենայն հավանականությամբ հ.-ե. \* (s) *ker-* «կտրել» արմատի արտացոլումն է»<sup>6</sup>: Այնուհետև նա ավելացնում է, որ այդ արմատը -t և d- աճականներով զուգահեռներ ունի սլավոնական շատ լեզուներում, ինչպես եկալավ. *чръмж*, *чръсму* «կտրել», ռուսերեն *черта*<sup>7</sup>: Լ. Կուրկինան վկայակոչում է նաև սլավեներենի ստուգաբանական բառարանի հեղինակ Մաքս Պլետերշնիկին՝ նշելով *škr̥ta* «քարթ, քերթ, քերթվածք (*зазубрина, зарубка, насечка*) » բայը՝ *škr̥tati* «մանր կտրատել, քերթվածք անել (*мелко резать, делать зарубки, насечки*) »<sup>8</sup> իմաստներով:

Լ. Կուրկինան գրում է, որ \* (s) *kr̥t-* արմատից կազմված մեծաթիվ բայական և անվանական կազմություններ կան չեխերենում, որոնք այդ արմատի ավելի ճշգրիտ բառաիմաստային համապատասխանություններն են. հմմտ. չեխերեն *krtati/škr̥tati*, որն ունի «քերծել, ճանկոել, անրնթեռնելի գրել (*царапать, скрести, писать неразборчиво*) » իմաստները<sup>9</sup>: Լ. Կուրկինան հանգում է այն եզրակացության, որ այդ նախաձևից ծագած բառերն ունեն իմաստային ընդհանրություն՝ «ճեղքել, կտրել այնպես, որ առաջանան քարթեր», դրանից էլ բնականաբար զարգացել են «քերծել, քերել, ճանկոել, քերծեր անել»։ Վերջինս հավանաբար հիմք է հանդիսացել «գրելու գործընթաց» իմաստն արտահայտելու համար: Լ. Կուրկինան «*черта*» բառի նշանակության համար հղում է նաև Մ. Ֆասմերին: Ֆասմերի բառարանում *черта* բառահոդվածում բերվում են նաև ուկրաիներենի, բուլղարերենի ձևերը՝ *черта*, եկեղեցալավ. *чърта*, հին սլավ. *чрътати*, և նշվում են հունարենի *ἐγ-χάρᾶσσω*, ատտիկյան *ἐγχαράττω* ձևերը՝ «կտրել, զծել» իմաստով, ինչպես նաև հին չեխ. *črtadlo* բառը՝ «հարմարանք՝ գործիք, որով կտրում են»<sup>10</sup> իմաստով: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Պոկորնին \* (s) *ker*, (s) *kerə-*, (s) *krē-* նախաձևից ծագած բառերի մեջ նշում է նաև հրգ. *scar*, *scaro* «զուրանի խոփ» իմաստով<sup>11</sup>:

<sup>5</sup> Տե՛ս **J. Pokorny**, *Indogermanisches Etymologisches Wörterbuch*, I band, Franke Verlag Bern und München, 1959, էջ 938-942:

<sup>6</sup> **Л. В. Куркина**, *Славянские этимологии*. IV. Этимология. 1975. М., 1977, էջ 13:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 14:

<sup>10</sup> **М. Фасмер**, *Этимологический словарь русского языка*. Т. 4. М., 1987, с. 348.

<sup>11</sup> Տե՛ս **J. Pokorny**, նշվ. աշխ., էջ 939:

Իմաստային ճիշտ նույնպիսի զարգացումներ է ունեցել \*sker- արմատը հայերենում: Հայտնի է, որ հայերենում ևս **քերթել** բայը ունի նաև «բանաստեղծել, ստեղծագործել» իմաստը: Այդ իմաստը նշվում է և՛ հայերենի ստուգաբանական բառարաններում (Հ. Աճառյան, Գ. Ջահուկյան), և՛ գրաբարի բառարաններում:

Հ. Աճառյանը **քերել** բայի իմաստների մեջ «քերել, քորել» բառերից հետո նշում է նաև **սկրդել** բայը: **Սկրդել** բառը Աճառյանի արմատակաՆում չկա, բայց կա **սկրթել**, որը նա համարում է անստույգ ծագման բառ, բացատրում է՝ «... «մորթը պլոկել, լոպկել հանել», իբր միջին հյ. բառ ունի Նորայր, Բառ ֆրանս. 436ա: Կենդանի է արդի գաւառականների մէջ»<sup>12</sup>: Գ. Ջահուկյանը հայերեն ստուգաբանական բառարանում նշում է **սկրթել** բառի իմաստները՝ «մորթը պլոկել, քերթել», և ավելացնում է. «Ծագումն անհայտ է (կապ ունի՞ **քերթել**-ի հետ)»<sup>13</sup>: Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանում» **սկրդել** բառը բացատրվում է «թեթևակի, երեսանց քերել»<sup>14</sup>: Յ. Գայայեանի բառարանում **սկրթել**-ը բացատրվում է «քեղրթել, դալար ճիւղը կեղեւել, պոլոկել, լոպկել»<sup>15</sup>: Ե՛վ Է. Աղայանի, և՛ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բացատրական բառարաններում **սկրթել**-ի իմաստների մեջ առաջինը նշվում է «արմատախիլ անել», հետո միայն՝ «պոկոտել, երեսանց թեթև քերել, քերծել»<sup>16</sup>: Հետաքրքիր է, որ Լ. Կուրկինյան գրում է, թե բացառված չէ \* (s) krc- արմատից ծագած բառերի շարքին պատկանի նաև krtice ձևը՝ «արմատախիլ արված (արմատներ) (выкорчеванные корни)» իմաստով<sup>17</sup>: Այսպիսով, կարելի է ասել, որ Ջահուկյանի՝ որոշ կասկածով արած ենթադրությունը՝ **սկրթել**-ի՝ **քերթել**-ի հետ կապ ունենալու մասին, կարելի է համարել հաստատված:

Կարծում ենք, որ այս նույն \*sker-, \*ker- արմատին կարելի է հանգեցնել նաև հայերեն **քարթ** բառը: Բառը չկա ո՛չ Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի ստուգաբանական, ո՛չ գրաբարի, ո՛չ միջին հայերենի բառարաններում: Է. Աղայանի բացատրական բառարանում **քարթ** բառի իմաստն է «փայտի՝ մետաղի ևն վրա սուր գործիքով արված կտրվածք՝ խազ»<sup>18</sup>: Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բառարանում **քարթ**-ը բացատրվում է «փայտի վրա դանակով արված խազ կամ փոք-

<sup>12</sup> ՀԱԲ, հ. 4, էջ 232:

<sup>13</sup> ՀԱԲ, էջ 684:

<sup>14</sup> Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 2009, էջ 705 (այսուհետև՝ ԱՀԲ):

<sup>15</sup> Յ. Գայայեան, Բառարան գանձարան հայերէն լեզուի, Գահիրէ, 938, էջ 450:

<sup>16</sup> Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1311 (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ժամանակակից հայերենի բացատրական բառարան, հ. 4, Եր., 1980, էջ 310 (այսուհետև՝ ԺՀԲԲ):

<sup>17</sup> Տե՛ս «Этимология, 1975», М., 1977, էջ 14:

<sup>18</sup> ԱՀԲԲ, էջ 1561:

րիկ կտրվածք»՝ բարբառային նշումով<sup>19</sup>: Ճիշտ նույնպիսի իմաստներ է նշում Լ. Կուրկինյան սլավոնական լեզուների համար: Հայերենում կա **քարթեղ** բառը, որը Ս. Մալխասյանը բացատրում է «1. յեսանաքար, 2. ամենանուրբ՝ բարակ գծերով խարտոց»<sup>20</sup>: Հ. Աճառյանը գավառական բառարանում բերում է Ղարաբաղի բարբառի **քարթեղ** բառը՝ 1. «յեսանաքար, սրոց, 2. ամենափոքր ծակերով խարտոց» իմաստներով<sup>21</sup>: Այս բառը նույն իմաստներով բերված է նաև Լեզվի ինստիտուտի հրատարակած բարբառային բառարանում<sup>22</sup>: Ղարաբաղի բարբառի բառարանում բերվում են **քարթեղ**, **քարթըղ** բառերը՝ «գործիքներ սրելու հարմարանք, բարակ խազերով խարտոց»<sup>23</sup>: Նույն բառարանում բերվում է նաև **քարթմա** բառը՝ «հողը փխրեցնելու գործիք, որ բաղկացած է երկար ձողից, որի ծայրին ամրացված է 10-20 սմ լայնությամբ մետաղե կեռ շեղք»<sup>24</sup>: Հետաքրքիրն այն է, որ Լ. Կուրկինյան իր հոդվածում բերում է սերբախորվաթերենի՝ skrt- արմատից ծագած oskrt, սեռականը՝ oskrti, որն ունի «հատիչ, քարտաշի մուրճ (резец, молоток каменотеса)» իմաստները: Նա իրավացիորեն նշում է նաև, որ իմաստային առումով «կտրել» նշանակությամբ արմատից բնականաբար կարող էին ծագել կտրող գործիքների անվանումներ, և բերում է ռուսերեն чертец և чертало բառերը՝ нож, чересло «դանակ, գութանի խոփին նախորդող կտրիչ» իմաստներով<sup>25</sup> (հմմտ. Ղարաբաղի բարբառի **քարթմա** բառը գրեթե նույն իմաստով, ինչպես նաև Պոկոռնու՝ վերը նշված հրգ. scar, scaro, անգլաքառ. scēar «գութանի խոփ»): Անգլերենի ստուգաբանական բառարանում հ.-ե. \*sker- նախաձևից ծագած արմատների մեջ նշվում են հին անգլերեն scear, scær ձևերը՝ «գութանի խոփ» իմաստով<sup>26</sup>:

Լ. Կուրկինյան, նկատի ունենալով սլավոնական լեզուներում s-ով և առանց s-ի ձևերի առկայությունը (krtati-škrati), ենթադրում է, որ բառակզբի s-ը այսպես կոչված սահող s-ը (s-mobile) կարող է լինել<sup>27</sup>: Կարելի է ենթադրել, որ նմանատիպ հարաբերություն գոյություն ունի նաև հայերեն **քերթել**, **քերծել** և **սկրթել** բառերի միջև:

Այսպիսով, կարծում ենք, կարելի է եզրակացնել, որ հ.-ե. \*sker-, \*ker- արմատը զբաբարում և հայերենի բարբառներում արտացոլվել է **քոր**, **քեր**, **քերթ/քերծ**, **քարթ**, **քարթեղ**, **քարթմա** տարբերակներով՝ հ.-ե. ձայնդարձի երեք աստիճաններով, և դրսևորում է իմաստային այնպի-

<sup>19</sup> Տե՛ս ժՀԲԲ, հ. 4, էջ 723:

<sup>20</sup> Ս. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Եր., 1944, էջ 562:

<sup>21</sup> Տե՛ս Հ. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 1103:

<sup>22</sup> Տե՛ս «Հայոց լեզվի բարբառային բառարան», հ. 7, Եր., 2012, էջ 113:

<sup>23</sup> Ա. Մարգարյան, Ղարաբաղի բարբառի բառարան, Եր., 2013, էջ 790:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 809:

<sup>25</sup> Տե՛ս Լ. В. Куркина, նշվ. աշխ., էջ 17:

<sup>26</sup> Տե՛ս www.etymonline.com

<sup>27</sup> Տե՛ս Լ. В. Куркина, նշվ. աշխ., էջ 13:

սի անցումներ, որոնք իրենց մերձավոր զուգահեռներն ունեն սլավոնական լեզուներում և ռուսերենի բարբառներում:

## 2. Աղիփ, գաղփուն, գաղփաղփուն

**Աղիփ** բառի մասին Հ. Աճառյանը արմատական բառարանում գրում է, որ գործածված է միայն մեկ անգամ՝ «Կառուարն տեղեակ պնդեցեք և կազմեցեք զկառս իւր, զի մի՛ անկեալ և գաղիփ առցէ» (Մեծոբեցի), և համարում է անհայտ ծագման արմատ: Աճառյանը բերում է **աղիփ առնուլ**, **գաղիփ առնուլ** ձևերը և բացատրում «տկարանալ, խախտիլ, վնասիլ», կրկնությանը՝ **գաղփաղփուն** «տկար, խախուտ, խարխուլ», **գաղփումն** «սահիլ, վայր ընկնիլ»<sup>28</sup>: Գրաբարի գրեթե բոլոր բառարաններում բերվում են **աղիփ, գաղփուն, գաղփաղփուն** բառերը՝ «թույլ, տկար, խախուտ, խարխուլ, անհաստատ, երերուն» իմաստներով:

Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ խոսում է **աղփ-ուն** «տկար» բառի մասին և հավանական է համարում նրա ուրարտական ծագումը<sup>29</sup>, բայց «Очерки дописменного периода армянского языка» աշխատության մեջ **աղիփ** բառը նա ծագած է համարում հ.-ե. \*lei- նախաձևից (\*el-ei -ից) և համեմատում է հին անգլերենի և հին սաքսոնների lef (\*lei-bho-) «թույլ, տկար», լիտվերենի liebas «նիհար, բարակ», հին սլավոնների libevъ, libavъ, libivъ (\*lei-bho-) «թույլ» ձևերի հետ<sup>30</sup>, իսկ «Հայերեն ստուգաբանական բառարանում» **աղիփ** բառի համար որոշ կասկածով կանխադրում է \*alp- նախաձևը՝ «փոքր, թույլ» իմաստով, և բերում է զուգահեռներ՝ հինդլ. álpa, alpaka «փոքր, քիչ, սակավ», լիտվ. alpti «ուշաթափվել»<sup>31</sup>: Յ. Պոկորնու բառարանում \*alp- նախաձևից ծագած բառերի շարքում նշվում են հինդլ. álpa-, alpaka-, լիտվ. alpstù, alpaũ, alpti «ուշաթափվել», alpùs «թույլ, տկար, անուժ», հուն. ἀλαπαδνός (Էսքիլեսի մոտ՝ λαπαδνός) «թույլ, անուժ», ἀλαπάζω «հյուծել, ուժասպառ անել», λαπαρός «նիհար, վտիտ», իերթ. al-pa-an-da- (alrant-) «հիվանդ, թույլ», բերվում են թոխ. A lalamsk-, թոխ. B lalamske ձևերը՝ «թույլ, քնքուշ, բարակ, փխրուն» իմաստներով<sup>32</sup>:

Յ. Պոկորնին բերում է նաև \*lěb-, \*lǫb-, \*lāb-, \*l<sub>e</sub>b- նախաձևերը՝ «թույլ, թույլ կախվել» իմաստով. հնդեվրոպական լեզուներում կան հետևյալ զուգահեռները՝ հուն. λοβός «ականջի բլթակ», լատ. labō, -āre «տատանվել, տարուբերվել», lapsus «սահել, ընկնել», իսլանդ. lapa «թույլ կախվել», նվգ. laff՝ «թույլ», լիտվ. slobstù, slōbti՝ «թուլանալ», արևելալիտվ. slōbnas «թույլ, անգոր», լատիշ. slābēt «սաստիկ թուլանա-

<sup>28</sup> ՀԱԲ, հ. 1, էջ 131:

<sup>29</sup> Տե՛ս ՀԼՊ, էջ 437:

<sup>30</sup> Տե՛ս Գ. Ժայգյան. Очерки дописменного периода армянского языка. Ер., 1967, էջ 125:

<sup>31</sup> ՀԱԲ, էջ 37:

<sup>32</sup> Տե՛ս Ե. Սոկորնի, նշվ. աշխ., էջ 662:

լ», հին եկալավ. *slabъ* «թույլ, անուժ, տկար», մվգ. *erlassen* «թուլանալ», նվգ. *laff* «ուժասպառ, թույլ»<sup>33</sup>:

Կյոբլեր Գերհարդի՝ գերմաներենի ստուգաբանական բառարանում *schlafen* «թույլ, տկար, նիհար» բառի համար բերվում են մվգ. *slafen*, հվգ. *slafan*, հին սաքս. *slapan* ձևերը, որոնք հանգեցվում են գերմ. \**slepan*-ին, որի համար կանխադրվում են հ.-ե. \**lab-*, \**slab-*, \**leb-*, \**lob-* «թույլ, թույլ կախված լինել» (*schlaf hangen*) նախաձևերը<sup>34</sup>:

Մլավոնական լեզուների ստուգաբանական բառարանում, որն ընդգրկում է հին սլավոներենի բառապաշարը, բերվում է *labavъ* բառը՝ «թույլ, տկար» իմաստով, որը սերբախորվաթերենում ունի *labav* ձևը՝ «անկատուն, թույլ» իմաստով. վերջինիս ելակետային ձևն է համարվում *hlaba*<sup>35</sup>:

Օ. Տրուբաչևը, որն այդ բառարանի խմբագիրն է, գրում է, որ այս բառը կարելի է կապել \**labati* արմատի հետ՝ «ագահաբար խժռել, ուտել» նշանակությամբ՝ - (a) *vъ* ածանցով<sup>36</sup>: Կարծում ենք, որ այս երկու արմատները համեմատելը այնքան էլ հավանական չէ, մանավանդ եթե նկատի ունենանք բառի իմաստային կողմը:

Մ. Ֆասմերի բառարանում բերվում են սլավոնական լեզուների ձևերը՝ ուկր. *слабій*, բելոռուս. *слабы*, հին ռուս. *слабъ*, հին սլավ. *слабъ*, բուլղ. *слаб*, սլովեն. *sláb*, *slába*, չեխ. *slabý*, *sláb* «թույլ, թուլանալ» իմաստներով, և դրանք համեմատվում են լիտվ. *slobti*, *slobstu*, *slobau* «թուլանալ, գիտակցությունը կորցնել», ինչպես նաև վերը նշված գերմանական լեզուների ձևերի հետ<sup>37</sup>:

Կարծում ենք, որ հայ. **աղիփ** բառի համար ավելի հավանական է կանխադրել Յ. Պոկոռնու բառարանում բերված \**lěb-*, *lōb-*, *lāb-*, *lēb-* նախաձևը, որի՝ հնդեվրոպական մյուս լեզուներում պահպանված զուգահեռները և՛ իմաստով, և՛ հնչյունական կազմով, թվում է, ավելի մոտ են հայերեն բառին, և հայերենի **աղիփ**, **զաղիփ** ձևերը հավանաբար ավելի ճիշտ կլինի հանգեցնել վերը նշված նախաձևերին: Ինչ վերաբերում է բառակզբի **ա**-ին, ապա այն կարող է հավելվածային բնույթ ունենալ, ինչպիսիք են **աղանձ**, **ամիս**, **անուն**, **աստղ** և մի քանի այլ բառերի բառակզբի ձայնավորները, որոնք չկան հ.-ե. մյուս լեզուներում, կամ առկա են միայն հայերենում և հունարենում:

Կարելի է համեմատություն անցկացնել հայերենի **աղիփ**, **զաղիփուն** ձևերի և սլավոնական լեզուների նշված ձևերի միջև, մանավանդ եթե նկատի ունենանք հայերենի **զ**-ով և սլավոնական լեզուների **s-**, **x-**, **h-**ով ձևերը:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 655-657:

<sup>34</sup> Տե՛ս **Köbler Gebhard**, *Deutsches Etymologisches Wörterbuch*, Tübingen, 1995, էջ 356:

<sup>35</sup> Տե՛ս «Этимологический словарь славянских языков». Прааславянский лексический фонд, 1967, выпуск 14, էջ 6:

<sup>36</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>37</sup> Տե՛ս **М. Фасмер**. Указ. соч. Т. 3. М., 1987, էջ 664:

**Բանալի բառեր** – ստուգաբանություն, հնդեվրոպական նախալեզու, հ.-է. նախաձև, ձայնդարձ, արմատ, ածական, բարբառ

**НЕКТАР СИМОНЯН – Этимологические заметки.** – В статье рассматриваются армянские корни բեր, քր, восходящие к индоевропейской праформе \*(s)ker-, (s)kor-, (s)krē-. Приводятся формы с детерминативами -d и t-(բերթել, քրծել) и соответствующие корни других индоевропейских языков. Выдвигается предположение, что слова քրթ (зазубрина), քրթել (точило), քրթաւ (лемех, чересло), существующие в армянских диалектах, также восходят к этой праформе. Помимо того, рассматривается слово աղի (զաղի/զաղիաղիում) и выдвигается предположение, что оно восходит к индоевропейской праформе \*lēb-, lōb-, lāb.

**Ключевые слова:** *этимология, индоевропейский праязык, индоевропейская праформа, аблаут, корень, детерминатив (определитель корня), диалект*

**NEKTAR SIMONYAN – Etymological Observations.** – The Armenian roots բեր, քր dating back to the Indo-European protoform \*(s)ker-, (s)kor-, (s)krē- are studied in the article, the forms with determinants -d and t-(բերթել, քրծել) and corresponding roots of other Indo-European languages are introduced. It is supposed, that the words քրթ (score/зазубрина), քրթել (grindstone/точило), քրթաւ (plugshare / лемех, чересло) existing in the Armenian dialects, also date back to the Indo-European protoform. The Armenian root աղի (զաղի/զաղիաղիում) as well is studied and it is supposed for it Indo-European protoform \*lēb, lōb-, lāb.

**Key Words:** *etymology, Indo-European parent language, Indo-European archetype, ablaut, root, root determinative, dialect*



---

## Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆԸ ԲԱՅԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԸՄԲՈՆՄԱՆ ՄԱՍԻՆ

### ԱՆԱՀԻՏ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

Ակադեմիկոս Գ. Ջահուկյանը բային բնորոշ է համարում դասի, տիպարի, սեռի, ժամանակի, կերպի, եղանակի, դեմքի և թվի քերականական կարգերը: Իր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները»<sup>1</sup> աշխատության մեջ հեղինակը ներկայացնում է բայական կարգերի ձևախմբատային առանձնահատկությունները՝ որոշակի հատկանիշների առանձնացմամբ, որոնք հիմք ընդունելով՝ նա ձևակերպում է տվյալ կարգի քերականությունները ներկայացնող կադապարներն ու մասնակադապարները:

Գ. Ջահուկյանը բայական կարգերը բնութագրում է 3 հատկանիշներով. 1. **Ներհատկություն կամ բայականություն**, որոնք բնորոշ են միայն բային, ուստի այս հատկանիշը բնորոշ է սեռի, տիպարի, ժամանակի, կերպի կարգերին: 2. **Առարկայականություն կամ բնութագրականություն**, որն արտահայտում է բայի և անվան (գոյականի և դերանվան) առնչությունները, ուստի և այն բնորոշ է սեռի, տիպարի, դեմքի, դասի կարգերին: 3. **Իրադրականություն կամ ստորոգություն, անինքնակայություն**, որը արտահայտում է ստորոգման կարգը, այսինքն՝ նկատի ունի հաղորդակցման պլանը, ուստի այն բնորոշ է սեռի, ժամանակի, դեմքի և եղանակի կարգերին: Արտահայտության պլանում հեղինակը տարանջատում է հիմքակազմ մասնիկները, որոնք հատուկ են միայն բայական կարգերին, և վերջամասնիկներն ու վերջավորությունները, որոնք բնորոշ են անվանը և բային: Բայական կարգերի քննությունը կատարվում է որոշակի սկզբունքով, ըստ որի՝ հաջորդող քերականական կարգն անմիջականորեն արտացոլում է նախորդի հետ ունեցած առնչությունները: Ըստ այդմ՝ բայական կարգերը Գ. Ջահուկյանը քննում է հետևյալ հաջորդականությամբ՝ եղանակի, կերպի, տիպարի, սեռի, ժամանակի, դեմքի և թվի կարգեր: Եղանակի բայական կարգը եղանակավորման (модальность) լեզվական կարգի դրսևորումներից մեկն է: Եղանակային եզրերը հեղինակը բնորոշում է 2 հատկանիշով՝ ուղղվածություն և ցանկականություն (էջ 248): Ըստ այդմ՝ 1. Հրամայականն ունի ուղղվածություն և ցանկականություն: 2. Ըղձականն ունի

---

<sup>1</sup> Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974: Այս գրքից մեջբերումների էջերն այսուհետև կնշվեն տեքստում՝ փակագծերի մեջ:

ցանկականություն և չունի ուղղվածություն: 3. Սահմանական ունի ուղղվածություն և չունի ցանկականություն: 4. Ենթադրականը չունի վերոհիշյալ 2 հատկանիշներից և ոչ մեկը: Գ. Ջահուկյանը եղանակի կարգի հետևյալ սահմանումն է տալիս. եղանակը ցույց է տալիս «հաղորդողի վերաբերմունքը դեպի հաղորդումը, հաղորդման և իրականության փոխհարաբերության նրա գնահատումը» (էջ 239):

Իմաստային դաշտում հեղինակն արժևորում է խոսողի և հաղորդման հարաբերակցությունը: Այս առումով հայ քերականագիտության մեջ եղանակի կարգի ըմբռնումները տարբեր են, սակայն խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ բոլոր դեպքերում համարվում է վճռորոշ: Այսպես, Ա. Այտընյանը գրում է. «Եղանակը կը ցուցընէ, թէ գործողութիւնն ինչ կերպով կը բացատրուի կամ զրցուի»<sup>2</sup>: Խոնարհման համակարգի արտահայտության պլանում տարբերակված եռակարգ մասնիկներից (նախամասնիկ, հիմքակազմ վերջամասնիկ, վերջավորություն) եղանականիշ է համարում նախամասնիկները: Համադրական կառույցներին հեղինակը բնորոշ է համարում չ և կ նախամասնիկները՝ իբրև եղանականիշներ: Ըստ այդմ՝ ըղձական ժխտականն ունենում է չ, պայմանական դրականը՝ կ, սահմանականի անցյալ կատարյալի ժխտականը՝ չ, իսկ հրամայականը չի ունենում կ և չ: Չ նախամասնիկն արտահայտում է ժխտման քերականական իմաստ, որը բնորոշ է բայի համադրական և վերլուծական կառույցներին: Ժխտման կարգը Գ. Ջահուկյանն անվանում է եղանակի կարգի ենթակարգ, որն ունի 2 եզր՝ ժխտական և ոչ ժխտական կամ հաստատական:

Հեղինակը եղանակի երկրորդ ենթակարգ է համարում վերաբերողական ենթակարգը, որը բուն եղանակային միավոր է և արտահայտվում է եղանականիշ թեքությունների միջոցով, որոնք են վերջավորությունները և հիմքակազմ տարրերը: Հարկադրական եղանակը Գ. Ջահուկյանի առանձնացրած եղանակային համակարգում չկա, որովհետև *պիտի* և *պետք է* եղանակիչ բայերով կազմված այդ ձևերը լեզվաբանը չի համարում հարացուցային միավորներ: Հայ քերականագիտության մեջ ենթադրական եղանակի միասնական ըմբռնում չկա, որոշ լեզվաբաններ այն բնորոշում են իբրև ենթադրական կամ պայմանական եղանակ<sup>3</sup>, ոմանք կ-ով բայաձևերը ներառում են սահմանական եղանա-

<sup>2</sup> Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 52: Տե՛ս նաև Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1931, էջ 300, Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Բ գիրք, Եր. 1961, էջ 21, Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 494, Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 194:

<sup>3</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 327, Ա. Ղարիբջյան, Հայոց լեզվի քերականություն, Եր., 1949, էջ 215, Գ. Մևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 198, Հ. Բաբուեղյան, Արդի հայերենի հոլովման և խոնարհման տեսություն, Եր., 1953, էջ 245-246, Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 373, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու (Ձևաբանություն), Եր., 2002, էջ 307:

կի կազմում<sup>4</sup>: Իսկ Պ. Պողոսյանը դրանք անվանում է կատեգորիական եղանակի բայաձևեր<sup>5</sup>: Գ. Ջահուկյանը *կ*-ով կառույցները համարում է բազմիմաստ, դրանք արտահայտում են ն՛ սահմանականի, ն՛ հրամայականի իմաստային հատկանիշներ. առաջին դեպքում պայմանական ապառնին ձեռք է բերում ուղղվածություն և արտահայտում է ստույգ եղելություն, երկրորդ դեպքում՝ հրամայականի արժեք՝ արտահայտելով ուղղվածություն և ցանկական երանգ: Օր.՝ *Կգնամ և կհաղթեմ, թեկուզև զոհվեմ: Կգնա՛ս և կհաղթե՛ս, թեկուզև զոհվեա:* Այս դեպքում հասկանալի են դառնում *կ* եղանակիչով բայաձևերի գործառական դրսևորումները, որոնց մեջ առանձնանում են. ա) գործողության կատարման պայման արտահայտող կառույցներ. *Կգնամ, եթե չխոչընդոտես:* բ) Հաստատապես կատարելի գործողություն արտահայտող կառույցներ. *Կգնամ և հաղթանակի դրոշը ձեռքիս՝ կվերադառնամ:* գ) Հրամայական իմաստով կառույցներ. *Կգնա՛ս և հաղթանակի դրոշով կվերադառնա՛ս:* Կերպի կարգը ևս Գ. Ջահուկյանը ներկայացնում է արտահայտության և բովանդակության պլանների մասնակաղապարների միջոցով:

Կերպանիշ հիմքակազմ վերջամասնիկներն են *ան, են, ն, չ, այց, եց, ց, ձ, ր:* (Համեմատենք՝ *հեռանալ-հեռաց, մոտենալ-մոտեց, փախչել-փախ, մտնել-մուտ, գնալ-գնաց, խաղալ-խաղաց, դառնալ-դարձ, տանել-տար, դնել-դր*): Հեղինակը կերպի արտահայտության 2 տիպ է տարբերում. ա) մասնիկավորում, բ) մասնիկների հերթագայություն: Արտահայտության պլանում ունենք անկատար – ոչ անկատար կամ կատարյալ հակադրությունը, որը Գ. Ջահուկյանը կոչում է նաև եզրայնություն և ոչ եզրայնություն, ընդ որում՝ եզրայնության դեպքում Գ. Ջահուկյանը նկատի ունի գործողության սկսվելն ու ավարտվելը, իսկ ոչ եզրայնության դեպքում՝ գործողության ընթացքի մեջ լինելը: Լեզվաբանը տարբերակում է արմատների և կերպիմաստի համադրության հետևյալ խմբերը.

1. *Ե* և *Ա* լծորդության պարզ բայերի բայարմատները արժևորում է իբրև անկատար կերպի միավորներ, որոնք կատարյալ կերպի դարձնելու համար պիտի ավելացնենք կատարյալի իմաստ արտահայտող *եց* և *աց* վերջամասնիկները՝ *գրել-գրեց, խաղալ-խաղաց*:

2. II խմբի մեջ է տեղադրում *ե* լծորդության *չ* և *ն* սոսկաձանց ունեցող բայերը, որոնց բայարմատները կատարյալի կերպային իմաստի միավորներ են՝ *փախչել-փախ, մտնել-մուտ*, և անկատարի կերպային իմաստի արտահայտման համար բայարմատին պիտի ավելացնենք *չ* և *ն*՝ ստանալով անկատար կերպի *փախչ* և *մտն* միավորները:

<sup>4</sup> Տե՛ս **Ս. Աբրահամյան**, Արդի հայերենի պայմանական կամ ենթադրական եղանակը, «ՀՄՄՌ ԳԱ տեղեկագիր. հասարակական գիտություններ», № 9, 1953, էջ 75:

<sup>5</sup> Տե՛ս **Պ. Պողոսյան**, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Եր., 1959, էջ 175:

3. Մնացած բայերի բայարմատները կերպային չեզոքություն ունեն, և անկատար կերպի իմաստի համար բայարմատին պիտի ավելացնենք *-են, -ան՝ հեռ-ան-ալ, մոտ-են-ալ*, և կատարյալ կերպի համար պիտի ավելացնենք *-աց՝ հեռ-աց, մոտ-եց*: Սրանց մեջ Գ. Ջահուկյանը ներառում է ավանդական քերականագիտության կողմից անկանոն համարվող միավորները՝ *դառ (ն) ալ*, որի անկատար կերպի ցուցիչն է *ն-ն*, կատարյալինը՝ *ձ-ն, տանել*, որի կատարյալի ցուցիչն է *ր-ն* և անկատարինը՝ *ն-ն, դնել - դ (ը)*, որի կատարյալի ցուցիչն է *ր-ն*, իսկ անկատարինը՝ *ն-ն*: Բայական համակարգում ավանդական մոտեցմամբ զանազանում ենք ներկայի (կամ անկատարի) և կատարյալի հիմքերը, որոնք կերպային տարբերակում են արտահայտում: Եթե սրանց հարաբերակցությամբ ներկայացնենք բայիմաստների կերպային դրսևորումները, որոնք Ջահուկյանի բնորոշմամբ կերպի արտահայտության հենքն են՝ հավելելով մասնիկավորումը և հերթագայությունը, կստանանք հետևյալ պատկերը.

Բայեր	Անկատարի հիմք	Կատարյալի հիմք
գրել	գր-	գր+եց-
խաղալ	խաղ-	խաղ+աց-
փախչել	փախ+չ-	փախ-
մտնել	մտ+ն-	մտ-
հեռանալ	հեռ+ան-	հեռ+աց-
մոտենալ	մոտ+են-	մոտ+եց-
դառնալ	դառ+ն-	դառ+ձ-
տանել	տա+ն-	տա+ր-
դնել	դ+ն-	դ+ր-

Հայերենի բայարմատների կերպային իմաստների նշված հակադրությունների հետ կապված որոշ պարզաբանումներ կատարենք:

1. Եթե բայի ներկայի կամ անկատարի հիմքը **արմատական է**, ապա այն անկատարի իմաստ է արտահայտում և կատարյալի կերպային իմաստի համար ավելացնում ենք *-աց* և *-եց*: Կերպային այսպիսի արտահայտություն ունեն *ե* և *ալ* լծորդության պարզ բայերը (հավելենք նաև կրավորական *վ* և բազմապատկական *աստ, ոտ, կոտ, տ* ածանց ունեցող բայերը):

2. *Ն* և *չ* սուկածանցներով բայերը կատարյալ կերպի իմաստ արտահայտելու համար զգում են իրենց սուկածանցները, այսպիսով *ն-ն* և *չ-ն* անկատարի կերպածանցներ են:

3. Մնացած բայերը, որոնց արմատները, ըստ Ջահուկյանի, ունեն կերպային չեզոքություն, որևէ կերպային իմաստ արտահայտելու հա-

մար դրանց բայարմատներին կերպածանցներ են գումարվում:

Կերպի դրսևորումներից է համարվում նաև գործողության կրկնությունը, *վազեմ-վազվզեմ* կամ *պոկեմ-պոկոտեմ* (էջ 253): Լեզվաբանը բերում է մի շարք բայերի օրինակներ, որոնց կազմում *-են* և *-ան* ածանցները արտահայտում են գործողության տևականություն, դրանք են՝ 1) *լողամ-լողանամ, ծխամ-ծխանամ, կաղամ-կաղանամ*, 2) *ուզեմ-ուզենամ, արժեմ-արժենամ, ունեմ-ունենամ, գիտեմ-գիտենամ*: Այս բայերին բնորոշ են նաև ձևաբանական տարբերություններ, օր.՝ *կարժենամ*, բայց ոչ *կարժե*, *լողալ-լողացի*, *լողանամ-լողացա* (էջ 252-253): Ըստ էության, Գ. Ջահուկյանը, կերպի դրսևորման համար տարանջատելով երկարատևության հատկանիշը, երկու եզր է նշում՝ բազմակատար (երկարատև) և միակատար (աներկարատև), որոնք ամբողջականություն հատկանիշով են բնութագրվում, ընդ որում՝ բազմակատար կերպին բնորոշ է նաև երկարատևությունը: Անկատար-կատարյալ կերպային հակադրությունում անկատար կերպին բնորոշ է երկարատևությունը, ուստի և ոչ ամբողջականությունը, իսկ կատարյալ կերպին նրանցից և ոչ մեկը հատկանշական չէ (էջ 255): Ժամանակի կարգի արտահայտության տիրույթում հեղինակը տարանջատում է ձայնավորներ կամ ձայնավորախմբեր, որոնք ժամանականիշ վերջավորություններ են (էջ 272): Նորարար լեզվաբանը ժամանակի քերականական կարգի երկու ենթակարգ է տարբերակում՝ իրադրական և ոչ իրադրական (վերջինս վերաբերում է առարկայականի իմացական պլանին): Ոչ իրադրական ժամանակը վերաբերում է վերլուծական կառուցվածքներին: Հեղինակի համոզմամբ, իրադրական և ոչ իրադրական (հաջորդականության) ժամանակները կարելի է համարել կա՛մ կարգեր (ուստի ժամանակներ), կա՛մ ժամանակի քերականական կարգի ենթակարգեր: Մրանց համար տարբերակված եզրերը ժամանակի կարգի քերականություններն են: Բայց նշենք, որ այս տարբերակումից հետո առկախ է մնում ժամանակաձև եզրույթի հարցը: Մեր կարծիքով, այն կարելի է գործածել տվյալ քերականությո՞րը արտահայտող հարացույցի անդամների վերաբերմամբ: Օրինակ՝ ներկայի քերականությո՞րը արդի հայերենում արտահայտվում է *գրում եմ, ունեմ* ժամանակաձևերով, իսկ ապառնու քերականությո՞ր՝ սահմանական եղանակի *գրելու եմ*, ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների *գրեմ, կգրեմ, պիտի գրեմ* ժամանակաձևերով: Այսկերպ բնութագրման հիմք է դառնում քերականությո՞րի արտահայտության պլանը: Նկատի ունենալով, որ հաջորդականությունը կարող է ունենալ իրադրական երկու դրսևորում՝ առաջին դեպքում՝ հարաբերվել խոսելու պահին, երկրորդ դեպքում՝ դրան նախորդող կամ հաջորդող որևէ պահի, Ջահուկյանը կատարում է բացարձակ և հարաբերական բայական ժամանակների տարբերակում՝ ամբողջացնելով արդի հայերենի բայի ժամանակային

նկարագրությունը: Մինչև այս հայ քերականները ժամանակային նման տարբերակում են կատարել գլխավոր և երկրորդական բաղադրյալ ժամանակների միջև. վերջիններս «գլխավոր ժամանակների հետ հարաբերական գործածություն ունեն»<sup>6</sup>: Պայմանավորված այն հանգամանքով, որ լեզվաբանները տարբեր կերպ են լուծում ժամանակի քերականական կարգի և նրա քերականությունների առնչության հարցը, ինչպես նաև կերպի ու ժամանակի քերականական կարգերի հարաբերակցության խնդիրը՝ նրանք տարակարծիք են *ժամանակ, ժամանակաձև* եզրությունները մեկնաբանելիս: Լեզվաբանների մի մասի կարծիքով, հայերենում բայը երեք ժամանակ ունի, որոնք կարելի է կոչել ն՝ ժամանակ, և՛ ժամանակաձև<sup>7</sup>: Գ. Սևակը, երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերից յուրաքանչյուրը կոչելով ժամանակ, հայերենում ժամանակների թիվը հասցնում է 58-ի<sup>8</sup>: Ռ. Իշխանյանի համոզմամբ, երկրորդական բաղադրյալ ժամանակներն ընդհանրապես պետք է հանել եղանակաժամանակային համակարգից<sup>9</sup>:

Գ. Ջահուկյանի խոնարհման տեսության մեջ վերլուծական կառույցներում դերբայների միջոցով ձևավորվում է ոչ իրադրային ժամանակը, իսկ օժանդակ բայի միջոցով՝ իրադրական ժամանակը: Ըստ այդմ սահմանական եղանակի համար տարբերակված վեց ժամանակները ոչ թե առանձին ժամանակներ են, այլ ժամանակի քերականական կարգի քերականություններ, որոնք կարող ենք անվանել ժամանակաձևեր:

Տիպարի կարգը՝ իբրև բայական կարգ, քերականագիտության մեջ առաջին անգամ բնորոշել է Գ. Ջահուկյանը՝ այն կապելով արժույթի շարահյուսական կարգի հետ. «... արժույթը տիպարի շարահյուսական և տիպարը՝ արժույթի ձևաբանական արտահայտությունն է» (էջ 236): Հեղինակը տիպարային 3 իմաստ է առանձնացնում. ա) **գործողային**, որն անվանում է անցողական, բ) **վիճակային**, որն անվանում է անանցողական, ներակայական և գ) **փոխարկային**:

Գործողություն և վիճակայնություն հակադրությունը ներկայացնելով որպես միևնույն հատկանիշի երկու հնարավոր հակադիր եզրեր՝ հեղինակը մեկնաբանում է անցողականություն-ոչ անցողականություն հակադրությունը: Անցողականություն ասելով՝ նկատի ունի «օբյեկտ ստանալու հնարավորությունը» (էջ 263): Ըստ այդմ՝ հեղինակը հայերենին բնորոշ է համարում տիպարի դրսևորման 3 եզր՝ ա) անանցողա-

<sup>6</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 570:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 557-574, նաև՝ Ա. Ղարիբջան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Եր., 1954, էջ 302-316, Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 304-307, Է. Ադայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 369-376, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 144-158:

<sup>8</sup> Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 304-305, 317:

<sup>9</sup> Տե՛ս Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1971, էջ 150:

կան-փոխարկային, բ) անանցողական-ոչ փոխարկային, գ) անցողական, որի ներսում չկա փոխարկային և ոչ փոխարկային հակադրությունը: Փոխարկային տիպարի դեպքում տեղի է ունենում արձանագրված հատկանիշի անցումը իր հակադիր եզրին: Օրինակ՝ *Հակոբը խելոքացավ*, այսինքն՝ ոչ խելոքից դարձավ խելոք (էջ 263): Պատճառական բայերի դեպքում ակնհայտ է պատճառահետևանքային իմաստը, որն արտահայտվում է *ցն-ցր* մասնիկներով: Օր.՝ *Մայրը դաս է սովորեցնում երեխային*: Տիպարի կարգն ուղղակիորեն առնչվում է սեռի կարգին: Հաղորդակցային պլանի միավորների սեռատիպարային փոխհարաբերությունը հեղինակը ներկայացնում է հետևյալ կերպ.

1. Տիպարի դեպքում ունենում ենք գործողայնություն և վիճակայնություն հակադրությունը:

2. Սեռի դեպքում ունենում ենք կրավորական, ոչ կրավորական, պատճառական եզրերը, որոնք բնորոշում են գործողայնության տիպարային հատկանիշը և պատճառական ու ոչ պատճառական կամ «չեզոք» եզրերը, որոնք բնորոշում են վիճակայնության տիպարային հատկանիշը: Եթե նկատի ունենանք, որ ոչ կրավորականը՝ ըստ հեղինակի՝ ներգործականն է, և ոչ պատճառականը՝ չեզոքը, ապա սեռի չորս դրսևորում է առաջանում. 1. կրավորական, 2. ներգործական կամ ոչ կրավորական, 3. պատճառական, 4. ոչ պատճառական կամ չեզոք. «...վ-ով կարող են օժտվել այն բայերը, որոնք ենթադրում են առնվազն երկու եզր (պատճառ և հետևանք, ներգործող և ներգործվող կամ կրող), վ-ով չեն կարող օժտվել այն բայերը, որոնք ենթադրում են մեկ եզր, որը բնութագրվում է բայի նշանակած եղելությամբ, վիճակով, պրոցեսով, շարժմամբ» (էջ 269): Այս ընկալմամբ, արտահայտության պլանում ստանում ենք հետևյալ դրսևորումները. վ ցուցիչի համար՝ *սանր-վ-ել*, *հագն-վ-ել* (որը քերականագիտության մեջ անվանում են անդրադարձ բայեր) և *համբուրվել*, որը ենթադրում է գործողությունը կատարող երկրորդ կողմ: Տվյալ դեպքում, ըստ Գ. Ջահուկյանի, հնարավոր է երկու տարբերակ. I. երկու կողմն էլ հանդես են գալիս իբրև ենթակա. *Գրիգորը և Հակոբը համբուրվեցին*: Կամ II. մի ենթակա և մի ուղեկցման խնդիր՝ *Գրիգորը համբուրեց Հակոբին* (էջ 271): Մի շարք բայեր՝ *սիրահարվել*, *հարձակվել*, չեն կարող առանց վ-ի հանդես գալ: *Գլորել-գլորվել* տիպի կառույցներում վ-ն ոչ թե սեռի, այլ տիպարի արտահայտության միավոր է հանդես գալիս (հմմտ. *Ես գլորեցի քարը-քարը գլորվեց իմ կողմից*: Եվ *ես գլորվեցի և ընկա*): Պատճառական *ցն-ր* կառույցների համար վ-ի երկու դրսևորում է առանձնացվում. ա) *մաշել-մաշեցնել-մաշեցվել*, բ) *մոտենալ-մոտեցնել-մոտեցվել*: Գ. Ջահուկյանը տիպարի քերականական կարգի առանձնացմամբ, որն անմիջականորեն առնչվում է սեռի քերականական կարգին, ներկայացնում է ձևաբանական մակարդակում արժույթի շարահյուսական կարգի դրսևո-

րումների քննությունը: Այս դեպքում **գործող (ենթակա) – գործողություն – կրող առարկա կամ անձ** կադապարը ստանում է տարբեր մասնակադապարներով դրսևորումներ (ենթակա - գործողություն, ենթակա - գործողություն - կրող կամ ուղեկցող առարկա/անձ, որ կարող է հետադասվել ենթակա ուղղվածությամբ):

Դասի քերականական կարգը ցույց է տալիս այն, ինչը գոյականի համար տարբերակվում է երկու եզրով՝ անձի և իրի առում: Գ. Ջահուկյանը նախ բայիմաստի մեջ է տեսնում դասային տարբերություններ՝ *մեռնել-սասկել, ուտել-լափել* և այլն (էջ 278): Դասային և դիմային իմաստների համադրությունը Գ. Ջահուկյանը ներկայացնում է աղյուսակով (էջ 278), ըստ որի՝ I, II և III դեմքերով հանդես են գալիս անձ ցույց տվող դասային միավորները, իսկ իր (ոչ անձ) դասային իմաստով միավորները ունեն միայն III դեմք:

Հեղինակը թվի կարգի երկու եզր է առանձնացնում՝ եզակի և հոգնակի. «...բայական թիվը կարելի է դիտել որպես դերանվան հետ բայի թվային համաձայնության արդյունք» (էջ 279):

Գ. Ջահուկյանը, առանձնացնելով բայ խոսքի մասին բնորոշ քերականական կարգերը, մանրակրկիտ քննում է դրանք արտահայտության և բովանդակության բոլոր հնարավոր դրսևորումներով: Նա ներկայացնում է բայական քերականական կարգերի քերականությունները, ցույց է տալիս նրանց առնչություններն ու փոխադարձ կապը միմյանց հետ: Հեղինակն առանձնացնում է բայական կարգերի կադապարներն ու մանրակադապարները՝ գիտականորեն հիմնավորված նոր լուծումներ տալով քերականագիտության մեջ վիճահարույց որոշակի խնդիրների, ինչպիսիք են, օրինակ, ժամանակի քերականական կարգը, տիպարի և դասի կարգերը, կերպաժամանակային հարաբերակցությանն առնչվող խնդիրները: Գ. Ջահուկյանը ինքնատիպ վերլուծության է ենթարկում եղանակի կարգը իր ենթակարգերով, որի շնորհիվ ենթադրական եղանակը, մեր համոզմամբ, բնութագրվում է իրեն բնորոշ հատկությունների ամբողջությամբ, քանի որ այն ամփոփում է ինչպես հաստատապես, ենթադրաբար կամ պայմանով կատարելի գործողության իմաստներ, այնպես էլ հրամայականի իմաստ, հատկապես գրաբարի հորդորական հրամայականին բնորոշ իմաստներով:

**Բանալի բառեր** – Գ. Ջահուկյան, «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ», քերականական կարգեր, խոնարհում, եղանակավորում, ներկայի հիմք, կատարյալի հիմք, հերթագայություն և մասնիկավորում

**АНАИТ ЮЗБАШЯН – Г. Джаукян о концепции глагольных грамматических категорий.** – В статье рассмотрены новые интерпретации грамматических категорий глагола, выдвинутые академиком Джаукяном в его работе «Основы теории современного армянского языка». Предложенные им решения



спорных вопросов, связанных с армянской глагольной системой, оцениваются как весомый вклад в науку. Джаукян уточнил характеристики всех грамматических категорий глагола – спряжения, времени, лица, числа, рода, класса, типа, модальности, – их смысловое содержание и способы выражения в современном армянском языке.

**Ключевые слова:** *«Основы теории современного армянского языка», грамматические категории, спряжение, модальность, основы настоящего времени, основы совершенного вида, чередование и аффиксация*

**ANAHIT YUZBASHYAN – G. Jahukyan on the Concept of Grammatical Categories of the Verb.** – The article presents a new interpretation of the grammatical categories of the modern Armenian language, which gives academician G. Jahukyan in his monograph "Foundations of the theory of the modern Armenian language". His significant contribution to the solution of controversial issues related to the verbal system of modern Armenian language is evaluated. All verbal grammatical categories - conjugation, time, person, number, gender, class, type, modality, their semantic content and methods of expressions in modern Armenian are clarified.

**Key words:** *G. Jahukyan, «Principals of Modern Armenian Theoretical Grammar», grammatical categories, conjugation, bases of the present, bases of the perfect, alternation and affixation*

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ  
ԸՍՏ Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆԻ

ՆԱԻՐԱ ՊԱՐՈՆՅԱՆ

1959 թ. լույս է տեսնում Գ. Ջահուկյանի «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» աշխատությունը, ուր հեղինակը պատմա-համեմատական լեզվաբանության նվաճումներով առաջնորդվելով՝ ի մի է բերում հին հայերենի անվանական հոլովմանն առնչվող հարցերը: Է. Ադայանը գրում է. «Այստեղ ուշադրության արժանի է այն քննադատական վերաբերմունքը, որ Գ. Ջահուկյանը ցուցաբերում է մինչև այժմ հայերենի հոլովման համակարգի ուսումնասիրության մեջ դրսևորված միակողմանիության նկատմամբ. հեղինակը ճիշտ կերպով գտնում է, որ անհնարին է լրիվ պատկերացում կազմել հայերենի հոլովման համակարգի ձևավորման մասին և լուսաբանել այդ պրոցեսը, առանց բազմակողմանիորեն հաշվի առնելու այն հսկայական դերը, որ խաղացել են պատմական Հայաստանի ու նրա շրջապատի բազմաթիվ լեզուները»<sup>1</sup>: «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» աշխատության առաջին մասում լեզվաբանը քննում է հին հայերենի հոլովման համակարգը, իսկ երկրորդ բաժնում բացահայտում է հոլովման համակարգի ծագումը:

Մինչ հին հայերենի հոլովման համակարգի քննությանն անցնելը Գ. Ջահուկյանն անդրադառնում է հնդեվրոպական հոլովմանը, որն ուներ երկու հիմնական տիպ՝ **արեմատիկ** և **թեմատիկ**: Առաջինը չուներ հատուկ հիմքակազմ տարրեր, այսինքն՝ վերջավորությունները դրվում էին անմիջաբար՝ առանց հիմքակազմ \*e/o ձայնավորների միջնորդության: Արեմատիկ տիպն ուներ երկու ենթատիպ՝ «ա) բաղաձայնահանգ ու ձայնորդահանգ ենթատիպ և բ) \*ā ( \*ē ) ձայնավորի հանգող ենթատիպ: Այս երկու ենթատիպերն ունեին միատեսակ վերջավորություններ, բայց երկրորդ ենթատիպի դեպքում, որին պատկանում էին հիմնականում իգական սեռի բառերը, \*ā ( \*ē ) ձայնավորը ձուլվում էր վերջավորության ձայնավորի հետ՝ առաջացնելով առանձին տարբերություններ: Թեմատիկ ենթատիպը բնութագրվում էր վերջավորություններից առաջ հատուկ հիմքակազմ ձայնավորների՝ իրար հետ հերթագայվող \*e/o ձայնավորների առկայությամբ»<sup>2</sup>: Հին հայերենում հնդեվրո-

<sup>1</sup> Է. Ադայան, Լեզվաբանական հետազոտություններ, Եր., 2003, էջ 114:

<sup>2</sup> Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 74-75: Այսուհետև այս գրքից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծում նշելով միայն էջը:

պական հոլովման վերոնշյալ ձևերն արդեն փոփոխված էին, քանի որ թե՛ հնդեվրոպական վերջավորություններն են փոփոխվում ու ընկնում, թե՛ երկար ու կարճ ձայնավորների տարբերությունն է վերանում և թե՛ հին հայերենի հոլովման համակարգում նոր օրինաչափություններ են առաջ գալիս: Եթե հնդեվրոպական հոլովման թեմատիկ հիմքերի հիմքակազմ ձայնավորները և աթեմատիկ հիմքերի հերթագայվող ձայնավորները տարբեր որակ էին կազմում, ապա հին հայերենում դրանք միատեսակ դեր կատարող տարրեր էին, այսինքն՝ այդ ձայնավորները տարբերում էին թե՛ հոլովման տիպերը, թե՛ ուղիղ և թեք հոլովները, հատկապես եզակի ուղղականն ու սեռականը: Ըստ Գ. Ջահուկյանի՝ հնդեվրոպականից հին հայերենին անցնելիս կատարվել էր թեմատիկ և աթեմատիկ հիմքերի վերախմբավորում, բացի այդ՝ «ուղղական հոլովի ձայնավորի անկումը հասցրել էր նրան, որ սեռականի ձայնավորը դարձել էր սվյալ հոլովների տարբերանիշը» (77): Այսպիսով, 1) հին հայերենում որոշ հոլովներ {ա} եզակի ողղ.-ը, հայց.-ը, մասամբ ներգ.-ը, բ) եզ. սեռ.-ը, տր.-ը, մասամբ ներգ.-ն ու բաց.-ը, գ) հոգնակի հայց.-ը և ներգ.-ը, դ) հոգն. սեռ.-ը, տր.-ը և բաց.-ը} իրենց հիմքակազմ տարրերով և վերջավորություններով համընկել են, 2) միննույն հոլովական իմաստը կարող էր արտահայտվել մի քանի հոլովական ձևով, քանի որ առկա են հոլովական հիմքերի, նաև վերջավորությունների տարբերություններ, 3) հին հայերենի հոլովման համակարգը հիմնականում թեքական բնույթ ուներ, բայց կային շեղումներ. ա) թեև միննույն հոլովական վերջավորությունն արտահայտում է և՛ հոլովի, և՛ թվի քերականական իմաստները, սակայն գործիական հոլովում նկատվում է կցականության տարր, երբ հոլովակերտ **ւ, վ, ք** վերջավորությունները առանձնանում են հոգնակերտից, բ) եզակի և հոգնակի թվերի հոլովական վերջավորությունները տարբեր են, գ) հին հայերենում հիմքակազմ տարրը և վերջավորությունը այնպես են միաձուլվում, որ դժվար է դրանք իրարից առանձնացնել, դ) որոշ հոլովական ձևերի նույնացումը անհրաժեշտություն է առաջացնում դիմելու **գ, ի** նախդիրների գործածությանը, որպեսզի հայցականը, բացառականն ու ներգոյականը տարբերվեն մյուս հոլովներից, այսինքն՝ սկսում են զարգանալ վերլուծական ձևերը: Վերոնշյալը փաստում է, որ հին հայերենի հոլովման համակարգում կան որոշ հակասություններ, որոնք նոր որակի տարրեր են, այսինքն՝ հին հայերենն իր մեջ ուներ հին որակի հետքերը և նորի սաղմերը (94):

Ըստ Գ. Ջահուկյանի՝ հին հայերենի հոլովման համակարգն ունի բարդ թեքական բնույթ: Այդ պատճառով էլ նա անհրաժեշտ է համարում հնարավոր մանրամասնությամբ ներկայացնելու եղած բոլոր տիպերն ու ենթատիպերը, բոլոր շեղումներն ու բացառությունները (95): Նրա կարծիքով, որևէ մասնակի դեպքի անտեսումը կխախտի քննության պատմականությունը և չի բացահայտի հին համակարգի հետքերը և

նորի սաղմերը: Մա է պատճառը, որ նա աշխատել է ամբողջական իմբավորման ենթարկել հին հայերենի հոլովման տիպերը: Եթե Ն. Աճառյանը «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության մեջ առանձնացնում է *չորս ձայնավորահանգ (ա, ի, ո, ու)* և *երեք բաղաձայնահանգ (ն, ր կամ ղ, ր/ն)*<sup>3</sup> հոլովումներ, ապա Գ. Ջահուկյանը հին հայերենի հոլովումը բաժանում է հետևյալ տիպերի՝ **ձայնավորահիմք, ձայնորդահիմք** և **տարահիմք (ձայնավորա-ձայնորդահիմք)**:

**Ձայնավորահիմք** տիպի դեպքում բուն վերջավորություններին նախորդում են **ա, ի, ո, ու** հիմքակազմ ձայնավորները (որոնք հետագայում ստացել են *հոլովիչ* անվանումը), բացի ուղիղ հոլովներից, որոնց ձայնավորներն ընկել են: Այսինքն՝ ձայնավորահիմք հոլովումները ուղիղ հոլովներում կունենան զրո հիմքակազմ տարր:

Երկրորդ տիպի՝ **ձայնորդահիմքի** դեպքում վերջավորությունները դրվում են անմիջապես արմատի վրա: Այս դեպքում արդեն և՛ ուղիղ, և՛ թեք հոլովներում առկա է ձայնորդը, որի վրա էլ դրվում են վերջավորությունները: Ձայնավորահիմքի դեպքում շեշտափոխական հնչյունափոխության է ենթարկվում հիմքակազմ ձայնավորին նախորդող մասը, իսկ ձայնորդահիմքի դեպքում հնչյունափոխության է ենթարկվում ձայնորդին նախորդող և հերթագայվող ձայնավորից առաջ գտնվող մասը: Ըստ Գ. Ջահուկյանի՝ հոլովման այս երկու տիպերը տարբերող նիշերից ձայնավորները ըմբռնվում են որպես բառերի արմատներից անկախ տարրեր, իսկ ձայնորդները՝ որպես արմատական հնչյուններ: Մա բացատրվում է նրանով, որ ձայնավորահիմք հոլովում ունեցող բառերի ուղիղ հոլովներում ձայնավորներն ընկել են, մինչդեռ ձայնորդահիմք հոլովում ունեցող բառերի ուղիղ հոլովներում ձայնորդներն առկա են:

**Տարահիմք** հոլովումը բնութագրվում է մասամբ վերոնշյալ հատկանիշների զուգորդմամբ, մասամբ էլ ձայնորդների հերթագայությամբ (75-77):

**Ձայնավորահիմք** հոլովումների մեջ նա առանձնացնում է **ո-ով, ա-ով, ո /ա-ով, ի /ա-ով, ի-ով, ու-ով** հիմքեր: Նշված վեց հիմքերն էլ ունեն իրենց ենթատեսակները: Դիցուք՝ **ո-ով** հիմքերն ունեն **զրո /ո** –ով հիմքեր (գայլ-գայլոյ), **ի/ո-ով** հիմքեր (որդի-որդոյ), **դերանվանատիպ** հոլովում (հին-հնոյ-հնում, առաջին-առաջնոյ-առաջնում): **Ա-ով** հիմքերն ունեն՝ **ա** **ա-ով, եա-ով, իա-ով** և **ա/եա-ով** հիմքեր (Աննա- Աննայ, Ղուկաս-Ղուկայ, Ասիա-Ասիա, Գալիլիայ-Գալիլեայ, Կեսարիա-Կեսարիայ /Կեսարեայ), **բ** **զրո/ա-ով** հիմքեր (տիտան-տիտանայ, Արշակ-Արշակայ), **գ** **է/ա-ով, է/եա-ով, ի/եա-ով** հիմքեր (Վրթանէս-Վրթանայ, Արիստակէս-Արիստակեայ, Մանէ-Մանեայ, Տիգրանուհի-Տիգրանուհեայ), **դ**

<sup>3</sup> Տե՛ս Ն. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Եր., 1957, էջ 399:

**ո/ա**-ով, **ո/եա**-ով, **եո/եա**-ով և **իո/եա**-ով հիմքեր (Հոմերոս-Հոմերայ, Կադմոս-Կադմեայ, Տիմոթեոս-Տիմոթեայ, Տիբերիոս-Տիբերեայ): **Ո/ա**-ով հիմքերն ունեն հետևյալ ենթատիպերը՝ ա) **ի/ու/եա**-ով հիմքեր (մաքի-մաքոյ-մաքեալ, տեղի-տեղոյ-տեղեալ), բ) **իա/իո/եա**-ով հիմքեր (Կեսարիա-Կեսարիոյ-Կեսարիալ): **Ի/ա**-ով հիմքեր (ամ-ամի-ամալ): **Ի** -ով հիմքերն ունեն՝ ա) **ի**-ով հիմքեր (դիք-դից), բ) **ե/ի**-ով հիմքեր (երեք-երից), գ) **զրո/ի**-ով հիմքեր (սիրտ-սրտի): **Ու**-ով հիմքերն ունեն՝ ա) **ու**-ով հիմքեր (երկու-երկուց), բ) **զրո/ու**-ով հիմքեր (ցուլ-ցլու, զարդ-զարդու):

**Չայտորդահիմք** հոլովումների մեջ Գ. Ջահուկյանն առանձնացնում է երեք հիմքեր՝ **ն**-ով, **ր**-ով և **դ**-ով: Բնականաբար նշված հիմքերն էլ ունեն ենթատեսակներ: Լեզվաբանը **ն**-ով հիմքերի մեջ առանձնացնում է տասներկուսը՝ 1) **ուն/ան**-ով հիմքեր (տուն-տան-տունք), 2) **ին/եան**-ով հիմքեր (անկիւն-անկեան-անկիւնք, բազմութիւն-բազմութեան), 3) **ուն/ուան**-ով հիմքեր (անուն-անուան-անուանք, ձեղուն-ձեղուան-ձեղուանք), 4) **ին/եան**-ով հիմքեր (ստին-ստեան-ստինք), 5) **ն/ան/ուն**-ով հիմքեր (պաշտան-պաշտաման-պաշտամունք) 6) **(ը) ն/ան**-ով հիմքեր (կողմն-կողման-կողմանք), 7) **(ը) ն/ան/ուն**-ով հիմքեր (ատամն-ատաման-ատամունք), 8) **(ը) ն/ին/ան**-ով հիմքեր (անձն-անձին-անձանց), 9) **(ը) ն/ին/ուն/ան** (հարսն-հարսին-հարսունք-հարսանց), 10) **(ը) ն/ուն**-ով հիմքեր (յոզն-յոզուն-յոզունք-յոզունց), 11) **(ը) ն/եան/ (ան) /-ով** հիմքեր (եռանդն-եռանդեան (-ան) ), 12) **ին/ուն**-ով, **եան/ուն**-ով հիմքեր (երկոքին, երկոքեան-երկոցունց): **Ր**-ով հիմքերն ունեն՝ ա) **այր/աւր/ար**-ով հիմքեր (հայր-հաւր-հարք-հարց), բ) **ոյր/եր/եռ/որ**-ով հիմքեր (քոյր-քեռքերք-քորք-քերց), գ) **ր/ուր**-ով հիմքեր (աւր-աւուր), դ) **եր (իւր) /եր**-ով հիմքեր (աղբեր-աղբեր), ե) **(ը) ր/եր**-ով հիմքեր (դուստր-դստեր), զ) **ուր/եր**-ով հիմքեր (բլուր-բլեր-բլուրք-բլերց): **Ղ**-ով հիմքեր՝ **(ը) դ/եղ**-ով (աստղ-աստեղ):

**Տարահիմք** հոլովումներն ունեն՝ 1) **կրկնակի հերթագայությամբ հիմքեր**, 2) **միայն հիմքակազմ տարրի հերթագայության ենթարկվող հիմքեր**: **Կրկնակի հերթագայությամբ** հիմքերի ենթատեսակներն են՝ ա) **ո/ա/այ**-ով հիմքեր՝ արմատի **ի/ա** հերթագայմամբ (կին-կնոջ-կնաւ-կանայք-կանաց), բ) **զրո/ն/ան**-ով հիմքեր՝ արմատի **այ/ա** հերթագայմամբ (այր-առն-արք-արանց), գ) **զրո/ի**-ով հիմքեր՝ արմատի **ի/ե** հերթագայմամբ (գիւղ-գեղջ- գիւղիւ), դ) տարարմատ հիմքեր (ունկն-ունկան-ականջք-ականջաց):

**Միայն հիմքակազմ տարրի հերթագայության ենթարկվող հիմքերի** ենթատեսակները տասնյոթն են՝ ա) **ր/ու**-ով հիմքեր (ծաղր-ծաղու), բ) **ր/ուա**-ով հիմքեր (արտաւսր-արտասուք-արտասուաց), գ) **ր/ու/ուն**-ով հիմքեր (մանր-մանու-մանունք-մանունց), դ) **ր/ու /ուն/ան**-ով հիմքեր (բարձր-բարձու-բարձունք-բարձանց), ե) **զրո/ ու/ան**-ով հիմքեր (երեց-երիցու-երիցունք-երիցանց), զ) **զրո/ի/ին/ան**-ով հիմքեր (քար-քարի-քա-

րինք-քարանց), է) **(ը)ն/ան/զրո/ա**-ով հիմքեր (դոտն-դրան-դուրք//դրունք-դրաց/դրանց), ը) **(ը)ն/ին/զրո/ի**-ով հիմքեր (ոտն-ոտին-ոտք-ոտից), թ) **զրո/ (ը)նջեան**-ով հիմքեր (տիւ-տու(ը)նջեան), ժ) **զրո/ան**-ով հիմքեր (գարուն-գարնան), ժա) **զրո/ան/ուն**-ով հիմքեր (մանուկ-մանկան-մանկունք), ժբ) **զրո/եան**-ով հիմքեր (տեսիլ-տեսլեան), ժգ) **զրո/եան/ո**-ով հիմքեր (ծնունդ-ծննդեան-ծնունդք-ծննդոց), ժդ) **զրո/ո**-ով և **ուր**-ով հիմքեր (ջուր-ջրոյ-ջուրք-ջուրց), ժե) **զրո/ուան/ուն**-ով հիմքեր (մահ-մահուան-մահունք), ժզ) **զրո/ո/այ**-ով հիմքեր (աղախին-աղախնոյ-աղախնայք-աղախնայց), ժէ) **զրո/ի-ով** և **(ը) ն/ուն**-ով հիմքեր (ինն-ըննի-ինունք):

Հին հայերենի հոլովման տիպերի քննությունից հետո Գ. Ջահուկյանն անցնում է հոլովման համակարգի օրինաչափություններին՝ առանձնացնելով երեք տիպ. ա) **հնչյունական**, բ) **խմաստային և քերականական**, գ) **խաչաձևման**: Նա նշում է, որ կան բառեր, որոնց հոլովման հիմքերի որոշումը դժվար չէ, դիցուք՝ ողղ.-ում **ի**-ով վերջացողները, **բաղաձայն+ղ** կապակցությամբ վերջացողները և այլն: Իսկ արդեն դժվար է որոշել ձայնավորահանգ **ո, ու, ի, ի/ա** և ձայնորդահանգ **ն/ան/ուն, ն/ին/ան, ն/ին/ուն/ան** հոլովումների պատկանելության հարցը: Այս դեպքում արդեն օգնության են գալիս վերոնշյալ օրինաչափությունները, որոնցից առաջինը **հնչյունականն** է: Այն ներառում է **վանկաքանակության, առնմանական ու տարնմանական** հնչազդեցական օրենքները: **Վանկաքանակություն** բառն իսկ հուշում է, որ այստեղ հաշվի է առնվում վանկերի քանակը, այսինքն՝ երկուսից ավելի վանկ ունեցող արմատական բառերը հոլովվում են ձայնավորահանգ **ի, ի/ա** և ձայնորդահանգ **ն/ան/ուն** հոլովումներով: Այս օրենքով է պայմանավորված, որ բաղադրյալ բառերը հոլովվում են հիմնականում **ի, ի/ա** հոլովումներով (բացառությամբ այն բառերի, որոնց վերջին բաղադրիչը բարդության իմաստի հիմնական կրողն է): **Առնմանական** հնչազդեցության օրենքն այն է, երբ բառի որևէ հոլովման պատկանելը որոշվում է բառավերջի ձայնավորի և բաղաձայնի՝ ըստ արտասանական տեղի հատկանիշի: Ըստ այսմ՝ Գ. Ջահուկյանն առանձնացնում է չորս էական դեպք. ա) վերջնավանկում շրթնայնացված **ո, ու** ձայնավորներ ունեցող բառերը հոլովվում են **ո** հոլովմամբ, օրինակ՝ ամուլ, բոց, գլուխ, գոմ, գործ, գուր, դուր, թոք, թուղթ, թուրք, լուր, խոտ, կողով, հող և այլն: Այս օրենքից բացառությունները բացատրվում են այլ օրենքների ազդեցությամբ, ինչպես նաև **ո**-ին և **ու**-ին հաջորդող բաղաձայնի բնույթով: բ) Շրթնային **փ** - ով վերջացող բառերը հոլովվում են **ո** հոլովմամբ, իսկ **վ** - ով և **ւ** - ով վերջացողները՝ **ու** - ով, օր.՝ ավոյ, ծափոյ, տարափոյ, արեւու, ծովու, կովու, հաւու, սակաւու և այլն: գ) **Յ** - ով վերջացող բառերը (այդ թվում նաև **է** - ով վերջացողները, քանի որ **է = ե + յ**), վերջնավանկում **այ, ոյ, եա** երկբարբառ ունեցող բառերի մեծ մասը հոլովվում է **ի** հոլովմամբ՝ արքայ, ծառայ, երեկոյ, ավսէ, այծ, արոյր, մատեան և

այլն: Այսպես են հոլովվում նաև **հ**-ով վերջացող բառերը՝ ահ, գրոհ, զոհ, նժդեհ և այլն: Պետք է նշել, որ առաջնալեզվային պայթական ու շփական բաղաձայններով վերջացող բառերը ևս հոլովվում են այս հոլովմամբ՝ ախտ, ատաղձ, բանտ, երթ, արատ, ծանալթ և այլն: ղ) Հետնալեզվային բաղաձայններով վերջացող բառերը հոլովվում են **ի/ա** հոլովմամբ՝ ազգ, կարգ, աղմուկ, բազուկ և այլն:

**Տարնմանական** հնչազդեցության օրենքը նախորդի համեմատ սահմանափակ կիրառություն ունի. հետին շարքի **ա** ձայնավոր ունեցող միավանկ բառերը հոլովվում են **ի** հոլովմամբ՝ ախտ, ահ, բան, դարմ, զարմ և այլն, երկու վանկում էլ **ա** ունեցող բառերը հոլովվում են **ո** հոլովմամբ՝ ամբար, արդար, արծաթ, արմատ, երբեմն էլ **ու** հոլովմամբ՝ ճակատ, նախանձ, շաբաթ և այլն, իսկ երկու կամ ավելի հաջորդական **ա** ունեցող հատուկ անունները հոլովվում են **ու** հոլովմամբ՝ Աբրահամ, Աբաս և այլն (116-119):

Հնչյունական օրենքներից հետո անվանի լեզվաբանն անդրադառնում է **իմաստային** և **քերականական** օրենքներին՝ վերջինս անվանելով ֆունկցիոնալ: Ըստ իմաստային խմբավորման օրենքի՝ ազգակցական հարաբերություններ ցույց տվող բառերը, որոնք ուղղականում վերջանում են **յր** կապակցությամբ, հոլովվում են ձայնորդահիմք **ր** - ով և տարահիմք տիպերով: Նշենք, որ այսպես հոլովվողները պատկանում են բառային ֆոնդի ամենահին շերտին: Հատուկ անունները հոլովվում են միայն ձայնավորահիմք հոլովումներով, որոնց մեջ գերակշռում են «մաքուր» **ա** - ով հիմքերը, իսկ **ի/ա** հոլովմամբ է հոլովվում անձ ցույց տվող հասարակ անունների մեծ մասը: Բույսերի անունները հոլովվում են **ո** հոլովմամբ, բացառությամբ **ի**-ով վերջացող ծառանունների, մետաղների, հանքանյութերի և թանկարժեք քարերի անունները պատկանում են **ո** հոլովման, կենդանիների անուններն էլ հոլովվում են **ո** և **ու** հոլովումներով: **Ու** հոլովման է պատկանում նաև ժամանակ ցույց տվող բառերի մեծ մասը, թեև նման բառերը երբեմն հոլովվում են **ո** և **եան** հիմքերով: Իմաստային խմբավորման օրենքի մեջ Գ. Ջահուկյանը ներառում է թվականները, ածականներն ու բայահիմքերը: Այսպես՝ երկուսից բարձր և հարյուրից ցածր թվականները հոլովվում են **ի** հոլովմամբ, եթե չեն վերջանում **բաղաձայն + ն** կապակցությամբ, բայահիմքերը պատկանում են **ի** հոլովման, ինչպես նաև ածականների մեծ մասը հոլովվում է **ի** հոլովմամբ, բացի **ր/ն** հերթագայությամբ հոլովվողների: Ֆունկցիոնալ տարբերակման օրենքի էությունն այն է, որ «հոլովման տիպերի և հիմքերի տարբերությունները որոշ դեպքերում արդյունք են բառերի շարահյուսական ֆունկցիաները տարբերակելու տենդենցի» (121): Ըստ այս օրենքի՝ **ա**) որոշի պաշտոն կատարող անուններին հատուկ է **-ում**-ով տրական ունեցող **ո** հոլովումը, **բ**) եզակի գործիականի հիմքը տարբերվում է մյուս թեք հոլովների հիմքից, **գ**)

ուղղական-հայցականի ու սեռական-տրականի հիմքերն ունեն հակադրություն: Կան **խաչաձևման դոմինանտության** և **զուգաձևության** օրենքներ: Դոմինանտության դեպքում հնարավոր է, որ խաչաձևվեն երկուսից ավելի օրենքներ: Այս դեպքում գերակշռում է հոլովման այն տիպը, որն ավելի շատ օրենքներով է պայմանավորված: Բացի սա՝ մեծ մասամբ գերակշռում է ավելի գործուն ու տարածված տիպը: Խաչաձևման զուգաձևության օրենքը դոմինանտության հակադրությունն է, այսինքն՝ տարբեր օրինաչափությունների խաչաձևման դեպքում առաջանում են միևնույն բառի տարբեր հոլովման ձևեր: Էդ. Աղայանը նշում է, որ Գ. Չահուկյանը հանգամանորեն բացատրել է յուրաքանչյուր օրինաչափություն՝ հիմնավորելով անհրաժեշտ տվյալներով<sup>4</sup>:

Այսպիսով, Գ. Չահուկյանը գրաբարի հոլովումները դասակարգել է հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության սկզբունքներին համապատասխան՝ տարբերելով ձայնավորահանգ, ձայնորդահանգ և ձայնավորա-ձայնորդահանգ հիմքերով հոլովումներ: Գրաբարի անկանոն հոլովումները նա քննել է ձայնորդահիմք և տարահիմք հոլովումների մեջ, քանի որ նմանատիպ քննությունը ճիշտ է ն՝ պատմականորեն, և՛ հին հայերենի հոլովման համակարգի բնույթի տեսակետից: Բացի դրանցից Գ. Չահուկյանը հոլովման համակարգի մեջ բացահայտել է որոշ օրինաչափություններ, որոնց օգնությամբ բառի ուղղական հոլովաձևով հնարավոր է պարզել տվյալ բառի՝ որ հոլովման պատկանելը:

**Բանալի բառեր** – *հոլովման համակարգ, թեմատիկ, աթեմատիկ, ձայնավորահանգ, ձայնորդահանգ, տարահիմք, վանկաքանակություն, առնմանում, տարնմանում, խաչաձևում*

**НАИРА ПАРОНИЯН – Система склонения в древнеармянском языке по Г. Джаукяну.** – Согласно акад. Г. Джаукяну, в системе склонения древнеармянский язык сохранил основные особенности индоевропейского типа. Для индоевропейского языка-основы восстанавливают два типа склонения – атематический и тематический. Древнеармянская система склонения отличается двумя основными типами – с основами на гласные *п, ш, ъ, пп* (тематический тип) и с основами на сонаты *и, р, η* (атематический тип). Джаукян считал, что в некоторых случаях не возникает особых трудностей при определении принадлежности к тем или другим типам склонения. Так, типы склонения слов, оканчивающиеся на *-ѣ, -(р)р, -(р)η*, устанавливаются легко. Труднее бывает в случае слов, оканчивающихся на *п, ѣ/ш, ѣ, пп, и*. Здесь роль играют законы: 1) количества слогов, 2) ассимилятивного воздействия, 3) диссимилятивного воздействия, 4) семантической группировки, 5) функциональной дифференции, 6) доминирования при скрещивании, 7) дублетов при скрещивании.

**Ключевые слова:** *система склонения, гласные, сонаты, количество слогов, ассимиляция, диссимиляция, семантика, скрещивание*

<sup>4</sup> Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 117:



**NAIRA PARONYAN – *The System of Conjugation of Old Armenian according to G. Jahukyan.*** – According to G. Jahukyan Old Armenian has preserved the main peculiarities of the Indo-European type. For the Indo-European language- the bases restore two types of conjugation: athematic and thematic. The Old Armenian System of Conjugation appears in two main types: bases on the vowels *n, u, ɪ, nɪ* (thematic types) and the bases on sonatas *ɪ, p, ɲ* (athematic). Jahukyan considers, that in some cases there are no special difficulties in establishing the belonging to this or that type of conjugation. Thus, it is very easy to establish the types of word conjugations, ending in *– ɪ, -(p)ɪ –(p)ɲ*. According to him, difficulties arise for the words which end in *n, ɪ/u, ɪ, nɪ, ɪ*. In these cases it is possible to establish the following rules: 1) the rule of the quantity of the syllables 2) the rule of assimilation impact 3) the rule of dissimilation impact 4) the rule of semantic grouping 5) the rule of functional differentiation 6) the rule of domination in case of crossing 7) the rule of doublets in case of crossing.

**Key words:** *system of conjugation, thematic, athematic, feminine rhyme, sonorous rhyme, suppletive base, syllable quantity, assimilation, dissimilation, crossing*

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԻՐԻԵՎ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ  
ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

ԱՐԵՆ ՄԱՆԹՈՑԱՆ, ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Լեզվաբանության մեջ «փոխակերպում» (transformation, трансформация) տերմինը հայտնի է իբրև միևնույն մտքի՝ ոչ միայն քերականական տարբեր կառուցվածքներով, այլև բառային տարբեր միջոցներով ու եղանակներով արտահայտություն խոսքիմասային փոխանցում<sup>1</sup>:

Ժամանակակից փոխակերպական քերականություններում ընդլայնվում, ընդհանրացվում և ձևականացվում է փոխակերպման գաղափարը՝ հաղթահարելով անմիջական բաղադրիչների մեթոդի սահմանափակությունները: Սերոդ քերականության մեջ փոխակերպման բաղադրիչներն են համարվում *անմիջական բաղադրիչներով վերլուծության, փոխակերպման և ձևահնչության փոփոխության* կանոնները:

Փոխակերպումը՝ որպես նորակազմությունների և նորաբանությունների լեզվաբանական ուսումնասիրության եղանակ, լրացվում է անմիջական բաղադրիչների մեթոդով, որով ներկայացվում են բառերի սերման գործընթացները և շարահյուսական կառուցվածքները՝ բացահայտելով նոր բառի բովանդակությունը<sup>2</sup>:

Գ. Ջահուկյանը, փոխակերպումը ներկայացնելով նեղ առումով, տարբերակում է փոխանցումը իբրև լեզվական այլ իրողություն: Ըստ այսմ՝ փոխանցումը մի խոսքի մասի այնպիսի անցումն է մյուսին, որի դեպքում արտաքին որևէ փոփոխություն չի լինում: Լեզվի պատմական զարգացման ընթացքում կատարվող խոսքիմասային փոխանցումների և համապատասխան իմաստափոխությունների հետևանքով էլ ի հայտ են գալիս իմաստային նորաբանությունները. այսպես՝ Գ. Նարեկացին «Գովեստ Յակոբայ Մծբնայ հայրապետի» ներբողում կիրառել է **կանոնազիր** ածական նորաբանությունը՝ «Գրոջ կամ սահմանոջ կանոնաց» (ՆՀԲ, 1, 1051)<sup>3</sup> իմաստով: Հ. Պարոնյանը այս բառը փոխանունության հիմունքով կիրառել է իբրև գոյական՝ «Կանոնադրություն» իմաստով (ԺՀԼԲԲ, 3, 45)<sup>4</sup>՝ «Գրպաններուն մեջ անպակաս են ծրազիրները, կա-

<sup>1</sup> Տե՛ս J. C. Nesfield, *Idiom, grammar and synthesis*, London, 1932, էջ 296-330:

<sup>2</sup> Վերլուծությունը կատարել ենք՝ առաջնորդվելով Գ. Բ. Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (Եր., 1974) աշխատությամբ:

<sup>3</sup> Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1, 1836, հ. 2, 1837, Վենետիկ: Այսուհետ՝ ՆՀԲ, 1, ՆՀԲ, 2:

<sup>4</sup> Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 1, Եր., 1969, հ. 2,

*նոնազիրներ և ուրիշ շատ մը թուղթեր, գորս կտրբագրե»<sup>5</sup>:*

Խոսքիմասային փոխանցում կարող է կատարվել նաև հին իմաստի պահպանմամբ, այսպես՝ **օղաչու** բառը՝ որպես նորաբանություն, արարվել է «Մատեան»-ում և գործածվել ածականի նշանակությամբ: Օրինակ՝ *Նետս արձակեցեր օղաչուս և յարմարաթոխչս*<sup>6</sup>: Նույն նշանակությամբ կիրառել են Ջիվանին և Մուրացանը, ինչպես՝ *Ուզում եմ դառնալ օղաչու թոչնիկ* (ԺՀԼԲԲ, 4, 771): *Հարավարևելյան այս բարձրության վրա, իբրև գույգ օղաչու հսկաներ կանգնած էին արքունական դղյակները*<sup>7</sup>: Ժամանակակից հայերենում ունենք օղաչու>սավառնորդ համանշախին գույգը՝ որպես գոյական. «Շատ երեխաներ են երագում օղաչու դառնալ»<sup>8</sup>:

Լեզվում շարունակ կերտվում են նորակազմություններ՝ արտաքին-բառակազմական հատուկ եղանակներով՝ փոխակերպման միջոցով:

### **ա. Բայի փոխակերպմամբ գոյական նորակազմություններ**

Հայերենի ճկուն բառակազմության շնորհիվ գրեթե յուրաքանչյուր բայից հնարավոր է կերտել նոր բայանուն գոյական, ինչպես՝ *ազդեմ* բայը գրաբարում մի շարք իմաստների գուգահեռ ուներ նաև *զգացուցանել* նշանակությունը, որին գուգահեռ Գ. Նարեկացին կերտել է **ազդարան** (ՄՈ, 477) նորակազմությունը՝ «Ընդունարան՝ գործարան ազդմանց, զգայարան» (ՆՀԲ, 1, 9) իմաստով:

Նորակազմությունների ստեղծման պատմական զարգացման ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայերենում բայանունները կազմվում են հետևյալ եղանակներով.

1. **Ածանցմամբ**, այսպես՝ գրաբար մատենագրության մեջ տարբեր նրբիմաստներով գործածված **ահաբեկեմ** բայը՝ «Ահաբեկ առնել, զարհուրեցուցանել» իմաստով, Մ. Խորենացու՝ հայերենի փոխադրած «Գիրք պիտոյից» երկում կիրառվել է իբրև գոյական՝ **ահաբեկութիւն** «Ահի տազնապումն, զարհուրանք» իմաստով. *Հաշեալք ահաբեկութեամբ՝ գտանին ի մէջ կիսամահ տազնապի* (ՆՀԲ, 1, 28):

Ածանցները կարող են գուգահեռ կիրառություններ ունենալ նույն բառիմաստի հումանիշային դաշտում, այսպես՝ **խարխափեմ** բայից հայ հին մատենագրության մեջ սերվել են **խարխափանք** (Գ. Նարեկացի) և **խարխափումն** (Յովհան Դամասկացի) նորակազմությունները՝ «Խարխափելն, խարխափ, կուրօրէն շօշափումն ընդ խաւար» իմաստով. *Ընդ աչացաւացն նեղելոց մշտագիշերն խարխափանօք: Եթէ զբանս մարգարէիցն հաւատով քննէիք, և ոչ խարխափմամբ. նա ինքն յայտներ ձեզ*

Եր., 1972, հ. 3, Եր., 1974, հ. 4, Եր. 1980: Այսուհետ՝ ԺՀԼԲԲ, 1, ԺՀԼԲԲ, 2, ԺՀԼԲԲ, 3, ԺՀԼԲԲ, 4:

<sup>5</sup> **Հ. Պարոնյան**, Ընտիր երկեր, հ. 1, Եր., 1954, էջ 274:

<sup>6</sup> **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, Եր., 1985, էջ 614: Այսուհետ՝ ՄՈ:

<sup>7</sup> **Մուրացան**, Գևորգ Մարգպետունի, Եր., 1982:

<sup>8</sup> «Մանկական հանրագիտարան», հ. 4, Եր., 1987, էջ 349:

զիւրն ճշմարտութիւն (ՆՀԲ, 1, 932):

Հայերենի բոլոր շրջաններում կենսունակ են *-ութիւն* և *-ում* վերջածանցները: *-ութիւն* վերջածանցը բայանուններից գոյականներ կարող է կազմել նաև կցվելով *-ոյ* բառահարաբերական ձևութիւն. այսպիսով ստեղծվում են նոր բառեր, որոնցում ակնհայտ է գործողության գաղափարը, ինչպէս՝ **բարձողութիւն** նորակազմությունը. *Ջեւտնականն բարձողութիւն շինուածոյ մարմնոյս՝ Առ էլս ծառոյն կենսատիթ պտղոյն խտիանեցելոյ...* (ՄՈ 312) արտահայտության մեջ՝ «Կարողութիւն և ներգործութիւն բառնալոյ, բարձումն, ի վերայ իւր բառնալն» (ՆՀԲ, 1, 461) իմաստով:

Բայանուններ կազմվում են նաև անարդյունավետ ածանցներով, որոնք հանդես են բերում զանազան կարգի լրացական իմաստներ ցույց տալով տվյալ գործողությամբ բնորոշվող առարկան՝ գործողը, գործիքը, գործողության արդյունքը, տեղը և այլն, ինչպէս՝ **աղաչաւոր** նորակազմությունը՝ «Աղաչող, աղօթական» իմաստով (ՆՀԲ, 1, 34) . *Զիա ըդ յաւելից կրկնել զնոյն գովութիւն աղաչաւորս բազմապատկառ* (ՄՈ, 479):

Բայանուն գոյականների կերտման լրացական եղանակներից է կատարյալի հիմքի *-աց*, *-ոյց*/*-ույց* մասնիկներով բառակազմությունը՝ իբրև գոյականական զրո ածանցով ձևեր, ինչպէս՝ **աղբատիւնաց** (Ա. Շիրակացի), **ձեպընթաց** (Հ. Երզնկացի), **տաղասաց** (Գ. Մագիստրոս), **աւետամատոյց** (Գ. Նարեկացի) և այլն:

Բայ > գոյական և գոյական > բայ փոխակերպումները լեզվում անջրպետված չեն. դրանք կարող են փոխադարձաբար հաջորդել միմյանց նույն արմատի տարբեր կիրառություններում. այսպէս՝ 5-րդ դարում թարգմանիչ-քերականները Դ. Թրակացու «Արուեստ քերականութեան» գրքի թարգմանության ժամանակ հունարենի նմանությամբ *ածանիմ* (περιζώσμι) բայի փոխակերպմամբ կիրառեցին **ածանց** (παράγωγον) բառը, որն էլ իր հերթին հիմք դարձավ **ածանցիմ**, **ածանցական** նոր բառերի համար:

2. **Բառաբարդմամբ**, որը դրսևորվում է համակաղապարային և փոխկաղապարային կազմություն ունեցող նորակազմ բայանուններով:

**Բարդ համադրական գոյական համակաղապարային կազմություն ունեցող բայանուն նորակազմությունները**, ըստ իրենց ձևաբանական մասնակաղապարի, կարող են լինել «գոյական+գոյական», «մակբայ+գոյական»:

«Գոյական+գոյական» մասնակաղապարով արտահայտվում է «խնդիր+լրացյալ» ներշարահյուսական հարաբերություն, ինչպէս՝ **շահընծայութիւն** (ՄՈ, 621). «Ընծայիլն շահից ուստեք» (ՆՀԲ, 2, 459), **բերդամարտութիւն** (ՄՈ, 614). «Մարտադրութիւն ընդդէմ բերդի» (ՆՀԲ, 1, 484) և այլն:

«Մակբայ+գոյական» մասնակաղապարով գոյականներն էլ ունեն «պարագա+լրացյալ» ներշարահյուսական կաղապար, ինչպես՝ **վերածածկութիւն** (ՄՈ, 633). «Վերածածկելն և ծածկոյթ կամ մաշկ պատիչ» (ՆՀԲ, 2, 805), **վերարձակութիւն** (ՄՈ, 490). «Ի վեր արձակումն» (ՆՀԲ, 2, 810) և այլն:

Բարդ համադրական գոյական փոխկաղապարային կազմություն ունեցող բայանուն նորակազմությունները հիմնականում կերտվում են «գոյական+բայ» ձևաբանական մասնակաղապարով, որով արտահայտվում են «պարագա+լրացյալ», «խնդիր+լրացյալ» ներշարահյուսական հարաբերություններ, ինչպես՝ **շրջադրութիւն** (ՄՈ, 409). «Շուրջանակի դնելն» (ՆՀԲ, 2, 496), **կաշտաձգութիւն** (ՄՈ, 397). «Կաշտոք ձգումն, ձգելն» (ՆՀԲ, 1, 1052), **յուսատրութիւն** (ՄՈ, 380). «Յոյս տալն» (ՆՀԲ, 2, 377): Նշված կառույցներում բայ բաղադրիչը ունի անորոշ դերբայի իմաստ, իսկ սերող հիմք գոյականներն էլ խնդրի շարահյուսական պաշտոնով են հանդես գալիս: Այս շարքում ածանցները վերագրվում են ոչ թե բառաբաղադրիչին, ինչպես վերևում, այլ ամբողջ կազմությանը. այս մասին է վկայում նաև այն փաստը, որ հին հայերենում չկային **ձգութիւն, տրութիւն** բառեր:

#### **բ. Բայի փոխակերպմամբ ածական նորակազմություններ**

Բայերը կարող են փոխակերպվել նաև գոյականական և ածականական բառակապակցությունների կախյալ անդամների՝ դառնալով նորակազմ ածականներ և մակբայներ, որոնք կերտվում են փոխակերպման բուն ածականական դրսևորմամբ՝ իբրև բայածանց ածականներ և բայածանց մակբայներ<sup>9</sup>:

Բայերից նոր ածականներ ստեղծվում են և՛ նախածանցմամբ, և՛ վերջածանցմամբ, ինչպես՝ **ան-** նախածանցով նորակազմությունները, որոնցում նախածանցը կատարում է երկակի դեր. ժխտելով բայահիմքի արտահայտածը՝ միաժամանակ այն փոխակերպում է գործառայես, օրինակ՝ **անվայրարկելի** (ՄՈ, 614). «Զոր չէ մարթ ի վայր արկանել...» (ՆՀԲ, 1, 239) և այլն:

Նորակազմություններում **ան-** նախածանցը կարող է գուգակցվել տարբեր վերջածանցների հետ, ինչպես՝ **անազդեալ**. «Անազդ, ոչ ազդեալ կանխաւ, անծանօթ» (ՆՀԲ, 1, 102), **անաղաչատր**. «Որ ոչն աղաչէ կամ անկարող առ աղաչել» (ՆՀԲ, 1, 104) և այլն:

Նորակազմությունների պատմական ուսումնասիրության ժամանակ հանդիպում ենք նաև վերջավորությունների գործառական իմաստափոխության. օր.՝ **-ող** դերբայական վերջավորությանը համարժեք **-իչ** դերբայական վերջավորությունը, որով կազմությունները ժամանակի ընթացքում ձեռք են բերել գոյականական արժեք՝ նշանակելով տվյալ

<sup>9</sup> Տե՛ս **Գ. Բ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 502-565:

գործողությամբ բնորոշվող անձ, գործիք. սակայն **-իչ**-ով կազմվում են նաև ածականներ, ինչպես **հարուածիչ** (ՄՈ, 587) «Որ հարուածէ» (ՆՀԲ, 2, 66), **երևեցուցիչ** (ՄՈ, 587) «Որ երևեցուցանէ» (ՆՀԲ, 1, 678) և այլն:

Բայափոխներից իմաստային տարբեր երանգներով բնորոշվող նոր ածականներ են կազմում մի շարք ածանցներ՝ **-ական**, **-արար**, **-արան**, **-ակ**, **-ոտ**, **-կոտ**, **-իկ** և այլն, ինչպես՝ *Մատո՛ լսելեացս ...յամբային դար-ձատր* (ՄՈ, 432), *Արդար հատուցմամբ ի մթութիւն ըմբռնողական Մի-գին կորստեան վրիպեալ դանդաշեմ* (ՄՈ, 317):

Բայանվանական հիմքերով ածական նորակազմություններ հիմնականում կազմվում են **-լի** վերջածանցով, որոնք Գ. Ջահուկյանը անվանում է դերածականներից սերված բուն ածականներ կամ ստորոգելիական ածականներ, քանի որ՝ ա) ստանում են բուն դերբայներից տարբեր ժխտականներ՝ **ան-** նախածանց, ինչպես՝ *Անուրս, ըստ Յոբայ, ծանունս և անտանելիս ինձէն ինձ սաստկացուցի, Առիգած անկարկատելի, ըստ Երեմիայ, զանձն իմ արարի, Իբր զվիժած անգրեղի կոչման, ըստ առակարկուին, Ի մարդկանէ համարոյ եղծայ...* (ՄՈ, 322), բ) կազմվում են ոչ բոլոր, այլ սովորաբար ներգործական սեռի բայերից, ինչպես՝ *Անենայն ինչ քեզ զարեղի է* (ՄՈ, 593)<sup>10</sup>:

Բայերից ածականացած նորակազմություններում կարող ենք հանդիպել նաև բառակազմական կերպայնությամբ ձևերի, ինչպես՝ **ծեքծեքուն**՝ «ծեքծեքվող, կոտրատվող, պչրող» (ԺՀԼԲԲ, 2, 666). *Սափորն ուսիդ ծեքծեքուն, երբ որ ձորը կերթաս* (Ս. Իսահակյան): **Բեկբեկուն**՝ «բեկբեկվող» (ԺՀԼԲԲ, 1, 310). *Արհեստական լճի մեջ տեսնելով իր ձիու բեկբեկուն պատկերը* (Ս. Խանգաղյան): Ի տարբերություն բայարմատի կրկնությամբ կերտված նորակազմ բայերի՝ ածականները արտահայտում են մշտահատուկ<sup>11</sup> հատկանիշ և կերպայնորեն չեզոք են:

#### գ. Գոյականի փոխակերպմամբ բայ նորակազմություններ

Նոր բայեր խոսքում կերտվում են գոյականական բառակապակցության գլխավոր և լրացական անդամների բայանալով: Գոյականը, փոխակերպվելով բայի, ձևք է բերում բայի բոլոր հատկանիշները և կարող է ինչպես խոնարհվել, այնպես էլ փոխակերպվել բային հատուկ փոխակերպմամբ՝ բայանվանական և դերբայական ձևերի, ինչպես՝ *Ամպել և ոչ անձրևել* (ՄՈ, 252) և այլն:

Գոյական անվան բայացումը կարող է կատարվել երկու ուղիով.

1. Գոյականն առանց անվանական ածանցական մասնիկների փոխակերպվում է **է** խոնարհման պարզ և **-ան-** սուկածանցով **ա** խոնարհման բայերի, ինչպես՝ *քանակ – քանակել, քանականալ* (ՆՀԲ, 2,

<sup>10</sup> Տե՛ս Գ. Կ. Խաչատրյան, Լ. Հ. Պետրոսյան, Նարեկի *-ա/ե-լի* ածանցավոր նորաբանությունները, «Մխիթար Գոշ» հասարակագիտական հանդես, թիվ 2, 2003, էջ 34:

<sup>11</sup> Ի դեպ՝ *մշտահատուկ* բառը նույնպես հեղինակային նորաբանություն է. հեղինակ՝ Գ. Ջահուկյան:

978), *քար* – *քարանալ* (ՆՀԲ, 2, 996): Մոսկվածանցավոր կազմություններում գոյականը սովորաբար գործածվում է փոխաբերաբար որպես հատկանիշի անուն՝ փաստորեն հանդես գալով ածականական արժեքով. տեղի է ունենում իմաստային փոխակերպում՝ առարկայական իմաստ > հատկանշային իմաստ > բայիմաստ:

2. Գոյականը բայանում է լրացուցիչ ածանցական մասնիկներով. ա) *աւոր+ել- հանդերձաւորել* (ՄՈ, 260), *արկ+ել-գործարկել, ացնել-ավտոմատացնել*: Օտար բառերի դեպքում հատկապես գործածական է *ացնել*-ը, որը գումարվում է *ացիա*-ով վերջացող բառերին: Այսպիսով *աց*-ը բաղարկվում է (կոնտամինացիայի է ենթարկվում) *ացն*-ի *աց*-ի հետ՝ կերտելով պատճառական ածանցով բայեր, որոնք չունեն համապատասխան միակատար կերպերը, ինչպես՝ *գագաֆիկացնել* (ԺՀԼԲԲ, 1, 359) և այլն:

Տեսականորեն բոլոր որոշիչ բառերը՝ ածականները, թվականները, կարող են ստանալ *անալ*-ով ձևեր և բայանալ, ինչպես՝ *գարթնանամ* (ՄՈ, 461):

#### **դ. Նախադասության փոխակերպմամբ նորակազմություններ**

Նախադասության փոխակերպումը նորակազմության հայերենում կատարվում է ներքին և արտաքին եղանակներով:

Ներքին փոխակերպմամբ միևնույն փաստը ներկայացվում է տարբեր աստիճաններով ոչ միայն իրական ներգործողի, այլև ներգործողի և ներգործվողի արտահայտության բացառմամբ: Գ. Նարեկացին «Մատեան ողբերգութեան» երկի Դ գլխի Գ հատվածում ներկայացնում է ութ «ապաքէն ըղձալին»՝ «Ըստ Գրոյն կանխութեան նախաձայնելոյ»՝ խոսքը միաժամանակ ավարտելով *լուծականութիւն* նորակազմությամբ՝ «Լոյժ, հոսանուտ ... փոփոխական, եղձանելի՛ լուծականն գոլ» իմաստով (ՆՀԲ, 1, 894):

Արտաքին փոխակերպման դեպքում նախադասությունը վերածվում է գոյականական, ածականական նորակազմությունների:

1. Նորակազմ բայանուն գոյականի կամ ածականի՝ բառակապակցության կամ մի այլ նախադասության կազմում ստանձնելով գոյականին կամ ածականին հատուկ գործառություն. նախադասության՝ դիմավոր բայից տարբեր անդամները այս դեպքում հանդես են գալիս որպես լրացումներ:

2. Նախադասությունը վերածվում է բաղադրյալ և հատկապես բարդ նորակազմ գոյականի, ածականի, որոնք բառակապակցության և մի այլ նախադասության մեջ կատարում են համապատասխան պաշտոններ:

Նախադասության փոխակերպման տարբեր դեպքերը պայմանավորված են՝

ա. փոխակերպվող նախադասության անդամների բնույթով ու քանակով,

բ. արտահայտության ոճական տարբերություններով,  
գ. հայերենի բառակազմական առանձնահատկություններով և  
հնարավորություններով:

Ծավալուն նախադասությունների համար սովորական է փոխա-  
կերպումը երկրորդական նախադասությունների, պակաս սովորա-  
կան՝ փոխակերպումը դերբայական դարձվածների, սրանց համար սո-  
վորական չէ փոխակերպումը բայանվանական բառակապակցություն-  
ների, առավել ևս՝ նորակազմությունների:

Կարճ նախադասությունները կարող են փոխակերպվել նորա-  
կազմ բայանվանական (բայագոյականական և բայածականական)  
դարձվածների, որոնք բառակապակցության և մի այլ նախադասույթ-  
յան կազմում կարող են կատարել գոյականին և ածականին հատուկ  
պաշտոններ:

Նախադասության՝ բայանվանական նորակազմ դարձվածների  
փոխակերպվելու դեպքում գործում են հետևյալ կանոնները.

1. Նախադասության դիմավոր բայը վերածվում է բայանվան (բա-  
յածանց գոյականի և բայածականի), ինչպես՝ **ձևակերպել** (ՄՈ, 525) >  
**ձևակերպություն** (ՄՈ, 322) > **ձևակերպական** (ՆՀԲ, 2, 155):

2. Ենթական դառնում է նորակազմ բայագոյականի բաղադրիչ՝  
*Ընդ հին չարութեանցն նորոգ ինքնաստեղծությունս գտի* (ՄՈ, 322):

3. Եթե դիմավոր բայը անցողական բնույթի է և արտահայտում է  
ենթակայի և ուղիղ խնդրի հարաբերություն, ապա հայերենի համար  
հնարավոր է բայագոյականական բնույթի միայն թերի կամ լրացական  
նորակազմ փոխակերպում՝ գոյականական եզրերից միայն մեկի՝ հիմ-  
նականում ենթակայի պահպանմամբ, ինչպես՝ *Ջիա՛րդ յաւելից կրկնել  
զնոյն գովութիւն աղաչաւորս բազմապատկառ* (ՄՈ, 479) նախադա-  
սության մեջ **աղաչաւոր** նորակազմությամբ ամփոփվել է *ես աղաչեմ  
զնոյն* մտքի «ենթակա + ստորոգյալ» հարաբերությունը:

4. Նախադասությունը նորակազմ բայածականական դարձվածի  
նույնպես փոխակերպվում է միայն թերի կերպով. այս դեպքում ենթա-  
կան դառնում է լրացյալ, ածականի փոխված բայը՝ լրացում, ինչպես՝  
*տածել* բայը գրաբարում նշանակել է «Ըստ պիտոյիցն խնամ ածել, բու-  
ծանել, դարմանել» (ՆՀԲ, 2, 838), վերջինս «Մատեան»-ում հիմք է հան-  
դիսացել **տածողական** նորակազմության համար՝ «Որ ինչ անկ է տածո-  
ղին» իմաստով (ՆՀԲ, 2, 838)՝ *Հովիւս տածողական զհաւրանս ուլոցն ա-  
մայարնակաց Ի վրանս հովուացն...* (ՄՈ, 423) արտահայտության մեջ:

Այսպիսով, այն հարաբերությունները, որոնք արտահայտվում են  
դերբայական դարձվածների միջոցով, ավելի համառոտ ձևով կարող  
են արտահայտվել բաղադրյալ բայերի, գոյականների, ածականների և  
մակբայների միջոցով: Այս դեպքում բարդությունը, բացի բաղադրիչնե-  
րի իմաստներից, արտահայտում է նաև լրացական իմաստներ, իսկ ա-



ծանցավոր բառերի ածանցները արտահայտում են դերբայական իմաստներ.

-**ութիւն**//**-ություն** «գոլ, լինել». **տեսականութիւն** – «Տեսական գոլ» (ՆՀԲ, 2, 867), օրինակ՝ *Մի՛ անպտուղ լիցի տեսականութիւն պատկերին* (ՄՈ, 547):

-**աւոր**//**-ավոր**, **-եղ**, **-եան**//**-յան**, **-ոտ**, **-ուն**, **-անի**, **-աւետ**//**-ավետ** «ունեցող, պարունակող». **բազմահրաշաւոր**՝ «Հրաշալի» (ՆՀԲ, 1, 409), օրինակ՝ *Բազմահրաշաւորն մարգարէաճառն պատմագրութիւն* (ՄՈ, 437), *Բազմաբերանեան*՝ «Ունօղ զբերան բազում» (ՆՀԲ, 1, 402), օրինակ՝ *Իբր ճրագ բազմաբերանեան* (ՄՈ, 424):

-**ական** «առնչվող, վերաբերող, պատկանող». **անկրթական**՝ «Որ չէ կիրթ, ոչ կրթեալ» (ՆՀԲ, 1, 177), օրինակ՝ *Յովանակս անհամբոյր, վայրենական և անկրթական* (ՄՈ, 328):

Ի տարբերություն ածանցումների՝ բարդ բառերը ներկայացնում են առավել ամբողջական փոխակերպման արդյունք, որոնք, վերածվելով բարդության, կարող են ձեռք բերել որոշ լրացական իմաստներ, ինչպես **ալէտանջ** (ՄՈ, 461)՝ «Ալեօք տանջող, ալիս յարուցանօղ, ամբոխիչ և ամբոխեալ» (ՆՀԲ, 1, 13), **Կրկնաձիք** (ՄՈ, 255)՝ «Ուր իցէ կրկին ձիք, առատաձեռնութիւն» (ՆՀԲ, 1, 1135):

Այսպիսով՝ բարդ նորակազմությունների բաղադրիչների փոխհարաբերությունը հասկանալու համար հարկավոր է նկատի առնել բարդությունների գործառական արժեքը՝ որպես գոյական թե ածական հանդես գալը: Կարելի է ասել, որ նախադասության անդամների գրեթե բոլոր հարաբերությունները արտահայտվում են բարդությունների միջոցով՝ ըստ բաղադրիչների բնույթի և փոխհարաբերության:

Նորակազմություն բարդությունները կարելի է դիտել որպես միջուկային նախադասություններից սերված երկրորդական նախադասությունների, բառակապակցությունների և դերբայական դարձվածների հեղինակային փոխակերպման արդյունք:

**Բանալի բառեր** – *լեզվաբանություն, փոխակերպում, խոսքիմասային փոխանցում, քերականական կառուցվածք, նորաբանություն, նորակազմություն, բարդություն*

**АРЕН САНТОЯН, ЛИЛИТ ПЕТРОСЯН – Новообразования как результат трансформации и транспозиции частей речи.** – В лингвистике термин *трансформация* известен как частеречная транспозиция одного и того же значения не только различными грамматическими конструкциями, но и различными вербальными средствами.

Новообразования постоянно создаются в языке путём транспозиции особыми эксплицитно-словообразовательными средствами: глагол > существительное, существительное > глагол, глагол > прилагательное, предложение > слово.

Словосложения можно рассматривать как придаточные предложения, словосочетания, причастные обороты, возникшие из ядерных предложений в результате авторской транспозиции.

**Ключевые слова:** трансформация, частеречная транспозиция, грамматическая структура, новообразование, словосложение

**AREN SANTOYAN, LILIT PETROSYAN – *Neologisms as a Result of Part-of-Speech Transformation and Transposition.*** – In Linguistics, the term transformation is regarded as a part-of-speech transposition of the same meaning not only through different grammatical structures but also through different lexical means and ways.

Neologisms are incessantly formed in the language. They are formed according to external special word building transfers – verb>noun, noun>verb, verb>adjective and sentence>word.

Neologism compounds can be regarded as authorial transformation results of secondary clauses, word combinations and adverbial modifiers, descended from main clauses.

**Key words:** *linguistics, transformation, part-of-speech transformation, grammatical structure, neologism, neologism compounds*

---

## ՎԵՐՆԱԳԻՐԸ ԵՎ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԵՔՍՏ ԲԱՂԱԴՐՈՂ ՄԻԱՎՈՐՆԵՐ

### ՄԻՐԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տեքստի լեզվաբանության պատմության ընթացքում տեքստի սահմանման և սահմանների որոշման կողքին կարևորություն է ստացել նաև տեքստը բաղադրող միավորները ուսումնասիրելը: Տեքստակազմիչ տարրերի առանձնացումը կատարվում է գլխավորապես իմաստաբանական և կառուցվածքաբանական հայեցակետերով: Տեքստը՝ որպես մտքի որոշակի ընթացք արտահայտող հյուսվածք, հիշված երկու առումով էլ բարդությունների առաջ է կանգնեցնում լեզվաբանին. մի կողմից՝ պարզ է, որ ցանկացած տեքստ, սկսած բանավոր երկխոսությունից մինչև գրական մեծ և փոքր ստեղծագործություններ, միշտ ինչ-որ միավորներից է ամբողջանում, մյուս կողմից՝ ցանկացած տեքստ ըստ էության մեկ ամբողջական բովանդակության կրող է, թեև բաղկացած է համեմատաբար փոքր իմաստակիր միավորներից, և այդ բովանդակային ամբողջը մասնատելը լավագույն դեպքում պարադոքսային է թվում:

Լեզուն փակ համակարգ է, որը ընդունակ է ծնունդ տալու անընդհատ բազմապատկվող տեքստերի բաց բազմության<sup>1</sup>: Քանի որ միտքը ներկայացնում է իրականության հատվածների միջև հաստատված կամ հաստատվող հարաբերությունները՝ որպես արտահայտման ձև օգտագործելով լեզվում ամրակայված անվանումների կապակցությունը, ուրեմն միտքը կարող է անվերջության աստիճանի հասնել, իսկ լեզվական միավորները ըստ էության սահմանափակ են, կամ գոնե ժամանակային առումով դրանց քանակական փոփոխականությունը զիջում է մտքի փոփոխականությանը: Պարզ է, որ բազմազան ու բազմաբանակ մտքերի արտահայտության անհրաժեշտությունը լեզվական միջոցների տարբերակայնության ծնունդ է տալիս: Պատահական չէ, որ գոյություն ունեն գեղարվեստական ու խոսակցական պատկերավորության տարատեսակ հնարքներ, ոճեր, ուղղություններ: Այս առումով հետաքրքիր է նկատել, որ մտքի ընդարձակությունը ոչ միշտ է պարտադրում արտահայտության լեզվական միջոցների մեծ քանակ: Օրինակ՝ հնչած կամ գրված մենաբառ նախադասությունը կարող է ավելի ընդարձակ վերլուծությունների՝ մտքերի հոսքի հիմք դառնալ, քան բազմաթիվ բազմանդամ նախադասությունների համադրությունը: Այդպես է, քանի որ տեքստ բաղադրող յուրաքանչյուր լեզվական միավոր իր հերթին, այսպես ասած, ճշգրտում է տեքստն ընկալողի մտքերի

---

<sup>1</sup> Տե՛ս **Лотман Ю.** Статьи по семиотике культуры и искусства. СПб., 2002, էջ 59:

ուղղությունը. համեմատենք, օրինակ, հետևյալ նախադասությունները.

Դատարկություն:

Դատարկություն է:

Դատարկություն է շենքում:

Դատարկություն է շենքում կեսօրին:

Սակայն որքան սեղմ է մտքի արտահայտությունը, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ խոսքը՝ կցկտուր, իսկ մտքի կրած բովանդակությունը անմատչելի կմնա:

Մինևույն ժամանակ, որքան ընդարձակ է տեքստը, այնքան շատ են բովանդակային հանգույցները, կամ, այլ կերպ ասած, տվյալ տեքստի որպես բարդ մտքի կրած բովանդակությունը մի տեսակ մասնատված կամ տարաբաշխված է ներկայանում: Այդ հանգույցները ընդարձակ տեքստում տեղակայվում են տեքստը բաղադրող այն հատվածներում, որոնք ընդունված է անվանել «պարբերություն», իսկ այդ բոլոր բովանդակային հանգույցները միասին կոչված են արտահայտելու մեկ բովանդակություն (անվանենք այն գերբովանդակություն) : Գերբովանդակությունը հեղինակի կողմից կարող է ընդգծվել տեքստի ոչ պարտադիր բաղադրիչի՝ վերնագրի միջոցով<sup>2</sup>:

Միտքը՝ լայն առումով, բարդ բովանդակություն է՝ մտածողության միավոր, որի բարդության աստիճանը բնականաբար ենթադրում է արտահայտության ձևի բարդության համապատասխան աստիճան: Օրինակ՝ միտքը՝ որպես փոխանցվող բովանդակություն, ընդարձակ է, ուրեմն այն արտահայտող ձևը համապատասխան ծավալ կունենա: Լեզվական ոլորտում բարդ բովանդակության կամ գերբովանդակության արտահայտման և գոյության միակ ձևը և միջոցը տեքստն է:

Արդեն պարզ է, որ ինչպես ցանկացած բարդ ամբողջ, այնպես էլ բարդ միտքը կազմված է այդ ամբողջի համեմատությամբ փոքր չափ ու հարաբերական ավարտունություն ունեցող միավորներից: Տեքստում այդպիսի միավոր է պարբերությունը: Գիտական տարբեր ուսումնասիրություններում նշվում է, որ պարբերությունը տեքստ բաղադրող միավոր է<sup>3</sup>: Պարբերությունը այնպիսի միավոր է, որը բարդ միտք բաղադրող միավորներից առավելագույնը մեկի արտահայտությունն է: Այսինքն՝ պարբերությունը տեքստի այն բաղադրիչն է, որ կազմված է մեկ կամ մեկից ավելի այնպիսի նախադասություններից, որոնցից մեկը մյուսից տրամաբանական կախվածություն ունի, սակայն բոլորը միասին տրամաբանական առումով հարաբերականորեն անկախ են նույն տեքստի մյուս նախադասություններից:

<sup>2</sup> Որոշ մասնագետներ ուրվագծում են գերբովանդակության զաղափարը՝ այն անվանելով մակրոկատույց, որը կարող է արտահայտվել, օրինակ, վերնագրի, ամփոփումների, թեման արտահայտող նախադասությունների մեջ (տե՛ս **Земская Ю., Качесова И.** и др. Теория текста. М., 2010, էջ 111):

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ, **Болотнова Н.** Филологический анализ текста. М., 2005, էջ 251, **Гальперин И.** Текст как объект лингвистического исследования. М., 2007, էջ 26:

Կարելի է ասել, որ պարբերությունը, ըստ էության, տեքստի՝ բովանդակային առումով տրամաբանական շեշտ ունեցող հատվածն է, և ուրեմն այն, որ սովորաբար պարբերությունը որպես տեքստ կազմող միավոր թվարկվում է վերհաստոյթային միավորներին հավասար և նրանցից գատ, ինչ-որ չափով կասկածելի է: Գուցե արժե պարբերությունը ընդունել որպես տեքստի դարձյալ վերհաստոյթային, բայց պարզապես հնարավոր միավոր՝ այնպիսին, որի գոյությունը հնարավոր է, բայց պարտադիր չէ: Պարբերությունը որպես տեքստի վերհաստոյթային միավոր դիտելու դեպքում հնարավոր կլինի սահմանել, որ, օրինակ, չափածո տեքստերում այդ միավորի գործառույթը իրականանում է տաղաչափական այլնայլ հատկանիշների շնորհիվ: Պարբերությունը գուտ բովանդակայնորեն որսալի միավոր է, որը ձևական առումով կարգավորվում է տվյալ լեզվի քերականության միջոցով և չի կարող առանձնացվել որոշակի յուրահատկություններով. ցանկացած բովանդակություն կարող է դրվել հեղինակային կամայական ձևի մեջ:

Պարբերությունը գուտ բովանդակային պլանում է հնարավոր առանձնացնել որպես տեքստի բաղադրիչ միավոր: Այն, ըստ էության, տեքստի ուրվականատիպ բաղադրիչ է, որի գոյությունն ապացուցող և այն հերքող փաստերը հավասարապես համոզիչ են: Գոյության վերաբերյալ փաստեր ասելիս բնականաբար նկատի ունենք այն, որ ամեն դեպքում ցանկացած ընդարձակ տեքստ ձևային առումով բաղկացած է հատուկ կերպով առանձնացված մեկ կամ մի քանի նախադասությունների խմբերից, իսկ բովանդակային առումով դարձյալ ցանկացած տեքստի գերբովանդակություն բաղկացած է բովանդակային հանգույցներից, կամ, եթե հակառակ ուղղությամբ վերլուծենք, ցանկացած տեքստի գերբովանդակություն ի վերջո արդյունք է մի շարք բովանդակային հանգույցների հանրագումարի: Հետաքրքիր է նկատել, որ ձևային առումով երկու տարբեր ուղղություններով վերլուծել հնարավոր չէ, այսինքն՝ չենք կարող ասել, որ ցանկացած տեքստ՝ որպես մեկ ամբողջ և փոխանցվող գերբովանդակության հարաբերականորեն ավարտուն լեզվական արտահայտություն, ի վերջո, մի շարք պարբերությունների համադրություն է: Եթե ընդունենք, որ «տեքստը հաղորդակցում է հեղինակի և ընթերցողի միջև»<sup>4</sup>, ապա տեքստը փաստորեն հաղորդակցական գործընթացի երկու կողմերը (հեղինակ, ընկալող) իրար է կապում՝ վերածվելով երկու հանդիպակաց ընթացքների հատման կետի, և պարզ է, որ գերբովանդակության՝ բովանդակային հանգույցներից համադրված լինելու մասին հնարավոր է պնդել՝ միայն նկատի ունենալով ընկալողից դեպի տեքստ ընթացքը:

Ասվածը նշանակում է, որ հեղինակը տեքստը կազմելիս միշտ նախնառաջ ունենում է գերբովանդակության մտային պատկերը, որը

---

<sup>4</sup> Барр Р. Сад, Фурье, Лойола. М., 2007, с. 56.

տեքստի վերածելիս բաշխվում է պարբերությունների մեջ, իսկ ընկալողը պարզապես չի կարող ունենալ գերբովանդակությունը՝ որպես տվյալ տեքստի վերաբերյալ ի սկզբանե եղած գիտելիք. ընկալողի համար գերբովանդակությունը բացահայտվում է միայն բովանդակային հանգույցների՝ պարբերությունների միջոցով, ընկալողը գերբովանդակությունը աստիճանաբար է բացահայտում՝ տեքստային «կառույցում բացահայտելով կարևորագույն բաղադրիչները, մասերը, դրվագները»<sup>5</sup>: Ընդ որում, ամենաբարձր հավանականությունը, որ տվյալ տեքստի հեղինակային գերբովանդակությունը կատարելապես և ճշգրտորեն բացահայտված կլինի ընկալողի կողմից, թերևս տեղի ունի միայն գիտական, այն էլ՝ ճշգրիտ և բնագիտական տեքստերի դեպքում, իսկ նույնի ամենացածր հավանականությունը գեղարվեստական տեքստերի դեպքում է:

Պարբերությունը որպես տեքստակազմիչ միավոր առանձնացնել կարելի է միայն նկատի ունենալով դրա՝ բովանդակության տարր կրելը, իսկ եթե այդ հատկանիշը մի կողմ դնենք, ապա նույնիսկ կասկածելի է պարբերության՝ որպես թեկուզ հարաբերականորեն ինքնուրույն միավորի գոյությունը, որովհետև դրանից զատ մնում է ընդամենը տրոհական ինչ-որ առանձնահատկությամբ տեքստի հատված, որի առանձնացումը իր նման այլ հատվածներից պարզապես անհասկանալի կլինի, քանի որ ցանկացած տրոհում՝ որպես քերականական իրողություն, առաջին հերթին որևէ տրամաբանություն է ենթադրում: Ուրեմն պարբերությունը նույնիսկ որպես բովանդակային հանգույց բնորոշող հայեցակետն ընդունելիս արժե վերապահում անել, քանի որ, այնուամենայնիվ, կան տեքստեր, որոնցում բովանդակային հանգույցները կարող են բաշխված լինել անգամ յուրաքանչյուր նախադասության մեջ: Այդպիսին են հատկապես չափածո տեքստերը, որոնք կոչված են համեմատաբար փոքրաթիվ լեզվական միավորների համադրությամբ հաղորդելու մտքի (լեզու, բառ) և զգացում-զգացմունքների (մեղեդայնություն, հնչյուն) միասնական պոթեկումը: Եթե դիտարկենք, օրինակ, ստորև բերվող բանաստեղծական տողերը և եթե համարենք, որ չափածո տեքստը ևս բաղկացած է պարբերություններից (տվյալ օրինակում, ասենք, յուրաքանչյուր քառատողը մեկ պարբերություն համարենք), կնկատենք, որ որպես գերբովանդակություն բաղադրող՝ բովանդակային հանգույցները արտահայտված են ոչ թե նախադասության, ոչ թե մեկ քառատողի, այլ յուրաքանչյուր բառի, առաջին երկու և վերջին երկու տողերը կազմող անդամների շարադասության փոփոխությունների միջոցով:

Ночь, улица, фонарь, аптека,  
 Бессмысленный и тусклый свет.  
 Живи еще хоть четверть века –  
 Все будет так. Исхода нет.

<sup>5</sup> Бабенко Л., Казарин Ю. Лингвистический анализ художественного текста. М., 2004, с. 160.

Умрешь – начнешь опять сначала  
И повторится все, как встарь:  
Ночь, ледяная ряб канала,  
Аптека, улица, фонарь.

А. А. Блок

Իսկ եթե որպես պարբերություն ամեն դեպքում նկատի ունենանք տրամաբանական և տրոհական ինչ-որ առանձնահատկություններով հատվածը, ապա պետք է ասել, որ այդ դեպքում էլ տեքստերի որոշ նմուշների առնչությամբ խնդիր է առաջանում տեքստակազմիչ այս միավորի առումով: Այս մոտեցմամբ, օրինակ, պյուրեռեալիզմի, դադաիզմի կամ աբսուրդի թատրոնի որևէ երկում պարբերությունը որպես տրամաբանորեն կապակցված նախադասությունների միացություն սահմանելը դժվար կլինի: Մյուս կողմից էլ՝ այս ուղղություններին պատկանող տեքստերում նույնպես կան ձևային (տրոհական) առումով տիպական պարբերություններ, որոնք ամբողջացնող նախադասությունները, սակայն, տրամաբանական հաջորդականություն չունեն կամ տրամաբանորեն անկանխատեսելի հաջորդականություն ունեն: Կարելի է եզրակացնել, որ պարբերություն ասվածը սահմանելի է որպես տեքստի հեղինակի կողմից՝ տվյալ տեքստում ոչ թե միավորած, այլ պայմանականորեն ընդգծած նախադասություն կամ նախադասությունների խումբ: Կարելի է ասել նաև, որ պարբերությունները՝ որպես տեքստի բաղադրիչներ, հեղինակի սահմանած բովանդակային կորիզներն են, ինչ-որ առումով գերբովանդակության բանալիներ:

Մի տեքստի պարբերությունը միանգամայն հնարավոր է գործածել նաև այլ տեքստերում՝ որպես մեջբերում, որպես լրացում և այլն: Այսպիսի անցումները ընդունված է անվանել միջտեքստայնություն (интертекстуальность)<sup>6</sup>, և այս երևույթին անդրադարձող զանազան տեսակետներ կան<sup>7</sup>: Պարբերության կրած կամ արտահայտած բովանդակությունը այն տեքստում, որտեղ այդ պարբերությունն առաջին անգամ է ներկայացվում, անվանենք բացարձակ բովանդակություն: Բոլոր մյուս տեքստերում, որտեղ տվյալ պարբերությունը կարող է գործածվել՝ ստանալով որևէ դեր, այդ բովանդակությունն անվանենք հավելյալ բովանդակություն: Տեքստը՝ որպես մեկ բարդ բովանդակություն, փաստորեն կարող է բաղկացած լինել կա՛մ ամբողջովին բացարձակ բովանդակություններից, կա՛մ լինել բացարձակ և հավելյալ բովանդակությունների զուգակցում: Միննույն պարբերությունը (բովանդակային հանգույցը), եթե գործածվում է որպես հավելյալ բովանդակություն, յուրաքանչյուր նոր համատեքստում վերածվում է որակապես նոր բովանդակային հանգույցի՝

<sup>6</sup> Տե՛ս **Кристева Ю.** Избранные труды: Разрушение поэтики. М., 2004, էջ 527:

<sup>7</sup> Միջտեքստայնության մասին որոշ տեսակետներ տե՛ս **Башкатова Ю.** Интертекстуальность словесно-художественного портрета. Кемерово, 2006, էջ 22:

նոր գործառնությունը: Ըստ էության ցանկացած տեքստ կարող է համալրվել նոր պարբերություններով (բովանդակային հանգույցներով), և յուրաքանչյուր անգամ տեքստերի միջև այս կամ այն միավորի անցումը ընթերցողին դարձնում է հեղինակին համագործակից<sup>8</sup>:

Վերևում մենք խոսեցինք հեղինակի կողմից սահմանվող գերբովանդակության մասին, որը հիմք է տալիս ասելու, որ ամեն դեպքում ցանկացած բարդ միտք՝ տեքստ, ունի որոշակի նպատակայնություն, որը կարող է լինել ազատ կամ պարտադիր: Երբ բարդ միտքը բաղադրող բոլոր բովանդակային հանգույցները միավորված են մեկ բառային կապակցության՝ վերնագրի ներքո, միտքը ունի պարտադիր նպատակայնություն, իսկ եթե վերնագիրը բացակայում է, ապա միտքն ունի ազատ նպատակայնություն: Այսինքն՝ եթե տեքստը որևէ կերպ վերնագրված է, ապա տեքստի հասցեատիրոջը մի տեսակ պարտադրվում է տվյալ տեքստում որսալ վերնագրի պարփակած գաղափարը, բովանդակությունը: Վերնագիրը՝ որպես տեքստակազմիչ միավոր, եթե կարելի է ասել, ամենապատասխանատու միավորն է. այն կոչված է ընդգրկելու գերբովանդակությունը: Վերնագրի ընտրությունը, այսպես ասած, գերբովանդակության համառոտագրությունն է: Սա տեքստի այն միավորն է, որի շնորհիվ հեղինակը ներկայացնում է իր մտքի սահմանները տվյալ տեքստում, իսկ տվյալ տեքստն ընկալողի համար վերնագրի շնորհիվ կամ պատճառով ուրվագծվում են իր մտածելու սահմանները տվյալ տեքստի շրջանակում: Այսինքն՝ տեքստի վերնագիրը մտքի ընթացքի ճշգրտիչ, ուղղորդիչ միավոր է, որը, միանշանակ ձև, բայց բովանդակային աղոտ պարունակություն ունեցող միավոր է: Վերնագիրը տեքստի թերևս ամենահակասական միավորն է, քանի որ մի կողմից՝ միտքը պահում է որոշակի սահմաններում (օրինակ՝ երբ կարդում ենք «451 աստիճան ըստ Ֆարենհայտի», իհարկե մեր միտքը չափազանց բարձր ջերմաստիճանի և դրա հետ կապված ինչ-որ իրողությունների սահմաններում է սավառնում, բայց միայն այդ վերնագրի ներքո եղած տեքստի շնորհիվ ենք պարզում կամ գոնե կարծում՝ պարզել ենք հեղինակի փոխանցած գերբովանդակությունը, այն, թե հատկապես ինչ նկատի ունի Ռեյ Բրեդբերին իր ֆանտաստիկ վեպում), բայց մյուս կողմից՝ կարող է այնքան լայն սահմաններ տալ ընկալողի մտքին<sup>9</sup>, որ այն ընդհանրապես հեռանա հեղինակի՝ տեքստում ներդրած գերբովանդակությունից (օրինակ՝ երբ կարդում ենք «Մեծ հուլիսներ», դժվար թե առաջին իսկ պահին պատկերացնենք հենց այն գերբովանդակությունը, որ Չարլզ Դիկկենսը մեզ փոխանցել է այս վեպում) : Պատահական չէ, որ բազմաթիվ ընթերցողներ գրական երկը վերցնում

<sup>8</sup> Տե՛ս **Пьер-Гро Н.** Введение в теорию интертекстуальности. М., 2008, էջ 66:

<sup>9</sup> Սովաճը հարում է վերնագրի վերաբերյալ այն տեսակետին, որի համաձայն՝ տեքստի վերնագիրը բացահայտում է հիմնական բովանդակությունը, հասկացության էությունը, իսկ երբեմն ընդամենը մատնացույց է անում մտքի առարկան (տե՛ս **Гальперин И.**, նշվ. աշխ., էջ 134):



են կարդալու կամ չեն վերցնում կարդալու այն պատճառով, որ վերնագիրը գրավիչ կամ պակաս գրավիչ է նրանց համար. իրենց փնտրած գերբովանդակությունը չի խոստանում:

Սակայն եթե տեքստը չունի վերնագիր, ապա այն ընկալողը առավել ազատ է և կարող է ինքն իր համար սահմանել տվյալ տեքստի գերբովանդակությունը: Առանց վերնագրի տեքստը ավելի մեծ հնարավորություն ունի մինչև վերջ կարդացված լինելու:

Եթե ընդարձակ բովանդակությունը ընդարձակ ձև է պահանջում որպես արտահայտություն, ապա տեքստի այս երկու բաղադրիչները՝ վերնագիրը և պարբերությունը, այդ հավասարակշռության խախտումներ են: Վերնագիրը և պարբերությունը ծավալային առումով և բովանդակային ընդգրկումով հակադարձ համեմատական են իրար. ընդամենը մի քանի բառերի կապակցության միջոցով հնարավոր է ընդգրկել բազմաթիվ պարբերությունների կրած բովանդակությունները: Այսինքն՝ բառից կամ բառերից բաղկացած վերնագիրը բովանդակությամբ առավել ընդգրկուն է, քան մեկ պարբերությունը: Եվ եթե անդրադառնանք «միջտեքստայնություն» երևույթին, ապա արժե ընդգծել, որ առկայության դեպքում վերնագիրը՝ որպես տեքստակազմիչ միավոր, ի տարբերություն պարբերության և մյուս միավորների՝ բառ, բառակապակցություն և այլն, գերազանցապես անփոխարինելի է և միջտեքստային անցումներից ավելի զերծ. եթե վերնագիրը գործածվում է որևէ այլ տեքստում, ապա այն ոչ թե տվյալ տեքստի բաղադրիչ մաս է դառնում, այլ յուրատեսակ գերտեքստի մի մաս՝ հղում այն գերբովանդակությանը, որ պարփակում է ինքը. դա նոր գերբովանդակության մի մասնիկ է, որով ընկալողի միտքը պարզապես մի պահ դուրս է գալիս տվյալ տեքստից, ամենայն հավանականությամբ ենթագիտակցորեն կամ գուցե «դիմելով լեզվական հիշողությանը»<sup>10</sup>, վերհիշում է կամ չի վերհիշում այդ վերնագրի կրած գերբովանդակությունը և դարձյալ վերադառնում ընկալվող տեքստին:

Տեքստի ցանկացած պարբերություն միանգամայն հնարավոր է փոփոխության ենթարկել՝ առանց խախտելու դրա ի սկզբանե ունեցած դերն ու իմաստը՝ բացառությամբ, թերևս, եզակիության աստիճանի հեղինակային բովանդակություններ կրող պարբերությունների, ինչպես, օրինակ, արդեն հիշված գրական ուղղություններին (սյուրռեալիզմ, դադաիզմ, աբսուրդի թատրոն...) պատկանող երկերի մեջ, որոնք, ինչպես ոչ մի այլ տեքստ, հեղինակի խիստ անհատական հայացքն ու վերլուծությունն են ներկայացնում: Օրինակ՝ Միլլերի «Խեցգետնի արևադարձը» վեպում որևէ պարբերության ձևային փոփոխությունը անկասկած կլիներ ընդհանուր պատկերը, կխախտի «տեքստի իմաստային ներքին ամբողջականությունը»<sup>11</sup>: Մինչդեռ, օրինակ, որևէ գիտական

<sup>10</sup> Фатеева Н. Интертекст в мире текстов. М., 2007, с. 50.

<sup>11</sup> Арнольд И. В. Стилистика. Современный английский язык. М., 2002, с. 61.

տեքստում ցանկացած պարբերության ձև հնարավոր է համապատասխան կերպով փոփոխել, և այդ փոփոխությունից բովանդակության ընդհանուր պատկերը տանուլ չի տա:

Եվ եթե տվյալ տեքստի որևէ պարբերություն հնարավոր է փոփոխել կամ նույնիսկ փոխել՝ առանց խախտելու բարդ մտքի նպատակայնությունը, ապա վերնագրի փոփոխվելը կարող է բեկել տվյալ բարդ մտքի նպատակայնությունը: Այլ խոսքով՝ վերնագիրը տեքստի պարբերությունների բովանդակությունների՝ հեղինակի սահմանած նպատակայնության ցուցիչն է, իսկ վերնագրի բացակայությունը տեքստի հասցեատիրոջ համար տվյալ տեքստի նպատակայնության բացահայտման հնարավորությունը կամ նպատակայնության անհատականացումն է: Վերնագիր ունեցող տեքստում, որքան էլ ջանա հասցեատերը, չի կարող վերնագրի կրած բովանդակությանը խիստ հակասող բովանդակություն սահմանել: Եվ հակառակը, եթե տեքստը չունի վերնագիր, ապա հասցեատերը միանգամայն կարող է «յուրովի հասկանալ» տեքստի գլխավոր իմաստը կամ ըմբռնել բարդ միտքը, տեղի է ունենում, այսպես ասած, տեքստում «ներդրված տեղեկատվության մի հայեցակետի կարևորում և մյուսների ժամանակավոր կամ լրիվ մոռացում»<sup>12</sup>:

Վերնագրի և պարբերության եզակիության աստիճանները նույնպես բևեռային են. վերնագիրը եզակի է բովանդակային պլանում, իսկ պարբերությունը՝ ձևային: Այսինքն՝ միևնույն արտահայտությամբ հնարավոր է նշանակել տարբեր գերբովանդակություններ, իսկ միևնույն բովանդակային հանգույցը կարելի է արտահայտել տարբեր լեզվական կառույցներով՝ որպես պարբերություն: Այս բևեռայնությունը, բնականաբար, փոփոխական է՝ կախված տեքստերի ոճերից: Օրինակ՝ գիտական տեքստերը կարող են ունենալ հարևան, և՛ վերնագրեր և՛ գերբովանդակություններ, իսկ գեղարվեստական ոչ մի երկ չի կարող կազմված լինել նույն վերնագրից և նույն գերբովանդակությունից (առնվազն ծիծաղելի կլինի, եթե որևէ մեկը վեպ գրի «Մեր ժամանակի հերոսը» վերնագրով՝ լերմոնտովյան բովանդակությամբ), իհարկե եթե տվյալ երկը որևէ թափառող սյուժեի վերամշակում չէ, որի դեպքում, սակայն, արդեն տարբեր կլինեն բովանդակային հանգույցները՝ ձևով ու բովանդակությամբ (հիշենք, օրինակ, «Քաջ Նազար» վերնագրով հայտնի մի քանի գեղարվեստական մշակումները) :

Հետաքրքիր է նաև, որ ըստ բովանդակության բացահայտության՝ տեքստը կարող է լինել և՛ ներդաշնակ (նկատի ունենք ուղիղ իմաստով վերնագրի ու պարբերությունների և կամ փոխաբերական իմաստով վերնագրի ու պարբերությունների համադրությունը), և խառը տիպի (նկատի ունենք փոխաբերական իմաստով վերնագրի և ուղիղ իմաստով շարադրված պարբերությունների համադրությունը կամ ուղիղ ի-

<sup>12</sup> Лотман Ю., նշվ. աշխ., էջ 88:

մաստով վերնագրի ու փոխաբերական իմաստով շարադրված պարբերությունների համադրությունը):

Բովանդակային բացահայտության առումով տեքստը կատարելապես կախված է ոճից, օրինակ՝ չի կարող դիմումի տեքստը լինել փոխաբերական, սակայն երգիծանքը թույլ է տալիս ն՝ վերնագրի, ն՝ պարբերությունների բովանդակային ցանկացած չափի բացահայտություն:

**Բանալի բառեր** – *տեքստ, պարբերություն, վերնագիր, գերբովանդակություն, բովանդակային հանգույց, բացարձակ բովանդակություն, հավելյալ բովանդակություն, միջտեքստայնություն*

**СИРАНУШ ОГАНЕСЯН – Заглавие и абзац как единицы, составляющие текст.** – Текст – это способ выражения и отчуждения мысли автора. С этой точки зрения мысль есть некое сверхсодержание, которое вкладывается в языковые формы. Как сложная структура текст предполагает наличие в своем составе единиц относительно малых размеров. В качестве такой единицы выступает абзац.

Абзац является носителем содержательного узла, с помощью которого для воспринимающего завершается сверхсодержание текста.

Другой единицей текста является заглавие, которое в некоторых текстах может отсутствовать. Если текст имеет заглавие, значит, это особо-целевой текст, т.е. автор определяет сверхсодержание для воспринимающего. А если заглавие отсутствует, то это свободно-целевой текст, и воспринимающий в какой-то мере свободен при выборе сверхсодержания.

Заглавие и абзац по объёму и содержательному охвату можно противопоставить друг другу: заглавие, несмотря на компактную форму, имеет бо́льшую содержимость; абзац, несмотря на более объёмную форму, обладает сравнительно меньшей содержимостью.

**Ключевые слова:** *текст, заглавие, сверхсодержание, содержательный узел, абсолютное содержание, дополнительное содержание, интертекстуальность*

**SIRANUSH HOVHANNISYAN – The Title and the Paragraph as Text Constituting Units.** – The text is a way of expressing and alienating the author's thoughts. From this perspective thought is some kind of supercontent which is embedded in linguistic forms. As a complex structure, the text implies in its structure units of relatively small size. Paragraph appears to be such a unit. The paragraph is a carrier of a content node with the help of which text supercontent is completed for perceivers.

Another text unit is the title which can be absent in some texts. If the text has a title it means the text is specifically-targeted one, that is, in this case, the author defines supercontent for perceivers. But if the text does not have a title, so it is free targeted text and to some extent, perceivers are free in the selection of supercontent. On content coverage title and paragraph are opposed to each other. The title, despite its relatively compact shape, has a broader content whereas the paragraph despite its broader shape has a relatively smaller content.

**Key words:** *text, title, supercontent, content node, absolute content, additional content, intertextuality*

---

## ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՑԵԼԸ

### ՇՈՒՇԱՆԻԿ ՊԱՐՈՆՅԱՆ, ՆԱՐԵ ԹԱՄՈՅԱՆ

Ժամանակակից լեզվաբանական հետազոտություններին բնորոշ են մարդակենտրոն հարցադրումներ, որոնց միջոցով վերաիմաստավորվում է մարդկային հասարակության մեջ լեզվի դերակատարումը, և բացահայտվում են լեզվի ընթացական դրսևորմանը, այսինքն՝ խոսքային գործունեությանը հատուկ նորանոր հաղորդակցական գործառույթներ: Գործաբանական լեզվաբանության հիմնադրույթներից մեկն այն է, որ որպես հասարակական էակ՝ մարդը գործարկում է խոսքը՝ որպես հասարակական գործունեության և համագործակցության միջոց: Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել ներլեզվական օրենքների և արտալեզվական օրինաչափությունների համագործակցության խնդիրը՝ ներողամտություն հայցող խոսքային ակտերի և խոսքային քաղաքավարության մարտավարական հնարների կիրառման օրինակով:

#### **Քաղաքավարության կարգի մի շարք տեսական մեկնություններ**

Ընդհանուր առմամբ քաղաքավարությունը մարդկանց հասարակական վարքի դրսևորումներից մեկն է, որն ավանդաբար դիտվել է որպես բարեկիրթ պահվածք: Գործաբանական լեզվաբանության և հանրալեզվաբանության մեջ աստիճանաբար սկսեցին շրջանառվել նաև խոսքային ընթացակարգի էթիկետային նորմերին առնչվող խնդիրներ և, ըստ այդմ, քաղաքավարության կարգը դարձավ գործաբանական քննության առարկա՝ որպես բարեկիրթ հաղորդակցվելու, զրույց վարելու արվեստի տիրապետում:

Հատկանշական է, որ քաղաքավարությանը նվիրված լեզվագործաբանական և հանրալեզվաբանական ուսումնասիրություններում սույն երևույթը մեկնաբանելու տարբեր մոտեցումներ են կիրառվում: Այսպես, մի դեպքում առաջնային է դիտվում քաղաքավարության «այլասիրական» հայեցակերպը, և այն բնորոշվում է որպես ուրիշի անձի հանդեպ մտահոգություն արտահայտելու միջոց, որն օգնում է հասարակական շփումների ընթացքում անհրաժեշտ ներդաշնակությունը վերականգնելուն և պահպանելուն:

Ըստ Ռ. Լեյքոֆի՝ քաղաքավարության ուսումնասիրության առաջամարտիկներից մեկի, քաղաքավարությունը հասարակական վար-

քաղաքի նորմերի ամբողջություն է, որը մշակվել է միջանձնյա հաղորդակցման ժամանակ ի հայտ եկող հակասությունները նվազեցնելու նպատակով<sup>1</sup>: Ջ. Լիչը նույնպես քաղաքավարությունը ներկայացնում է որպես վարքագծի դրսևորման տարբեր ձևերի ամբողջություն, որի նպատակն է ստեղծել և պահպանել ներդաշնակ հաղորդակցական փոխհարաբերություններ<sup>2</sup>: Մի շարք լեզվաբաններ էլ պնդում են, որ քաղաքավարի խոսելաձևի դրսևորումը կոնֆլիկտից և աններդաշնակությունից խուսափելու նպատակով գրուցակիցների միջև լուռ համաձայնության արդյունք է<sup>3</sup>:

Քաղաքավար խոսքի վերոնշյալ ուսումնասիրությունները հիմնվում են քաղաքավարության ավանդական կաղապարների վրա, որոնց ուշադրության կենտրոնում միայն ունկնդրի կարիքներն են: Մեկ այլ մոտեցման համաձայն՝ քաղաքավարությունը դիտարկվում է դրան հակառակ՝ խոսողի տեսանկյունից, որպես էգոյի ցանկություններն ընդգծող և բարձրաձայնող միջոց: Եսակենտրոն ուղղվածություն որդեգրող հետազոտություններում ընդունված է այն տեսակետը, որ քաղաքավարության միջոցով վեր են հանվում և առաջ մղվում ոչ միայն գրուցակցի (այսինքն՝ խոսքի հասցեատիրոջ), այլև խոսողի ցանկությունները և դիրքորոշումները: Հատկապես շեշտվում է այն միտքը, որ խոսողի կողմից ցուցաբերվող քաղաքավարությունը սուկ գրուցակցի հանրային վարկը պահպանելու մտահոգության արդյունք դիտելը այնքան էլ արդարացված չէ, քանի որ քաղաքավարության դրսևորման իրական և հիմնական շարժառիթը հենց խոսողի սեփական, ինչպես նաև շարունակական բարեկեցության ապահովումն ու երաշխավորումն է<sup>4</sup>:

Հարկ է հիշատակել խոսքային քաղաքավարությունը ուսումնասիրելու մեկ այլ մոտեցում ևս, ըստ որի՝ քաղաքավարությունը դիտվում է

---

<sup>1</sup> Տե՛ս **R. T. Lakoff**, The Logic of Politeness or Minding Your P's and Q's // Papers from the 9th Regional Meeting, (eds. C. Colum et al.). Chicago: Chicago Linguistic Society, 1973, էջ 292-305:

<sup>2</sup> Տե՛ս **G. Leech**, Principles of Pragmatics. New York: Longman, 1983, էջ 104:

<sup>3</sup> Տե՛ս հետևյալ հոդվածները. **B. Fraser, W. Nolan**, The Association of Deference with Linguistic Form // “International Journal of Sociology of Language”, The Hague: Mouton, 1981 (27), էջ 93-111, **Sh. Paronyan, L. Bekaryan**, Questions and Politeness // «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, № 1, Եր., 2001, էջ 67-78, **L. Bekaryan, Sh. Paronyan**, The Actualization of Prescriptions in Directive Communicative Situations // «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, № 5, Եր., 2001, էջ 106-116:

<sup>4</sup> Տե՛ս հետևյալ հոդվածները. **A. J. Meier**, Brown and Levinson's Legacy of Politeness // Vienna English Working Papers, 1/1, 1992, էջ 15-35, **A. J. Meier**, Passages of politeness // “Journal of Pragmatics”, 1995, (24), էջ 381-392, **M. Jary**, Relevance Theory and the Communication of Politeness // “Journal of Pragmatics: An Interdisciplinary Journal of Language Studies”, Vol. 30, Jacob L. et al. (eds.). Amsterdam: Elsevier, 1998, էջ 1-19, **K. Ehlich**, On the historicity of politeness // “Politeness in Language: Studies in its History, Theory and Practice”, R. J. Watts, S. Ide, K. Ehlich (eds.). Berlin: Walter de Gruyter, 2005, էջ 71-108, **R. J. Watts**, Linguistic politeness and politic verbal behavior: Reconsidering claims for Universality // “Politeness in Language: Studies in its History, Theory and Practice”, R. J. Watts, S. Ide, K. Ehlich (eds.). Berlin: Walter de Gruyter, 2005, էջ 43-70:

որպես հասարակության կողմից ընդունելի արարքների իրագործում՝ ի շահ անհատի: Այս մոտեցումը կարելի է համարել որպես նախորդ երկու մոտեցումների միաձուլվածք: Այսպես՝ Գ. Հելդը հաստատում է այն ավանդական դրույթը, որ քաղաքավարությունը հնարավոր կոնֆլիկտը մեղմող միջոց է, բայց նա նաև ավելացնում է, որ դա անձնական շահը առավելագույնի հասցնելու նպատակով է արվում<sup>5</sup>:

Խոսքային քաղաքավարության մասին տեսությունների շարքում ուրույն տեղ է զբաղեցնում Պ. Բրաունի և Ս. Լևինսոնի մոտեցումը, որը, թեպետ որոշ հետազոտողների կարծիքով թերի է, շարունակում է մնալ ժամանակակից բազմաթիվ ուսումնասիրությունների մեթոդաբանական հիմք: Պ. Բրաունը և Ս. Լևինսոնը քաղաքավարությունը համարում են ոչ թե էթիկետային նորմերի ամբողջություն, այլ խոսքային ռազմավարությունների համակարգ, որն օգտագործվում է խոսքը կերպարների հասարակական վարկանիշը պահպանելու նպատակով<sup>6</sup>: Առանձնացվում են հանրային վարկի երկու տեսակներ՝ դրական և բացասական, որոնցից բխում են քաղաքավարության դրական և բացասական ռազմավարական տարբերակները: Դրական հանրային վարկը անձի՝ այլոց կողմից ընդունված, հարգված լինելու ցանկությունն է: Դրական խոսքային քաղաքավարության ռազմավարություն կիրառելու դեպքում խոսողը փորձում է չոտնձգել խոսքը կերպարի վարկի դեմ՝ շեշտը դնելով իր և խոսքի հասցեատիրոջ մտերիմ, ընկերական հարաբերությունների, իրենց նպատակների ընդհանրության վրա: Բացասական հանրային վարկը խոսողի անկախ լինելու, գործողությունների ազատություն ունենալու ցանկությունն է: Բացասական խոսքային քաղաքավարության ռազմավարություն կիրառելու դեպքում նույնպես խոսողը փորձում է չոտնահարել խոսքը կերպարի վարկը՝ այս դեպքում ընդգծելով իր հարգալից վերաբերմունքը նրա անձի նկատմամբ և օգտակար լինելու պատրաստակամությունը<sup>7</sup>:

Ինչպես տեսնում ենք, խոսքային քաղաքավարությունը խոսքի գիտակցական կառավարման ոլորտին է վերաբերում: Հետևաբար այն խոսքի քաղաքավարական կարգավորելու միտում ունի և էապես պայմանավորված է խոսքի կողմնորոշման և ապակողմնորոշման ընթացակարգով: Սրանից հետևում է, որ խոսքային գործունեության ուսումնասիրության այս ոլորտը սերտորեն առնչվում է գործաբանությանը և մասնավորապես խոսքային ակտերի գործառնությանը:

---

<sup>5</sup> Տե՛ս **G. Held**, Submission strategies as an expression of the ideology of politeness: Reflections on the verbalization of social power relations // “Pragmatics”, 1999, 9 (1), էջ 21:

<sup>6</sup> Տե՛ս **P. Brown, C. Levinson**, Politeness. Some Universals in Language Usage. Cambridge: Cambridge University Press, 1987, էջ 60:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը:

## Ներողություն հայցելը քաղաքավարական տեսությունների դիտակետից

Ինչպես նշել ենք, մեր ուշադրության կենտրոնում ներողություն հայցող խոսքային ակտն է, որի միջոցով հնարավոր է վեր հանել, թե ինչպես են խաչաձևվում քաղաքավարությունը և ներողամտություն հայցելը հաղորդակցման ընթացքում:

Հարկ է նշել, որ ներողություն հայցելը ուղղակիորեն պայմանավորված է մարդու հասարակական էակ լինելու հանգամանքով և հաճախակի կիրառվող խոսքային գործողություն է առօրյա մարդկային փոխհարաբերությունների ժամանակ: Ջ. Հոլմսի համոզմամբ՝ ներողություն հայցող խոսքային ակտը ծառայում է հասարակական այն հարաբերությունների վերականգնմանը, որոնք խաթարվել էին գրուցակիցներից մեկի կողմից, և հետևաբար այս քայլը խախտված հաղորդակցական ներդաշնակությունը վերականգնող նպատակ է հետապնդում<sup>8</sup>: Տ. Տարասենկոյի կարծիքով՝ ներողությունները կիրառվում են անձին, անհատին հասարակության կիրթ անդամ ներկայացնելու նպատակով<sup>9</sup>: Այս միտքն ընդգծում է նաև Ս. Ջիմինը. «Ներողություն խնդրելով՝ մենք անում ենք այն, ինչ հասարակության կողմից ընդունելի և ակնկալվող է»<sup>10</sup>: Այդ իսկ պատճառով ներողություն հայցելը հաճախ դասվում է հասարակական գործառնությունների շարքը՝ որպես արարողակարգ, իսկ ներողություն հայցող խոսքային ակտը բնութագրվում է որպես «ամոքիչ» խոսքային ակտ<sup>11</sup>:

1) *David waited. "Susan Fletcher, I love you. Marry me."*

*Susan lifted her head. Her eyes were filled with tears. "I'm sorry, David," she whispered. "I... I*

*can't." David stared in shock.*<sup>12</sup>

2) *I swiveled around and screamed when I saw Peter Van Houten sitting in the backseat.*

*"I apologize for alarming you," Peter Van Houten said over the rapping. He was still wearing the funeral suit, almost a week later.*<sup>13</sup>

Ներկայացված օրինակներից առաջինում Սյուզանը ներողություն է խնդրում գրուցակցից բացասական պատասխան տալու՝ ամուսնութ-

<sup>8</sup> Տե՛ս **J. Holmes**, Apologies in New Zealand English // "Language in Society", 1990, Vol. 19, № 2, էջ 159-161:

<sup>9</sup> Տե՛ս **Тарасенко Т. В.** Этикетные жанры русской речи: Благодарность, извинение, поздравление, соболезнование. Автореферат, 1999:

<sup>10</sup> **S. Zimin**, Sex and Politeness: Factors in First- and Second-Language Use // "International Journal of Sociology of Language", The Hague: Mouton, 1981, (27), p. 41.

<sup>11</sup> Տե՛ս **E. Goffman**, Relations in public: Microstudies of the public order. New York: Basic Books, 1971:

<sup>12</sup> **D. Brown**, Digital Fortress. Thomas Dunne Books, 2004, p. 391.

<sup>13</sup> **J. Green**, The Fault in Our Stars. New York: Dutton Books, 2012, p. 281.

յան առաջարկը մերժելու և նրա ակնկալիքները չարդարացնելու համար, երկրորդում Փիթրը ներողություն է հայցում հերոսուհուն հանկարծակիի բերելու և վախեցնելու համար: Նմանատիպ հաղորդակցական իրադրությունները հաճախադեպ են և գրեթե բոլոր նման իրավիճակներում ներողություն հայցող կառույցները գործածվում են որպես հասարակության կողմից ակնկալելի, «ամոքիչ» և «դարմանող» բանաձևեր:

Միջմշակութային հաղորդակցության դիրքերից խոսքային ակտերը ուսումնասիրելիս ներողություն հայցելը մեկնաբանվում է որպես հակազդեցություն, որը խոսքնկերների կողմից կիրառվում է այն դեպքում, երբ «հասարակական նորմերի ոտնահարման, անձնական սպասումների ձախողման հետևանքով վիրավորանքներ են հնչում, անհարկի ոտնձգություններ են արվում»<sup>14</sup>:

Ջ. Լիչը գտնում է, որ ներողություն հայցելը մի կողմից ենթադրում է խոսողի և հասցեատիրոջ հարաբերություններում որոշակի անհամամասնության առկայությունն ընդունելու և ճանաչելու քայլ, իսկ մյուս կողմից՝ որպես հաղորդակցական ներդաշնակությունը վերականգնելու փորձ: Ուստի մենք ներողություն հայցող խոսքային գործողություններ ենք ակնկալում այն իրադրություններում, երբ հասարակական նորմեր են խախտվում: Ըստ որում, անկախ այն հանգամանքից, թե արդյոք դրանից բխող վնասն իրական է, թե ոչ, ներողություն հայցելը՝ որպես խոսքային ակտ, ենթադրում է պատասխան գործողություն կամ խոսքային արձագանք, որի օգնությամբ կարելի կլինի հարթել իրադրությունը<sup>15</sup>:

Ներողություն արտահայտող խոսքային ակտին անդրադարձող վերոնշյալ ուսումնասիրություններում բազմիցս նշվում է, որ քաղաքավարության և ներողություն հայցող խոսքային ակտի միջև փոխադարձ կապ գոյություն ունի: Բայց ինչպիսի՞ն է այս կապը. քաղաքավարությունն է ներողություն հայցելու բաղադրիչ տարր, ներողություն հայցելն է քաղաքավարական տարր, թե՞ այս երկուսն էլ առանձին «մեծություններ» են, որոնք ունեն հատման ընդհանուր կետ:

Մեր կարծիքով, անկարելի է ենթադրել, որ քաղաքավարությունը ներողություն հայցելու գործընթացի բաղադրիչ տարր է, քանի որ որպես հասարակական երևույթ և գործաբանական կարգ՝ քաղաքավարությունը ավելի ընդգրկուն է, քան ներողություն հայցելը: Քաղաքավարությունը, անխոս, բնորոշ է նաև մի շարք այլ խոսքային ակտերի, օրինակ՝ ողջույններին, հաճոյախոսություններին, շնորհավորանքներին, երախտագիտական խոսքերին, խնդրանքին և այլն: Այս առումով

<sup>14</sup> B. Fraser, On apologizing // “Conversational Routine: Explorations in Standardized Communication Situations and Prepatterned Speech”, (ed. F. Coulmas). The Hague: Mouton, 1981, p. 259.

<sup>15</sup> Տե՛ս G. Leech, Principles of Pragmatics. New York: Longman, 1983:



կարելի է ընդունելի համարել գործաբանության մեջ շրջանառվող այն տեսակետը<sup>16</sup>, որ բոլոր խոսքային ակտերը, որոնք պատկանում են էքսպրեսիվների դասին, քաղաքավարության «գեն» են պարունակում:

Առավել դժվար է ենթադրել, թե ներողությունը քաղաքավարության տարրերից է, քանի որ ներողություն հայցելու գործողություն պարունակող ոչ բոլոր հաղորդակցական իրադրություններն է հնարավոր դիտարկել քաղաքավարության տեսանկյունից: Որպես օրինակ կարող ենք բերել հետևյալ երկխոսական միավորը, որտեղ առկա է կեղծ կամ հեզմանք արտահայտող ներողության խոսքային ակտ և չի կարող քաղաքավար խոսքի օրինակ համարվել.

*George shows up about twenty minutes later – sheepish, tense, a terse excuse about work, Insley snapping at him, “You’re forty minutes late,” him nipping back, “**Yeah, sorry about making us money**” The two barely talking to each other as they make conversation with everyone else.*<sup>17</sup>

Ինչպիսի կշտամբում է ամուսնուն՝ Ջորջին, պայմանավորված ժամից քառասուն րոպե ուշանալու համար: Վերջինս իրեն ուղղված կշտամբանքին արձագանքում է ներողություն հայցող արարողակարգային կառույցով, որտեղ հեզմանքով ակնարկում է, որ իր ուշանալու պատճառը իրենց ընտանիքի նյութական բարեկեցությունը ապահովելն է: Իրականում Ջորջի արձագանքում իրեն ուղղված կշտամբանքը հակադարձվում է, քանզի, նրա կարծիքով, Ինչպիսի չի գնահատում նրա ջանքերը:

Այս համատեքստում կարելի է ավելացնել նաև Ռ. Ռատմայրի տեսակետը, որի համաձայն՝ ներողություն հայցող խոսքային ակտը միշտ չէ, որ ուղղակի պայմանավորված է քաղաքավարի պահվածքով: Նրա պնդմամբ, ներողություն հայցող որոշ խոսքային ակտեր կիրառելու համար հիմք է ծառայում շատ լուրջ արարք կամ քայլ, որը չի կարող գնահատվել քաղաքավարության տեսանկյունից: Որպես օրինակ ներկայացվում է դատական պրակտիկայում կիրառվող ներողություն խնդրող խոսքային ակտը, որը ոչ թե բարեկրթության դրսևորում, այլ պատիժը մեղմացնելու նպատակ է հետապնդում<sup>18</sup>:


Մեկնաբանելով քաղաքավարության և ներողություն արտահայտող խոսքային ակտերի փոխհարաբերությունը՝ կարելի է եզրակացնել, որ

<sup>16</sup> Այս տեսակետը հիմնականում շրջանառվում է հետևյալ աշխատություններում. **G. Leech**, *Principles of Pragmatics*. New York: Longman, 1983, **P. Brown**, **C. Levinson**, *Politeness. Some Universals in Language Usage*. Cambridge: Cambridge University Press, 1987:

<sup>17</sup> **G. Flinn**, *Gone Girl*. London: Weidenfeld&Nicolson, 2012, p. 92.

<sup>18</sup> **St u Пармайр Р.** Прагматика извинения: Сравнительное исследование на материале русского языка и русской культуры. М., 2003:

դրանք խոսքային գործընթացին բնորոշ համեմատաբար ինքնուրույն մեծություններ են. առաջինը խոսքային քաղաքականության դրսևորում է, իսկ երկրորդը խոսքային գործողության տեսակ է: Միևնույն ժամանակ միանգամայն ակնհայտ է, որ վերոնշյալ մեծություններն ունեն հատման ընդհանուր կետ, որը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով.



Այսպիսով, ներողություն հայցող խոսքային ակտերը միայն մասնակիորեն կարելի է դիտարկել քաղաքավարության կարգի շրջանակներում, քանի որ միշտ չէ, որ այն արտահայտում է հարգալից և քաղաքավար վերաբերմունք խոսակցի հանդեպ:

Ընդունելով այն փաստը, որ քաղաքավարությունը և ներողություն հայցելը լեզվական համակարգի տարբեր հարթություններում գործող «մեծություններ» են և առանձին գործառության տիրույթներ ունեն, այժմ անդրադառնանք այն ուսումնասիրություններին, որոնցում ներողություն արտահայտող խոսքային ակտերը քննվում են քաղաքավարության դիրքերից, և փորձենք բացահայտել դրանց փոխհարաբերությունը:

Պ. Բրաունը և Ս. Լևինսոնը կարևորում են այն հանգամանքը, որ քաղաքավարության տեսանկյունից ներողություն հայցող խոսքային ակտը պետք է գնահատվի անձի հանրային վարկի դիրքերից՝ հստակ տարբերակելով երկու բնեռ՝ խոսողին (այս դեպքում՝ վիրավորողին) և խոսակցին (վիրավորվողին): Ներողությունը պատկանում է բացասական խոսքային քաղաքավարության ռազմավարությունների դասին, քանի որ այն ուղղված է վերականգնելու հասցեատիրոջ՝ վիրավորվողի բացասական հանրային վարկը: Հաջող իրականացված ներողությունը վերականգնում է հասցեատիրոջ բացասական, իսկ խոսողի դրական հանրային վարկերը և այս դեպքում, իհարկե, անխուսափելիորեն վնաս է կրում խոսողի բացասական հանրային վարկը: Այս պարագայում հաղորդակցության մասնակից խոսընկերների հանրային վարկերի վերականգնումը հնարավոր է դառնում, երբ հասցեատերը՝ վիրավորվողը, ներում է խոսողին<sup>19</sup>:

<sup>19</sup> Տե՛ս P. Brown, C. Levinson, Politeness. Some Universals in Language Usage. Cambridge:

Այսպիսով, ներողությունը դիտարկվում է որպես զրուցակիցների հաղորդակցական շահերի, ինչպես նաև խոսակցի դրական և բացասական հանրային վարկի համամասնությունը վերականգնող միջոց: Սակայն, ինչպես արդեն նշվել է, ներողություն արտահայտող խոսքային ակտի և քաղաքավարության փոխհարաբերության մասին հնչող կարծիքները միանշանակ չեն, այլ կան թեր և դեմ տեսակետներ: Այսպես, օրինակ՝ Ա. Մեյերը նշում է, որ թեև ներողությանը նվիրված շատ հետազոտություններում խոսակցի շահերն են ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ կան հանգամանքներ, երբ ներողություն խնդրելիս խոսողի հեղինակությունը բարձրանում է շրջապատում: Ներողություն խնդրելով խոսողն ուզում է ցույց տալ, որ այդպիսի ոտնձգությունը կամ սխալ արարքը բնորոշ չէ իր տեսակին և բնավորությանը և հարիր չէ իր անձին<sup>20</sup>: Մ. Դոյչմանը, ներողության հայցում պարունակող բազմաթիվ իրադրություններ ուսումնասիրելով, նույնպես հանգում է այն կարծիքին, որ ներողություն հայցող ակտերի միջոցով դրական խոսքային քաղաքավարության ռազմավարություն է իրականացվում<sup>21</sup>: Նկարագրելով ներողության գործառույթները՝ Տ. Լարինան նշում է, որ «այն վստահեցնում է հասցեատիրոջը, որ նրան նկատել են, հարգում են, և որ ոչ կոնֆլիկտային հարաբերությունների պահպանումը ցանկալի է»<sup>22</sup>: Որպես նշված մտքերի ու տեսակետների արտացոլում և դրսևորում կարելի է ներկայացնել հետևյալ օրինակը.

*“Kath, I’ve been looking all over for you. **I meant to say sorry. I mean, I’m really, really sorry.** I honestly didn’t mean to hit you the other day. I wouldn’t dream of hitting a girl, and even if I did, I’d never want to hit you. **I’m really, really sorry.**”*

*“It’s okay. An accident, that’s all.” I gave him a nod and made to move away. But Tommy said brightly:*

*“The shirt’s all right now. It all washed out.”*

*“That’s good.”*

*“It didn’t hurt, did it? When I hit you?”*

*“Sure. Fractured skull. Concussion, the lot. Even Crow Face might notice it. That’s if I ever get up there.”*

*“But seriously, Kath. No hard feelings, right? **I’m awfully sorry. I am, honestly.**”*

*At last I gave him a smile and said with no irony: “Look, Tommy, it was an*

---

Cambridge University Press, 1987:

<sup>20</sup> Տե՛ս **A. J. Meier**, Apologies: What do we know? // “International Journal of Applied Linguistics” 1998, էջ 215-231:

<sup>21</sup> Տե՛ս **M. Deutschmann**, Apologising in British English. Umeå: Umeå Universitet, 2003:

<sup>22</sup> **Ларина Т. В.** Категория вежливости в английской и русской коммуникативных культурах. М., 2003, с. 212.

*accident and it's now one hundred percent forgotten. I don't hold it against you one tiny bit.*"<sup>23</sup>

Սկարագրված խոսքային իրադրությունում Թոմը մի քանի անգամ ներողություն է խնդրում Քեթից նրան հարվածելու համար: Նա վստահեցնում է, որ այդ ամենը պատահաբար է ստացվել, որ նրա մտքով անգամ չէր կարող անցնել որևէ աղջկա հարվածել (այն է՝ բնորոշ չէ իրեն), և հատկապես Քեթի նկատմամբ նա չէր կարող նման վերաբերմունք ցուցաբերել: Նրա հարցը, թե արդյոք շատ չէ ցավեցրել Քեթին հարվածը (*It didn't hurt, did it? When I hit you?*), և հարց-ճշգրտումը՝ արդյոք Քեթը բարկության, գայրության ու հիասթափության զգացում չունի իր հանդեպ (*But seriously, Kath. No hard feelings, right?*), վկայում են այն մասին, որ Քեթը Թոմի համար կարևոր անձ է, և նա ցանկանում է պահպանել իրենց ոչ կոնֆլիկտային, ներդաշնակ հարաբերությունները: Ինչպես նկատում ենք, ներողություն հայցելու բանաձևերն ուղեկցվում են ուժգնացնող մակբայներով (...*I meant to say sorry. I mean, I'm really, really sorry..., ... I'm really, really sorry..., ...I'm awfully sorry. I am, honestly...*), որոնք հանդես են գալիս որպես խոսողի հոգեվիճակը, զգացմունքները բացահայտող ազդակներ՝ ուժգնացնելով հիմնական բառաձևերի ներագրումը:

Այժմ անդրադառնանք Ռ. Ռատմայրի կարծիքին, ըստ որի՝ երբ խոսողը՝ վիրավորողը, ներողություն է հայցում թեկուզ աննշան լրջության արարքի համար, դա նպաստում է ոչ միայն խոսակցի՝ վիրավորվողի, այլ նաև իր՝ խոսողի դրական հանրային վարկի ձևավորմանը: Կարևոր է շեշտել այն հանգամանքը, որ այս տեսակետին հարող լեզվաբանների կարծիքով՝ ներողությունը, այնուամենայնիվ, հենց խոսողի դրական հանրային վարկը չարատավորող, նրա հեղինակությունը պահպանող խոսքային ակտ է, իսկ խոսակցի հանրային վարկի պահպանումը հենց այս հիմնական ակտից բխող կողմնակի ազդեցության արդյունք է<sup>24</sup>:

Ինչպես տեսնում ենք, կարծիքները հակասական են, և այս դեպքում ավելի խելամիտ կլինի ներողություն արտահայտող խոսքային ակտը լիարժեքորեն մեկնաբանելու համար այն դիտարկել և՛ խոսողի, և՛ խոսակցի դիրքերից՝ հաշվի առնելով նրանց դրական և բացասական հանրային վարկերը: Նման դիրքորոշում է որդեգրել նաև Ե. Օզիերմանը: Ըստ նրա՝ ներողություն խնդրելով՝ խոսողը վնաս է հասցնում իր բացասական հանրային վարկին, բայց փորձում է վերականգնել դրական հանրային վարկը: Այսինքն՝ կարելի է նշել, որ ներողությունը անհրաժեշտ է դիտարկել խոսողի դրական հանրային վարկի տեսանկյունից, քանզի եթե խոսողին չի հուզում, թե իր մասին ինչ են մտածում,

<sup>23</sup> K. Ishiguro, *Never Let Me Go*. New York: Alfred A. Knopf, 2005, p. 14.

<sup>24</sup> Տե՛ս A. J. Meier, *Two cultures mirrored in repair work // "Multilingua"*, 1996 15 (2), էջ 149–169, A. J. Meier, *Apologies: What do we know?*, էջ 215–231, P. Παμμαΐρ, նշվ. աշխ.:

նա իրադրությունը շտկելու և իրեն նվաստացնելու ոչ մի պատճառ չունի<sup>25</sup>: Հանրային վարկերի փոխհարաբերությունը շատ հստակ և հիմնավոր պատկերված է Ե. Օգիերմանի հետևյալ գծանկարում<sup>26</sup>.



Է. Օլշտեյնը, Շ. Բլում-Կուլկան, Ա. Մեյերը և Ե. Օգիերմանը մեծ կարևորություն են տալիս նաև այն փաստին, որ ներողություն հայցելը տարբեր կերպ է դիտարկվում տարբեր մշակույթներում, և դրա ընկալումը էապես պայմանավորված է տվյալ մշակույթի արժեհամակար-

<sup>25</sup> Տե՛ս **E. Ogiermann**, On Apologising in Negative and Positive Politeness Cultures. Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company, 2009:  
<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 54:

գով<sup>27</sup>: Ըստ այդմ, նշվում են դրական և բացասական քաղաքավարական մշակույթներ<sup>28</sup>:

Դրական քաղաքավարական մշակույթներում խոսքը ներդրում է համար կարևոր է դրական հանրային վարկը, այսինքն՝ ներողություն խնդրելով՝ խոսողն ազդա-բարում է ունկնդրին, որ նրա ցանկությունները կարևոր են իր համար, և որ ինքը ցանկանում է պահպանել իրենց հարաբերությունները: Մինչդեռ բացասական քաղաքավարական մշակույթներում խոսակցի դրական հանրային վարկին վնաս հասցնելիս խոսողը ավելի դժկամորեն է ներողություն խնդրում՝ ձգտելով չվնասել իր իսկ բացասական հանրային վարկը: Սակայն եթե խոսողը գիտակցում է, որ իր արարքով վնաս է պատճառել խոսակցի բացասական հանրային վարկին, ապա նա պատրաստակամորեն ներողություն է խնդրում, քանի որ դա կարևորվում է տվյալ մշակույթին բնորոշ մարդկային հարաբերություններում:

### **Անկեղծության և քաղաքավարության հարաբերակցությունը ներողություն հայցող խոսքային ակտում**

Հետաքրքիր դիտարկումներ կարելի է անել նաև ներողություն արտահայտող խոսքային ակտի իրականացման ժամանակ անկեղծության և քաղաքավարության «չափաբաժինների» տատանումների մասին: Ներկայումս գործաբանական աշխատություններում լայնորեն շրջանառվում են Ջ. Սըրլի մշակած խոսքային ակտերի հաջող իրագործումն ապահովող նախապայմանները, որոնցից մեկը անկեղծության նախապայմանն է<sup>29</sup>: Ասույթը կարելի է անկեղծ համարել, եթե այն համապատասխանում է այն արտաբերողի իրական զգացմունքներին, մտածմունքներին և մտադրություններին: Ընդհանուր առմամբ, անկեղծությունը վերաբերում է խոսողների հոգեկան ոլորտին և դուրս է լեզվաբանական ուսումնասիրությունների տիրույթից, սակայն անկեղծության լեզվական դրսևորումները անտեսելը ճիշտ չի լինի:

Անկեղծությունը, ինչպես քաղաքավարությունը, ներողություն արտահայտող ոչ բոլոր ակտերին է բնորոշ: Ներողությունը կարող է լինել անկեղծ կամ ձևական: Սակայն, ի տարբերություն քաղաքավարության, ներողություն արտահայտող խոսքային ակտի գնահատումը

---

<sup>27</sup> Տե՛ս **S. Blum-Kulka, E. Olshtain**, Requests and Apologies: A Cross-Cultural Study of Speech Act Realization Patterns (CCSARP) // “Applied Linguistics”, 1984, Vol 5, № 3, էջ 196-213, **A. J. Meier** Apologies: What do we know?, էջ 215-231, **E. Ogiermann**, նշվ. աշխ.:

<sup>28</sup> Գ. Հոֆստեդի տերմինաբանությամբ՝ դրական քաղաքավարական մշակույթը հայտնի է որպես խմբային (collectivistic) մշակույթ, իսկ բացասական քաղաքավարական մշակույթը՝ անհատապաշտական (individualistic) (տե՛ս **G. Hofstede** Cultures and Organisations: Software of the Mind. London, 1991, <news.telelangue.com/en/2011/09/cultural-theory>):

<sup>29</sup> Տե՛ս **J. R. Searle**, Speech Acts. An Essay in the Philosophy of Language. Cambridge: Cambridge University Press, 1969, **J. R. Searle, D. Vanderveken**, Speech Acts and Illocutionary Logic // “LOGIC, THOUGHT AND ACTION: Logic, Epistemology, and the Unity of Science (ed. D. Vanderveken). The Netherlands: Springer, 2005, էջ 124-125:

հատկապես էական է լուրջ արարքների և քայլերի դեպքում: Այսպես օրինակ՝ Էթիկետային կամ արարողակարգային հաղորդակցական իրադրություններում (ասենք՝ ներողություն խնդրելը ինչ-որ մեկի խոսքն ընդհատելու, ներս մտնելու, անձանթ անցորդից ժամ կամ ճանապարհ հարցնելու համար) ներողություն արտահայտող խոսքային ակտը առավելապես արարողակարգային և քաղաքավարական բնույթ ունի, իսկ անկեղծությունը, հավանաբար, պարտադիր պայման չէ: Մտորն ներկայացված օրինակները լուսաբանում են ասվածը: Առաջին օրինակում խոսողը ներողություն է հայցում անձանթից ուղղություն հարցնելու, երկրորդում՝ զրույցն ընդհատելու համար: Երկու իրադրություններում էլ չկա ներողության հայցում թելադրող իրադրության ոչ մի բաղադրատարր (վնաս, վիրավորանք, վիրավորող, վիրավորվող, բողոք, ներողամտություն հայցելու պահանջ, խոստովանություն, զղջում), և ներողամտություն հայցող կառույցները հանդես են գալիս որպես արարողակարգային բանաձևեր, որոնցում քաղաքավարությունն առաջնային պլանում է, իսկ անկեղծությունը հետ է մղվում դեպի խոսքի «ետնաբեմ»:

1) *“Pardon me, sir, I seem to be a little lost. I wonder if you could give me some directions.”*<sup>30</sup>

2) *“There came a firm knocking, and Verney’s face appeared, urgent, in the gap of the door.”*

*“Forgive the interruption, sir. It is Mr. Critchlow.”*<sup>31</sup>

Ինչպես արդեն նշվել է, շատ լուրջ վնաս պատճառելու դեպքում ներողություն խնդրելը պայմանավորված չէ միայն քաղաքավարությամբ և պահանջում է լիակատար անկեղծություն ու զղջում, այլապես խոսքը կարող է անտեղի և վիրավորական դիտվել: Որպես օրինակ կարող ենք ներկայացնել հետևյալ խոսքային իրադրությունը.

*Stroud continued:*

*“How totally wrong was I. I speak only for me and no one else.”*

*I apologize to Glenn Ford for all the misery I have caused him and his family.*

*I apologize to the family of Mr. Rozeman for giving them the false hope of some closure.*

*I apologize to the members of the jury for not having all of the story that should have been disclosed to them.*

*I apologize to the court in not having been more diligent in my duty to ensure that proper disclosures of any exculpatory evidence had been provided to the defense”.*<sup>32</sup>


<sup>30</sup> S. King, *Doctor Sleep*. New York: Scribner, 2013, p. 306.

<sup>31</sup> D. Setterfield, *Bellman & Black*. Atria/ Emily Bestler Books, 2013, p. 143.

<sup>32</sup> See <https://www.washingtonpost.com/news/post-nation/wp/2015/03/21/it-was-fundamentally-unfair-a-prosecutor-apologizes-for-his-role-in-putting-an-innocent-man-on-death-row/>

Փաստաբանը ներողություն է հայցում մեկից, որն իր սխալի և թերացման պատճառով սպանության մեղադրանքով մահվան է դատապարտվել և կյանքի 30 տարիները բանտում է անցկացրել: Նա ներողամտություն է հայցում նաև զոհի ընտանիքից, դատական ատյանի անդամներից և դատարանից: Նման իրավիճակում ներողության գոնե մասնակի իրացման համար անկեղծ զղջալը և անկեղծությունը պարտադիր են: Ներողամտություն հայցող նշված խոսքը կառուցվածքային յուրահատկություն ունի: Այն կարելի է բաժանել երկու հատվածների՝ **ներակա** ներողություն (*How totally wrong was I. I speak only for me and no one else...*) և **արտակա** ներողություն (*...I apologize to Glenn Ford for all the misery I have caused him and his family. I apologize to the family of Mr. Rozeman for giving them the false hope of some closure. I apologize to the members of the jury for not having all of the story that should have been disclosed to them. I apologize to the court in not having been more diligent in my duty to ensure that proper disclosures of any exculpatory evidence had been provided to the defense.*): Արտակա մասում առկա է շարահյուսական զուգահեռության երևույթը, և միմյանց հաջորդող նախադասությունները սկսվում են ներողություն հայցող միևնույն կաղապարով՝ «**I apologize to...**»: Մեր կարծիքով, այս ոճական հնարը խոսողի կողմից միտումնավոր ընտրված խոսքային ռազմավարություն է, որով նա ցանկանում է խոսքում շեշտել «բանալի բառը»՝ կարևորագույն գաղափարը՝ գրավելով ունկնդրի ուշադրությունը և առավել ուժգնացնելով խոսքի ներազդման ուժը: «**I apologize to...**» կաղապարի կրկնությունը մատնանշում է ներողություն հայցողի կողմից մեղքի գիտակցումը, նրա զղջումը, սովյալ իրավիճակում տուժածներից յուրաքանչյուրին առանձին-առանձին ուղղված ներողամտություն հայցելու կարևորությունը:

Ներողամտություն հայցող խոսքում անկեղծության և քաղաքավարության հարաբերակցությունը կարելի է պատկերել հետևյալ կերպ.



Այսպիսով, գործարանության մեջ շրջանառվող քաղաքավարության կարգի և ներողության՝ որպես լեզվական իրողությունների բազ-



մաթիվ մեկնությունները, դրանց փոխհարաբերությունները լուսաբանող հակասական տեսությունները ևս մեկ անգամ ապացուցում են, որ այս երկու երևույթները բնորոշվում են կառուցվածքային և գործառութային բազմաշերտությամբ, որով էլ պայմանավորված է դրանց հետագա ուսումնասիրությունների անհրաժեշտությունը:

**Բանալի բառեր** – *քաղաքավարություն, միջմշակութային գործարանություն, հանրային վարկ, խոսքային ռազմավարություն, խոսքային ակտ, ներողություն հայցել, հաղորդակցական ներդաշնակություն, անկեղծության նախապայման*

**ШУШАНИК ПАРОНЯН, НАРЕ ТАМОЯН – Категория вежливости и речевой акт извинения.** – В статье выявляется, как соотносятся между собой речевой акт извинения и вежливость речи. Вежливость и извинение характеризуются структурно-семантической и функциональной многоплановостью и направлены на создание, поддержание и восстановление гармонии человеческих отношений. Хотя вежливость и извинение имеют «точку пересечения», они являются самостоятельными, относительно независимыми единицами речи. По ходу общения речевой акт извинения не всегда можно рассматривать с точки зрения вежливости, а вежливость сама по себе как проявление речевой политики присуща далеко не только речевым актам извинений. В статье содержатся наблюдения над соотношением вежливости и искренности в ситуациях, где имеет место речевой акт извинения.

**Ключевые слова:** *вежливость, межкультурная прагматика, общественное лицо, речевая стратегия, речевой акт, коммуникативная гармония, условие искренности*

**SHUSHANIK PARONYAN, NARE TAMOYAN – The Category of Politeness and Apology.** – In the present article an attempt is made to highlight the peculiarities of the correlation between the category of politeness and apology in the process of human interaction. It is stated that politeness and apology are marked by structural, semantic and functional manifoldness and, furthermore, they are aimed at the creation, maintenance or restoration of harmony in human relations. The main aim of the article is to lead the reader to the idea that although politeness and apology have certain crossing points, they are relatively autonomous entities in the process of communication. This can be explained by the fact that not all acts of apology should be viewed from the standpoint of politeness, and politeness, in its turn, as a manifestation of discourse policy, is peculiar not only to the speech acts of apology but also to a range of other speech acts. Interesting observations are also made about the correlation between sincerity and politeness in communicative situations containing acts of apology.

**Key words:** *politeness, cross-cultural pragmatics, face, communicative strategy, speech act, apology, communicative harmony, sincerity condition*

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
**СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ**  
**INFORMATION ABOUT THE AUTHORS**

1. **Մարգիս Ավետյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ  
**Саргис Аветян** – кандидат филологических наук, доцент кафедры общего языкознания ЕГУ  
**Sargis Avetyan** – PhD, Associate Professor of the Chair of General Linguistics, YSU
2. **Գաղթուհի Հանանյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ  
**Гахтуй Гананян** – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка ЕГУ  
**Gaghtuhi Hananyan** – PhD, Associate Professor of the Chair of History of Armenian Language, YSU
3. **Նեկտար Միմոնյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող  
**Нектар Симонян** – кандидат филологических наук, доцент, старший научный сотрудник Института языка НАН РА  
**Nektar Simonyan** – PhD, Associate Professor, Senior Researcher of the Institute of Language, NAS RA
4. **Անահիտ Յուզբաշյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ  
**Анаит Юзбашян** – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ  
**Anahit Yuzbashyan** – PhD, Associate Professor of the Chair of Armenian Language, YSU
5. **Նաիրա Պարոնյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի ասիստենտ  
**Наира Паронян** – кандидат филологических наук, ассистент кафедры истории армянского языка ЕГУ  
**Naira Paronyan** – PhD, Assistant Professor of the Chair of the History of Armenian Language, YSU
6. **Արեն Սանթոյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, Վանաձորի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի դոցենտ  
**Арен Сантоян** – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка Ванadzорского государственного университета  
**Aren Santoyan** – PhD, Associate Professor of the Chair of Armenian Language, Vanadzor State University
7. **Լիլիթ Պետրոսյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, Վանաձորի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի դասախոս  
**Лилит Петросян** – кандидат филологических наук, преподаватель кафедры армянского языка Ванadzорского государственного университета  
**Lilit Petrosyan** – PhD, Lecturer of the Chair of Armenian Language, Vanadzor State University

8. **Սիրանուշ Հովհաննիսյան** – ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ  
**Сирануш Оганесян** – соискательница кафедры общего языкознания ЕГУ  
**Siranush Hovhannisyan** – Dissertee of the Chair of General Linguistics, YSU  
Էլ. փոստ՝ [siranushhovhannisyan@mail.ru](mailto:siranushhovhannisyan@mail.ru)
9. **Շուշանիկ Պարոնյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ  
**Шушаник Паронян** – доктор филологических наук, профессор, заведующая кафедрой английского языка и межкультурной коммуникации ЕГУ  
**Sushanik Paronyan** – Sc. D. in Philology, Professor, Head of the Chair of English for Cross-Cultural Communication, YSU
10. **Նարե Թամոյան** – ԵՊՀ միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի դասախոս  
**Наре Тамоян** – преподаватель кафедры английского языка и межкультурной коммуникации ЕГУ  
**Nare Tamoyan** – Lecturer of the Chair of English for Cross-Cultural Communications, YSU

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ \* СОДЕРЖАНИЕ \* CONTENTS

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ  
ЯЗЫКОЗНАНИЕ  
LINGUISTICS

*Մարգիտ Ավետյան* – Գևորգ Ջահուկյանի ներդրումը հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության մեջ ..... 3  
*Sargis Avetyan* – Вклад Геворга Джаукяна в сравнительно-историческое изучение армянского языка

*Sargis Avetyan* – The Contribution of Gevorg Jahukyan to Comparative-Historical Study of the Armenian Language

*Գաղթուհի Հանանյան* – Հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը ..... 14  
*Гахтуй Гананян* – Классификация армянских диалектов по многим признакам  
*Gaghtuhi Hananyan* – The Multi-feature Classification of Armenian Dialects

*Նեկտար Մրմնյան* – Ստուգաբանական դիտարկումներ ..... 26  
*Нектар Симонян* – Этимологические заметки  
*Nektar Simonyan* – Etymological Observations

*Անահիտ Յուզբաշյան* – Գ. Ջահուկյանը բայի քերականական կարգերի ըմբռնման մասին ..... 33  
*Анаит Юзбашян* – Г. Джаукян о концепции глагольных грамматических категорий  
*Anahit Yuzbashyan* – G. Jahukyan on the Concept of Grammatical Categories of the Verb

*Նաիրա Պարոնյան* – Հին հայերենի հոլովման համակարգը ըստ Գ. Ջահուկյանի ..... 42  
*Наира Паронян* – Система склонения в древнеармянском языке по Г. Джаукяну  
*Naira Paronyan* – The System of Conjugation of Old Armenian according to G. Jahukyan

*Արեն Սանթոյան, Լիլիթ Պետրոսյան* – Նորակազմությունները՝ իբրև խոսքի մասերի փոխակերպման և փոխանցման արդյունք ..... 50  
*Арен Сантоян, Лилит Петросян* – Новообразования как результат трансформации и транспозиции частей речи  
*Aren Santoyan, Lilit Petrosyan* – Neologisms as a Result of Part-of-Speech Transformation and Transposition

<i>Միրանուշ Հովհաննիսյան</i> – Վերնագիրը և պարբերությունը որպես տեքստ բաղադրող միավորներ.....	59
<i>Сирануш Оганесян</i> – Заглавие и абзац как единицы, составляющие текст	
<i>Siranush Hovhannisyann</i> – The Title and the Paragraph as Text Constituting Units	
<i>Շուշանիկ Պարոնյան, Նարե Թամոյան</i> – Քաղաքավարության կարգը և ներողություն հայցելը.....	68
<i>Шушаник Паронян, Наре Тамоян</i> – Категория вежливости и речевой акт извинения	
<i>Shushanik Paronyan, Nare Tamoyan</i> – The Category of Politeness and Apology	
Տեղեկություններ հեղինակների մասին .....	82
Сведения об авторах	
Information about the Authors	

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:  
Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:  
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося  
в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".  
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor  
of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107  
Адрес редакции: Ереван, ул. Алек Манукяна 1, 107  
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am  
Վայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝  
Контрольный корректор  
Proofreader

Գ. Գրիգորյան  
Г. Григорян  
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝  
Компьютерная верстка  
Computer designer

Մ. Աբգարյան  
М. Абгарян  
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 20. 03. 2016:  
Տպարանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:  
Տպագրական 5 մամուլ: